



ՎԼԱԴԻՄԻՐ ՂԱԶԱԽԵՑՅԱՆ

# ՀԱՅ ՊԱՐՏԻԶԱՆՆԵՐԸ





ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎԼԱԴԻՄԻՐ ՂԱԶԱԽԵՑՅԱՆ

ՀԱՅ ՊԱՐՏԻԶԱՆՆԵՐԸ

A 90829

ԵՐԵՎԱՆ 2004



*Տպագրվում է ՀՀ ՉԱԱ պատմության ինստիտուտի  
գիտական խորհրդի որոշմամբ*

ՀՏԴ 941(479.25)  
ԳՄԴ 63.3(2Հ)722.1  
Ղ 154

Պատասխանատու խմբագիր՝ պատմ. գիտ. դոկտոր  
Կլիմենտ Հարությունյան

Ղազախեցյան Վ. Ն.

Ղ 154 Հայ պարտիզանները:— (Պատ. խմբ.՝ Կ. Ա. Հարությունյան):— Եր.:  
«Զանգակ-97», 2004.— 160 էջ:

Աշխատությունը հրապարակված գրականության, նյութերի ու հեղինակի նախորդ ուսումնասիրությունների հիման վրա ներկայացնում է հայ ժողովրդի զավակների մասնակցությունը այն պայքարին, որ ծավալվել էր թշնամու թիկունքում Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941–1945 թթ.) ԽՍՀՄ և Եվրոպական երկրների օկուպացված տարածքներում: Այդ պայքարում հայտնվել էին հազարավոր պարտիզաններ ու ընդհատակայիններ: Նրանց զգալի մասը կենտրոնացած էր հայկական ազգային կազմավորումներում:

Ղ 0503020913 2004  
0003(01)–2004

ԳՄԴ 63.3(2Հ)722.1

ISBN 99930–2–956–4

. Ղազախեցյան Վ. Ն., 2004 թ.  
. «Զանգակ-97», 2004 թ.

Գիրքը նվիրվում է Հայրենական մեծ պատերազմում  
խորհրդային ժողովուրդների տարած պատմական  
հաղթանակի 60-ամյակին

## ԱՌԱՋԱԲԱՆ

Հայրենական մեծ պատերազմում (1941–1945 թթ.) հայ ժողովրդի մասնակցության ուսումնասիրությունը մշտապես գտնվել է պատմագետների և այլոց ուշադրության կենտրոնում: Հայրենական պատերազմի, այնուհետև Արցախյան հերոսամարտի գործերին ծանոթությունը հայ երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակության կարևորագույն միջոց է:

Մեծ հայրենականին հայ ժողովրդի զավակներն ունեցան ամենակտիվ մասնակցությունը: Նրանց ընդհանուր թիվն անցնում է 500 հազարից: Շուրջ 200 հազար շարքայիններ ու սպաներ իրենց կյանքը չխնայեցին ընդհանուր թշնամու՝ ֆաշիստական Գերմանիայի ջախջախման և խորհրդային ընդհանուր հայրենիքի պաշտպանության համար: 102 հայերի շնորհվեց բարձրագույն պարգև՝ խորհրդային Միության հերոսի կոչում, այդ թվում մարշալ Հովհաննես Բաղրամյանը և օդաչու՝ Նելսոն Ստեփանյանը դարձան կրկնակի հերոսներ: Եվս 27 քաջեր դարձան «Փառքի» շքանշանի լրիվ ասպետներ, որը հավասար է հերոսի կոչմանը: Խորհրդային բանակի բարձր հրամանատարության կազմում աճեցին տասնյակ գեներալներ, իսկ հինգ հայորդիներ հասան մարշալի աստիճանի՝ խորհրդային Միության մարշալ Հովհաննես Բաղրամյան, խորհրդային Միության նավատորմի ծովակալ Հովհաննես Իսակով, զբաղադատակային զորքերի մարշալ Համազասպ Բաբաջանյան, ավիացիայի մարշալ Սերգեյ Խուդյակով (Արմենակ Խանվերյանց), ինժեներական զորքերի մարշալ Սերգեյ Ազանով:

Տասնյակ հազարներով է հաշվվում ԽՍՀՄ դաշնակից երկրների (ԱՄՆ, Անգլիա, Ֆրանսիա) բանակներում ծառայած սփյուռքահայ զավակների թիվը:

Թշնամու դեմ մարտնչել են հազարավոր պարտիզաններ ու ընդհատակայիներ: Նրանց կատարած գործերի վերաբերյալ ևս ստեղծվել է մեծաքանակ գրականություն: Հիմախնդրի գիտական հետազոտության մեջ մեծ վաստակ ունի Երվանդ Խալեյանը: Պետք է նշել նաև Միքայել Հակոբյանի, Տիգրան Դրամիչյանի, Մարատ Սահակյանի, Կլիմենտ Հարությունյանի և ուրիշների աշխատանքը պատմագրության մեջ ունեցած ներդրման մասին: Սույն աշխատությունը, ի տարբերություն նախորդների, սեղմ և ընդհանրացնող շարադրանքն է ամբողջ պարտիզանական շարժման պատմության: Գիրքը պատրաստվել է գոյություն ունեցող գրականության, հեղինակի ուսումնասիրությունների<sup>1</sup> ու արխիվային նյութերի հիման վրա և նախատեսված է ընթերցող լայն շրջանների համար:

Դժբախտաբար աշխարհում չեն վերացել պատերազմները, հետևաբար նաև պարտիզանական շարժումները: Ուստի հայ պարտիզանների պատմության ուսումնասիրությունն ունի ոչ միայն ճանաչողական–դաստիարակչական, այլև գործնական նշանակություն, նաև ժողովուրդների ազգային–ազատագրական պայքարի տեսանկյունից:

ՊԱՅՔԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԹՇՆԱՍՈՒ ԹԻԿՈՒՆ-  
ՔՈՒՄ

Հայրենական մեծ պատերազմի ակտիվ մասնակիցը դարձավ նաև գերմանական զորքերի կողմից գրավված խորհրդային տարածքների բնակչությունը, որը ներգրավվեց պարտիզանական շարժման և ընդհատակյա հակաֆաշիստական պայքարի մեջ: Նրանց հետ էին նաև շատ կարմիրբանակայիններ ու հրամանատարներ, ովքեր Կարմիր բանակի նահանջի ժամանակ ընկել էին շրջապատման մեջ, ինչպես նաև ֆաշիստական մահվան ճամբարներից փախած ռազմագերիներ:

Թշնամու զավթած ամբողջ տարածքում կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ կազմակերպվեց համաժողովրդական պայքար: Մերձճակատային շրջանների կուսակցական ու խորհրդային կազմակերպություններին ուղղված 1941 թ. հունիսի 29-ի ղեկավար հրահանգում ՀամԿ(բ)Կ Կենտկոմը և խորհրդային կառավարությունը պահանջում էին ֆաշիստների գրաված շրջաններում կազմակերպել պարտիզանական ջոկատներ և խափանարար (դիվերսիոն) խմբեր «թշնամու բանակի զորամասերի դեմ պայքարելու, ամենուրեք և ամեն տեղ պարտիզանական պատերազմ բորբոքելու համար»: Հարկավոր էր այդ շրջաններում թշնամու համար ստեղծել անտանելի պայմաններ, հետապնդել և ոչնչացնել նրան ամեն քայլափոխի<sup>2</sup>:

Պարտիզանական շարժման և կուսակցական ընդհատակյա հակաֆաշիստական պայքարի կազմակերպման մասին ՀամԿ(բ)Կ Կենտկոմը 1941 թ. հուլիսի 18-ին ընդունեց հատուկ որոշում: Պայքարի կազմակերպման և նրան ամենալայն թափ ու

մարտական ակտիվություն հաղորդելու գործը դրվեց հանրապետական, մարզային ու շրջանային կուսակցական ու խորհրդային կազմակերպությունների վրա<sup>3</sup>:

Արդեն 1941 թ. վերջին գերմանաֆաշիստական զորքերի կողմից զավթած տարածքում գործում էին ընդհատակյա 18 մարզկոմ, ավելի քան 260 օկրուգային, քաղաքային, շրջանային և այլ կուսակցական կոմիտեներ, ինչպես նաև կուսակցական կազմակերպությունների լայն ցանց<sup>4</sup>: Ընդհատակյա կոմերիտական քաղաքային ու շրջանային կոմիտեների թիվը հասնում էր 300-ի<sup>5</sup>:

Օկուպացված հանրապետությունների կուսակցական Կենտրոնական կոմիտեներին կից ստեղծվեցին պարտիզանական շարժումը կազմակերպող և ղեկավարող օպերատիվ խմբեր, որոնք շուտով դարձան պարտիզանական շարժման շտաբներ: Շտաբներ կազմակերպվեցին նաև Ռուսաստանի որոշ մարզային կոմիտեներին կից: 1942 թ. ստեղծվեց նաև Պարտիզանական շարժման Կենտրոնական շտաբ, որը գործում էր Պաշտպանության պետական կոմիտեի գլխավորությամբ:

Պարտիզանական շարժման շտաբների գործունեությունը կոորդինացվում էր ռազմաճակատների ռազմական խորհուրդների հետ, որը ապահովում էր պարտիզանական պայքարի շաղկապումը Կարմիր բանակի զործողությունների հետ:

Արդեն Հայրենական մեծ պատերազմի առաջին փուլում, երբ թշնամին զավթել էր խորհրդային հողի զգալի մասը, պարտիզանական շարժումն ավելի ու ավելի էր ծավալվում, համաժողովրդական բնույթ ընդունում:

1941 թ. վերջին կուսակցական կազմակերպությունների ղեկավարությամբ ստեղծվել և գործում էին 3,5 հազար պարտիզանական ջոկատ ու խումբ<sup>6</sup>:

Միայն Բելոռուսիայում 1942 թ. առաջին կեսին կար 227 պարտիզանական ջոկատ, որոնց մի մասն ընդգրկված էր 19 բրիգադների մեջ: Խորհրդային վրիժառուների պայքարի մեծ կենտրոններ դարձան Ուկրաինան, Բելոռուսիան, Մերձբալթիկան, ՌԽՖՍՀ-ի մի շարք մարզեր: Պարտիզանները խափանում էին թշնամու հաղորդակցության ուղիները, բնակչության շրջանում տանում քաղաքական աշխատանք՝ նրա հայրենասիրական ոգին

բարձր պահելու համար: 1941–1945 թթ. ձմռանը նրանք ազատագրեցին զգալի թվով բնակավայրեր, ստեղծվեցին պարտիզանական երկրամասեր, որտեղ վերականգնվեց խորհրդային իշխանությունը: Այդպիսի երկրամասեր կային Լենինգրադի մարզում, Բրյանսկի անտառներում, Պոլեսիեում և այլ վայրերում:

խորհրդային բազմազգ պարտիզանների ու ընդհատակայինների շարքերում գտնվում էին նաև հայ ժողովրդի շատ զավակներ: Նրանց մեծ մասը ֆաշիստական գերությունից փախած զինվորներ ու սպաներ էին, մյուսները չէին հասցրել նահանջել և մնացել էին թշնամու թիկունքում: Ժողովրդական վրիժառուների մեջ քիչ չէին հայաբնակ վայրերի (Յուսիսային Կովկաս, Ղրիմ) բնակիչներ: Ընդհատակյա պայքարը տարածված էր նաև ռազմագերիների ճամբարներում:

Հայ պարտիզանների հիմնական զանգվածը ռազմագերիներ ու լեգեոնականներ էին: Ուստի հարկ ենք համարում անդրադառնալ տվյալ հարցի լուսաբանությանը՝ ուսումնասիրվող հիմնախնդիրը բազմակողմանի ներկայացրած լինելու համար:

Ազգային զորամասերի (լեգեոնի) ստեղծումը մտահղացել էր գերմանական հրամանատարությունը: Պատերազմի սկզբում գերության մեջ հայտնվեցին մեծ թվով կարմիրբանակայիններ ու սպաներ, խորհրդային ժողովուրդների զավակներ: Բազմանդամ գերությունը պայմանավորված էր տվյալ պահին Կարմիր բանակի թուլությամբ և ԽՍՀՄ տարածքում ֆաշիստական զորքերի արագ առաջխաղացումով: Որոշ տվյալներով՝ ամբողջ պատերազմի ընթացքում խորհրդային բանակը տվել է 5750 հազար ռազմագերի, որոնց մեծ մասը (3800 հազարը) բաժին է ընկնում 1941 թ.: Շատերը մահացան սովից ու հիվանդություններից: Որոշ մասը տարբեր ձևերով հավաքագրվեց ազգային լեգեոնների անձնակազմում<sup>7</sup>: Ֆաշիստական Գերմանիան, ոտնահարելով միջազգային օրենքները, անտանելի պայմաններ էր ստեղծել նրանց համար: Սահվան դուռը հասած շատ մարդկանց համար կենդանի մնալու ելք դարձավ լեգեոնը:

Պատերազմի սկզբում հայ ռազմագերիների թիվը հասնում էր 10 հազարի, իսկ 1942–1943 թթ.՝ 20–30 հազարի<sup>8</sup>: 30 հազար գերիների փաստը հաստատվում է նաև այլ տվյալներով<sup>9</sup>:

Ընդ որում մեծածավալ գերության դեմ պայքարելու համար խորհրդային իշխանությունը գործադրում էր խստագույն միջոցներ: Այսպես՝ Կարմիր բանակի Գերագույն գլխավոր հրամանատարության զորակայանի 1941 թ. օգոստոսի 16–ի թիվ 270 հրամանով պաշարման պայմաններում հայտնված զինվորներն ու զորամասերը պարտավորեցվում էին մարտնչել մինչև վերջին հնարավորությունը, իսկ թշնամուն հանձնվելու դեպքում ենթակա էին ոչնչացման բոլոր միջոցներով՝ ինչպես ցամաքային, այնպես էլ օդային: Ասել կուզի՝ խորհրդային կողմը բացառում էր գերությունը, որպես երևույթ:

Եվ, այնուամենայնիվ, գերությունը շարունակվում էր, հատկապես Չայրենական պատերազմի ամբողջ առաջին փուլում՝ 1941–1942 թթ.: Ուստի ձեռնարկվում էին նոր՝ ավելի խիստ միջոցներ, ինչպես գերուն «Չայրենիքի դավաճան» ճանաչելը և ընտանիքի անդամներին բանտարկելն ու արքստրելը (ԽՍՀՄ Պաշտպանության պետական կոմիտեի 1942 թ. հունիսի 24–ի որոշումը<sup>10</sup>):

Թե ինչպիսի անտանելի պայմաններում էին գտնվում խորհրդային ռազմագերիները, վկայում են նաև գերմանական տվյալները: Այսպես, Արևելյան գրավյալ տարածքների մինիստր Ալֆրեդ Ռոզենբերգի 1942 թ. փետրվարի 28–ի զորավար Քեյթելին ուղղված նամակում ասված է, թե խորհրդային ռազմագերիները պահվում են սոված, ծուլն–ծմռանը պառկում են բացօթյա, իսկ շատերը գնդակահարվում են: Գնդակահարվում են մասնավորապես մի շարք ճամբարների ասիացի գերիները<sup>11</sup>: Չիտլերը խորհրդակցություններից մեկում, ըստ գերմանական տվյալների, հայտարարել էր, թե ռուսական ռազմագերիների նկատմամբ չպետք է ղեկավարվենք միջազգային օրենքներով<sup>12</sup>:

Իսկ գերմանահպատակ մեծահարուստ Ալֆրեդ Մուրադյանը, որը կապված էր հայկական լեգեոնի հետ և օգնություն էր ցույց տալիս հայ ռազմագերիներին, 1969 թ. նոյեմբերի 14–ի նամակում այդ կապակցությամբ գրել է. «Նախ կը շեշտեն, որ այդ 20 հազարեն անելի լեգեոնականները (այդքանը ոչ թե լեգեոնականներն էին, այլ ռազմագերիները — Վ. Ղ ), «հայրենիքի դավաճաններ» չէին: Ով որ ալ անոնց տեղը եղած ըլլար՝ ճիշդ անոնց պէս ինքն ալ «կամաւոր» կ'արձանագրուէր: Նոյնը ըրած պիտի ըլլա-

յին անոնք՝ որոնք այդ գերիները այսօր «դաւաճան» կ'անուանեն: Գերիներու ճամբարները դժոխք էին: Անօթութենէ կամ հիւանդութենէ մեռնողներու թիւը օրական տասնեակ հազարներէ ավելի էր... Ես կ'ուզեմ տեսնել այն մարդը, որ այս սարսափելի մահը կամ իր մարմնին կամաց–կամաց սառիլը աչքին առաջ՝ իբր իրեն առաջարկեն ուտելիք, տաք սենեակ, հագուստ, դեղ, բժիշկ՝ պայմանաւ, որ լեզեռն մտնէ՝ եւ ան «ոչ» ըսէ...»<sup>13</sup>:

Ռազմագերիներից ազգային զորամասեր կազմակերպելու մասին որոշում ընդունել էր գերմանական բանակի հրամանատարությունը 1941 թ. դեկտեմբերի 30–ին<sup>14</sup>: Իսկ հայկական և այլ կովկասյան զինյալ ուժերի ստեղծման որոշումը կայացվել էր դրանից հետո: Արևելյան գրավյալ տարածքների մինիստրության 1942 թ. մարտի 28–ի «Կովկասյան զինվորական ստորաբաժանումների մասին հարցը» փաստաթղթում ասված է, որ ֆյուրերի որոշումով նախատեսվում է գերիներից ստեղծել կովկասյան զորամասեր, որոնք օգտագործվելու են Կովկասում մղվելիք կռիվներում: Այդ զինվորական ստորաբաժանումները կազմավորվում էին Անդրկովկասի ժողովուրդներից և ներկայացնելու էին 4 խումբ՝ հայկական, վրացական, ադրբեջանական և լեռնական (դաղստանցիներ): Ֆյուրերն էր որոշելու, թե այդ զորամասերը, որոնց կարիքը կզգացվի, հատկապես «Կովկասը գրավելուց անմիջապես հետո ինչ նպատակների համար պիտի օգտագործվեն»<sup>15</sup>:

Հայկական լեզեռնը կազմավորվեց տասերկու գունարտակով /9 Լեհաստանում, 3–ը՝ Ուկրաինայում/, 8–9 հազար անձնակազմով<sup>16</sup>: Գունարտակների հրամանատարները գերմանացիներ էին, իսկ տեղակալները և կրտսեր հրամանատարները՝ հայեր: Լեզեռնի բազաներն էին Լեհաստանի Պուլավի և Ուկրաինայի Պոլտավայի մարզի Լոխվիցա քաղաքները: Լեզեռնի բազային կենտրոններում բարձրացված էր Հայաստանի Հանրապետության եռագույն դրոշը, իսկ լեզեռնականների համազգեստն ուներ «Armenia» տարբերանշանը:

Այնպես որ,— գրել է Ջավեն Մսրըլյանը,— մասամբ հենվելով նաև Սիսաք Թորլաքյանի գրքի վրա, «մինչև 30 հազարի հասած հայ ռազմագերիներէն միայն 8000–ը «ազատագրուեցաւ» ճամբարի դժոխային պայմաններէն՝ զինուորագրուելով գերմաններու

կողմէ ստեղծուած «Հայկական լեգեոնին», սնունդի, հագուստի եւ դեղ ու դարմանի խոստումին ի դիմաց»<sup>17</sup>:

Հայկականի հետ միաժամանակ կազմակերպվել էին նաև քուրքեստանյան, թաթարական, ադրբեջանական, վրացական արևելյան ազգային լեգեոնները: Դրանք համապատասխանում էին այն վարչական միավորներին, որ հիտլերականները ենթադրում էին ստեղծել ԽՍՀՄ գրավյալ տարածքներում պատերազմից հետո, այն է՝ Թուրքեստան, Ադրբեջան, Վոլգա–Ուրալ, Ղրիմ, Կովկաս: Ավելի ուշ կազմակերպվեց գեներալ Վլասովի «Ռուսական ազատագրական բանակը» (POA):

Հայկական լեգեոնի ղեկավարությունն անմիջականորեն իրականացնում էր Հայկական խնամակալ Վարմինը, գերմանահպատակ գնդապետ Ալֆրեդ Մուրադյանի գլխավորությամբ: Այն ստեղծվել է գործում էր ֆաշիստական զինվորական գերագույն հրամանատարությանը կից:

Ազգային լեգեոնները, որոնք հայտնի էին նաև Օստթրուպեն (արևելյան գորքեր) անունով, ունեին իրենց ընդհանուր ղեկավարությունը: Այն իրականացնում էր օստթրուպենների Ջորավարը, որպիսի պաշտոնը գործում էր 1942 թ. դեկտեմբերից<sup>18</sup>:

Այժմ այն մասին, թե այս ամենի և, ընդհանրապես, երկրորդ աշխարհամարտի նկատմամբ ինչ վերաբերմունք ունեին սփյուռքահայերը, նրանց ղեկավար շրջանները: ԽՍՀՄ դաշնակից երկրների բանակներում հազարավոր հայեր մասնակցեցին պատերազմին՝ ընդդեմ ֆաշիստական Գերմանիայի ու նրան միացած երկրների: ԱՄՆ–ի բանակում ծառայել է 20 հազար, իսկ Անգլիայի ու Ֆրանսիայի բանակներում՝ 30 հազար հայ<sup>19</sup>:

Այլ էր ֆաշիստական բանակների կողմից զավթած եվրոպական երկրների հայկական գաղթօջախների իրավիճակը: Կային լուրջ պատճառներ, որոնք այստեղ հայ ազգային գործիչներին թելադրում էին կապեր հաստատել ֆաշիստների հետ, որոշակի ու ակտիվ վերաբերմունք դրսևորել ու գործել հայ գաղութների, Հայաստանի ու հազարավոր հայ գերիների շահերին համապատասխան: Այդ պատճառներն էին.

1. 1920–1930–ական թվականներին, հատկապես Հիտլերի իշխանության գալուց հետո, նաև պատերազմի ժամանակ ֆաշիս-

տական քարոզչությունը տարածում էր, ոչ առանց թուրքական միջամտության, այն կեղծ, հակագիտական տեսությունը, թե հայերը ոչ արիական ժողովուրդներ են, պատկանում են ժողովուրդների սեմական լեզվաընտանիքին: Այստեղից բխում էր այն գործնական հետևությունը, որ հայերին ևս պետք էր վերաբերվել այնպես, ինչպես հրեաներին, այսինքն՝ կոտորել նրանց:

2. Եվրոպայում և ԽՍՀՄ այն տարածքներում, որոնք զավթել էին գերմանական զորքերը, բնակվում էր շուրջ 500 հազար հայ: Զեր կարելի նրանց թողնել բախտի քմահաճույքին:

3. Ֆաշիստական պլաններում ծրագրվում էր նաև Խորհրդային Չայաստանի ապագան: Միևնույն ժամանակ չէր բացառվում Անդրկովկասի սահմաններից Թուրքիայի պատերազմի մեջ մտնելը ԽՍՀՄ-ի դեմ, որ անմիջականորեն սպառնալիք կարող էր դառնալ Չայաստանի բնակչության ցեղասպանության համար:

Նման իրավիճակը և հայ ժողովրդին սպառնացող վտանգը չէր կարող չանհանգստացնել հայ ազգային գործիչներին:

4. Դաշնակցության համար էական նշանակություն ուներ Չայաստանում իրենց կորցրած իշխանությունը վերագտնելու ձգտումը, որին նա հետամուտ էր, դրա համար սպասելով նպաստավոր պայմանների առաջացմանը: Երկրորդ աշխարհամարտը տալիս էր դրա հնարավորությունը, մի կողմ դնելով այն հարցը, թե որքանով էր դա ընդունելի ֆաշիստական գերմանիայի համար:

Նախ և առաջ գործնական քայլեր ձեռնարկվեցին հայ ժողովրդի ծագման մասին հակագիտական, կեղծ տեսակետները ժխտելու ուղղությամբ: Այդ գործին նվիրվեցին Բեռլինի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Արտաշես Աբեղյանը, հրապարակախոս Գարեգին Նժդեհը, գերմանա-հայկական միության նախագահ դոկտոր Պաուլ Ռորբախը և ուրիշներ:

Ռորբախի և Աբեղյանի ջանքերով իրականացվեց «Չայականություն-արիականություն» գրքի (գերմաներեն) տպագրությունը: Նրանում տեղ են գտել Պաուլ Ռորբախի «Մի ավելորդ հարց» և մի շարք այլ գերմանացի հայագետների հոդվածներն ու զեկուցումները: Նույն նպատակով հրապարակ եկավ Էմնո Մեյերի և Արա Բերկյանի «Չեռնոսի և Արաքսի միջև» աշխատությունը: Դրանք գիտականորեն հիմնավորում էին հայ ժողովրդի արիական (ին-

դեվրոպական) ծագումը և նպաստեցին, որ Գերմանիայում նվազեն կամ դադարեն հակահայկական քարոզչությունները:

Ավելի մեծ աշխատանք էր վիճակված կատարելու Հայոց ազգային խորհրդին, որը ստեղծվել էր 1942 թ. դեկտեմբերին գերմանական բարձր իշխանությունների թույլտվությամբ և գործում էր արևելյան գրավյալ շրջանների մինիստրոլթյան հովանավորությամբ: Ազգային խորհրդի նախագահն էր Արտաշես Աբեղյանը, փոխնախագահը՝ Աբրահամ Գյուլխանդանյանը, քարտուղարը՝ Հարություն Բաղդասարյանը: Խորհրդի անդամների վերաբերյալ տեղեկությունները տարբերվում են: Անդամների մեջ հիշվում են նաև Վահան Փափազյանը (Կոմս), Գարեգին Նժդեհը, Դավիթ Դավիթխանյանը և ուրիշներ<sup>20</sup>:

Խորհուրդը 1942–1944 թթ. Բեռլինում հրատարակել է «Հայաստան» շաբաթաթերթը, որը նաև հայկական լեզունի օրգանն էր: Նրա խմբագիրն էր Վիգեն Լևոնի Շանթը: Թերթի տպագրության ծախսերը հոգում էին Ալֆրեդ և Ալֆոնս Մուրադյան եղբայրները:

Ըստ իրադարձություններին մոտ կանգնած Կարո Գևորգյանի՝ Հայոց ազգային խորհուրդն ուներ երկու կարևոր խնդիր՝ հայ ռազմագերիների ու բռնությամբ հարկադիր աշխատանքի քշված հայ տարագիրների փրկությունը և հայերի արիական ծագման հաստատումը<sup>21</sup>:

Խորհուրդն, իհարկե, զբաղվել է այդ գործերով: Սակայն, պետք է նշել, որ նրա խնդիրներն ավելի լայն էին, և որպիսիք որոշում էր ոչ թե ինքը, այլ Արևելյան գրավյալ շրջանների մինիստրոլթյունը: Ըստ խորհրդի 1943 թ. փետրվարի 15–ի հայտարարության՝ այդ խնդիրներն էին. Հայաստանի ազատագրումը բոլշևիկյան լծից ու ռուսական տիրապետությունից և Հայաստանի քաղաքական ինքնավարությունը՝ նրա նկատմամբ Գերմանական Ռայխի քաղաքական պաշտպանությամբ: Այդ նպատակին էին կոչված «գործոն հայկական օգնական ուժերը», որ պետք է հասկանալ նախ և առաջ Հայկական լեզուները: Հայոց ազգային խորհրդի գործունեությունը դադարելու էր, երբ Հայաստանում կստեղծվեր «քաղաքական նոր վարչություն»<sup>22</sup>:

Հայ ազգային գործիչներից հայանպաստ մեծ աշխատանք են կատարել Դրոն (Դրաստամատ Կանայան), Գարեգին Նժդեհը և

ուրիշներ: Նրանք շրջել են ռազմագերիների ճամբարներում, լեզեռնի գորամասերում, հանդիպել ռազմագրաված տարածքների հայ բնակչության հետ, կազմակերպել հնարավոր օգնություն:

«Դեռևս 1930–ական թվականներին,— գրել է Ջավեն Մսրրյանը,— «ազգայնամոլ եւ ցեղապաշտ հակումներ ունեցող անհատ հայեր սկսած էին Պերլինի մէջ փոքր խմբաւորումներ կազմել: «Յայ Ազգայնականներ» (Յայ Նացիներ — Ջ. Մ.) 1940 թ. Պերլինի մէջ «Կովկաս» անուն օրկան մը կը հրատարակէին: Գարեգին Նժդեհ (Տէր Յարութիւնճան — Ջ. Մ.) Պերլին փոխադրուած էր եւ հոն հիմնած էր իր Ցեղակրօն Ուխտի մասնաճիւղերէն մին: Լ. Ջարգարեան եւ իր եղբայրը, ինչպէս և իրենց բարեկամները Պերլինի մէջ հիմնած էին անհետեւորդ մնալու դատապարտուած Յայ Ֆաշիստական կուսակցութիւնը»<sup>23</sup>:

Երկրորդ համաշխարհային պատերազմի բռնկումից և մանավանդ ԽՍՀՄ–ի վրա ֆաշիստների հարձակումից հետո Բեռլինում սկսեցին մեկտեղվել «ՅՅ Դաշնակցութեան ղեկավարներէն ու մանք, գերմաններէ գրաւեալ երկիրներէն գալով: Յետագային Պերլինի ծայնասփիւռին հայերէն բաժնի պատասխանատու կը նշանակուէր Վիգեն Շանթ»:

Գարեգին Նժդեհը, ըստ Սարգիս Ադամյանի «Յայկական գաղութը» գրքի (Նյու–Յորք», 1955, անգլերէն), որի վրա հենվում է Ջ. Մսրրյանը, նաև ղեկավարն էր «Ազատամարտական» կոչվող «ձախող ու կարճատեւ շարժումին», որ կազմված էր հայ ռազմագերիներից: Նրա նպատակն էր «Ստալինականութեան տապալումը եւ ազգային ազատութեան վերահաստատումը»: Իսկ Դրոյի մասին նույն Սարգիս Ադամյանը հայտնել է, թե նա «կովկասահայերու հանդէպ նացի հանդուրժողութիւնը ստանձնած էր»<sup>24</sup>:

Կարո Գևորգյանի, Միսաք Թորլաքյանի և այլ հեղինակների աշխատություններում բազմաթիվ փաստեր են բերվել այն մասին, թե Դրոն, Նժդեհը և մյուս ազգային գործիչները ինչպիսի լայնածավալ աշխատանք են կատարել հայ գերիներին, հայ բնակչությանը օգնություն ցույց տալու, ֆաշիստական բռնությունից փրկելու և ազատ պահելու նպատակով:

Նժդեհի գործունեության և դրա դրդապատճառների մասին արժեքավոր աղբյուր են նրա՝ բանտարկյալ Նժդեհի հարցաքն-

նության արծանագրութիւնները, որ կատարվել են խորհրդային բանտարկութեան տարիներին (1944–1955 թթ.), դիմումները ԽՍՀՄ դեկավարներին և այլ վավերագրեր: Պարզվում է, որ Նժդեհը, կապված լինելով ֆաշիստական հետախուզական մարմինների հետ, 1943 թ. վերջերին դադարեցրել էր իր համագործակցութիւնը և վերադարձել Բուլղարիա, երբ արդեն ռազմական գործողութիւնները բեկվել էին հօգուտ խորհրդային կողմի և վերացել էր ֆաշիստների կողմից Յայաստանին ու հայ ժողովրդին սպառնացող վտանգը: Ֆաշիստների հետ Նժդեհի համագործակցութիւնը հաստատվել էր ի հատուցումն նրանց այն պարտավորութեան, որ պատրաստ են օգնել հայերին<sup>25</sup>:

«Ես,— գրել է Նժդեհը Ստալինին հասցեագրած նամակում (1945 թ. սեպտեմբերի 10),— գերմանացիների հետ կապվել են՝ հետապնդելով մի հատիկ նպատակ՝ հայերին փրկել նոր ջարդերից»<sup>26</sup>:

Նույն գնահատականը, ինչ տրվեց Նժդեհին, վերաբերում է նաև Դրոյին և մյուսներին: Դրոյի գործունեությունը դրական, հայանպաստ դիրքերից են ուսումնասիրել Միսաք Թորլաքյանը (Դրոյի գործընկեր) նշված գրքում, Յանլետ Գևորգյանը (Դրոյի կենսագիր)<sup>27</sup> և ուրիշներ: Յակառակ (խորհրդային) տեսանկյունից է ներկայացվել Դրոյի համագործակցությունը Ռոբերտ Մարտիրոսյանի ուսումնասիրության մեջ (դավաճանություն)<sup>28</sup>:

Խորհրդային պատմագրութեան և խորհրդային իշխանութեան տեսանկյունից հայ ազգային գործիչների ու Դաշնակցութեան վարքագիծը բնականաբար թշնամական ու դավաճանական էր: Ժամանակակից պատմագրութեան և, ընդհանրապես, ազգային շահերի, դրանց հեռանկարի դիրքերից այն (վարքագիծը) ըմբռնելի ու պատճառաբանված էր:

Յայկական լեգեոնի մի քանի գումարտակներ կազմակերպվեցին Ռադոմում, Պոլևսկիում (Լեհաստան) և Լոխվիցայում (Պոլտավայի մարզ): Հիտլերականների նպատակն էր այդ (ինչպես նաև վրացական ու ադրբեջանական) գումարտակները Կարմիր բանակի դեմ մարտերի մեջ մտցնել Կովկաս արշավելու ժամանակ, այնուհետև պարտիզանների դեմ պայքարելու և թիկունքային այլ ծառայությունների համար: Սակայն ֆաշիստների պլան-

ները դատապարտվեցին ձախողման: Նրանց հիմնականում չհաջողվեց իրականացնել իրենց մտադրությունը: Հայ ռազմագերիները, չնչին բացառությամբ, մնացին խորհրդային հայրենասերներ և ֆաշիստների տված զենքը օգտագործեցին հենց նրանց դեմ: Հայկական լեգեոնի գումարտակներում կազմակերպվել և գործում էին ընդհատակյա հակաֆաշիստական հայրենասիրական գաղտնի կազմակերպություններ, նրան ֆաշիզմի դեմ դուրս բերելու համար: Այդ ուղղությամբ փոքր չէր նաև խորհրդային պարտիզանների, ընդհատակայինների ու կուսակցական ընդհատակյա կազմակերպությունների դերը:

1942 թ. կեսերին ուժեղ ընդհատակ գոյություն ունեւր հայ ռազմագերիների Դեմբլինի, Պուլավիի, Բենիամինովոյի, Ռադոնի (Լեհաստան), Խորոլի, Լոխվիցայի (Պոլտավայի մարզ), Ղրիմի և այլ ճամբարներում: Գաղտնապահության խիստ կանոններին հետևող այդ կազմակերպությունները, որոնց ղեկավարության գլուխ կանգնած էին Կարմիր բանակի կոմունիստ սպաներ, կապեր էին ստեղծում տեղական ընդհատակայինների ու պարտիզանների հետ, բարձրացնում էին ռազմագերիների հայրենասիրական ոգին, մշակում փախուստի և ապստամբության պլաններ:

Լեհաստանում գտնվող ճամբարներում ընդհատակյա ակտիվ կուսակցական աշխատանք էին կատարում Կարմիր բանակի սպաներ Ստեփան Յաղոյանը, Ալեքսանդր Ղազարյանը, Բարթոլոմեոսյանը, Դավիթ Մինասյանը, Վահան Վարդանյանը (Ոսկանյան), Ավետիս Կարապետյանը, Սոս Նուրիջանյանը և ուրիշներ: Ընդհատակյա աշխատանքը ավելի աշխուժացավ այն ժամանակ, երբ ֆաշիստները հայ ռազմագերիներին Լեհաստանից ուղարկեցին արևելյան ռազմաճակատ (Կարմիր բանակի դեմ կռվելու համար), իսկ հետագայում նաև թիկունքային շրջաններ (պարտիզանների դեմ), ինչպես նաև Հոլանդիա, Ֆրանսիա, Հունաստան և այլուր:

Լոխվիցայի հայ ռազմագերիների ընդհատակյա պայքարը ղեկավարում էր 5 անդամից բաղկացած կուսակցական կոմիտե, որի մեջ էին Հակոբ Չոբանյանը, Կորյուն Թորոսյանը, Վաղարշակ Գոգորյանը, Արտուշ Մնացականյանը և Ստեփան Բաղալովը: Կոմիտեն տարածում էր թռուցիկներ, կազմել է նիստերի արձանագ-

րություններ, կազմակերպության ծրագիրը և կանոնադրությունը, գանազան ցուցակներ, հաշվետվություններ և այլ փաստաթղթեր, որոնք նա կարողացավ պահել և թաքցնել ֆաշիստներից: Այստեղից հայ ռազմագերիներին ուղարկեցին Օրյոլի, Կալինինի մարզեր և այլ վայրեր, որտեղ նրանք հաջողությամբ շարունակեցին հակաֆաշիստական պայքարը<sup>29</sup>:

Ֆաշիստներն իրենց նպատակին չհասան և հայկական լեզոնը, ինչպես հետո կտեսնենք, լրիվ քայքայվեց: Շատերը փախան խորհրդային պարտիզանների կողմը. համալրեցին Եվրոպայի Դիմադրության շարժման մարտիկների շարքերը: Տեղի ունեցան նաև ակտիվ ընդհատակայինների ձերբակալություններ, ոմանք գնդակահարվեցին գեստապոյի կողմից:

1942 թ. օգոստոսին Պուլևալիից ռազմագերիների մեկ գումարտակ նետվեց խորհրդագերմանական ռազմաճակատ՝ Նևթեգորսկի շրջան (Յյուսիսային Կովկաս): Գումարտակը այստեղ հասավ սեպտեմբերի 28–ին և հոկտեմբերի 5–ին գրավեց պաշտպանություն: Մինչև Մայկոպ հասնելը գումարտակից փախուստ էին կատարել շուրջ 100 լեզոնականներ, իսկ այստեղ խորհրդային պարտիզանների կողմն անցավ Նիկոլայ Յարությունյանի ղեկավարած ջոկը<sup>30</sup>: Դիրքեր զբաղեցնելուց 4 օր անց գերմանացիները գումարտակի ամբողջ անձնակազմը զինաթափեցին և հանեցին ռազմաճակատից: Անդրկովկասյան ռազմաճակատի Սևծովյան խմբի հետախուզական բաժնի հաշվետվությունից տեղեկանում ենք դրա պատճառների մասին:

«Գումարտակի զինաթափումը,— սսված է այդ փաստաթղթում,— տեղի ունեցավ գերմանական հրամանատարության կողմից գումարտակում ընդհատակյա կազմակերպության բացահայտման հետևանքով: Կազմակերպության ղեկավարն էր Կարմիր բանակի նախկին ավագ լեյտենանտ Գրիգորյանը: Խումբը նպատակ էր դրել վերացնել գերմանական հրամանատարությունը, անցնել ռազմաճակատի գիծը և միանալ Կարմիր բանակին»<sup>31</sup>: Դժբախտաբար ֆաշիստներին հաջողվեց բացահայտել գաղտնիքը և կանխել գումարտակի ապստամբությունն ու Կարմիր բանակին միանալը: Ընդհատակի ղեկավարները ձերբակալվեցին և նետվեցին Մայկոպի բանտ: 1942 թ. նոյեմբերի 7–ին կա-

խաղան հանվեցին ընդհատակյա կազմակերպության ղեկավարներ ժորա Գրիգորյանը, Ենոք Խաչատրյանը, Արմո Ավետիսյանը, Գրիշա Յովհաննիսյանը, Սերգո Բարսեղյանը և ուրիշներ, ընդամենը 33 մարդ: Մյուս ղեկավարները դատապարտվեցին երկարատև բանտարկության<sup>32</sup>: Զինաթափումից հետո, սակայն, ընդհատակյա աշխատանքը չդադարեց: Հիտլերականները գումարտակը վերակառուցել էին ճանապարհաշինարարական զորամասի, որը հոկտեմբերի 11-ին սկսեց աշխատել Օզերովո-Գունայկա-Կուտլովինա ճանապարհում, որտեղ էլ հաճախակի դարձան փախուստները: Այս դեպքում փախուստի դիմեց 73 մարդ: Դա ֆաշիստներին ստիպեց գումարտակը հեռացնել թիկունք, իսկ 400 մարդ փակվեցին համակենտրոնացման ճամբարներում<sup>33</sup>:

Ամփոփելով այս և այլ փաստերը՝ վերոհիշյալ փաստաթղթի հեղինակները եզրակացրել են. «Մարտական գործողությունների ամբողջ ընթացքով պարզվել է, որ ֆաշիստների մտադրությունը հիմնականում ձախողվել է: Գերմանացիներին չհաջողվեց ազգային զորամասերը և լեգեոններն օգտագործել անմիջապես մարտերում»<sup>34</sup>:

Կովկաս կռվի նետելու համար նախապատրաստվել էր նաև լեգեոնի երկրորդ գումարտակ ևս: Սակայն գերմանական ֆաշիստները չհամարձակվեցին կրկնել դառը փորձը: Նրանք շտապ զինաթափեցին գումարտակը, ձերբակալեցին մի շարք ընդհատակայինների, իսկ 12 ղեկավարներ դատապարտվեցին գնդակահարության:

Հայկական լեգեոնի քայքայումը շարունակվեց նաև հետագայում, երբ նրա մյուս գումարտակներին տարացրեցին տարբեր երկրներ:

A  
II  
90829



ՀԱՅ ԸՆԴՀԱՏԱԿԱՅԻՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԻԶԱՆՆԵՐԸ  
ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Հայկական լեգեոնում տիրող իրադրության և լեգեոնականների քաղաքական կողմնորոշման մասին ուշագրավ աղբյուր է «Բաց նամակ գերմանական բանակում գտնվող հայկական լեգեոնի մարտական օրգան «Հայաստան» թերթի խմբագրությունը» փաստաթուղթը: Նրա հեղինակը «Մի խումբ լեգեոնականներ» են, իսկ ժամանակը 1944 թ. մայիսի 15-ը, երբ խորհրդային զորքերի շարունակվող հաղթարշավը արդեն կասկած չէր թողել ԽՍՀՄ վերջնական հաղթանակի և պատերազմի ելքի նկատմամբ: Նաև դրանով էր պայմանավորված հայկական լեգեոնի գումարտակներից տեղի ունեցող փախուստների հաճախացումը:

Նամակի հեղինակները լավատեղյակ էին այն մասին, որ լեգեոնի 1-ին, 5-րդ, 6-րդ և Լոխվիցայի երկու գումարտակներից հազարավոր մարդիկ էին փախել Կարմիր բանակի և պարտիզանների կողմը: «Կփախչեին բոլորը,— ասված է փաստաթղթում,— եթե գերմանական հրամանատարությունը բոլոր այդ զորամասերը չփոխադրեր արևմուտք»: Նամակի հեղինակները, սակայն, չեն կարողացել զուշակել, որ արևմուտքում ևս կշարունակվեին գումարտակների քայքայումը և փախուստները դեպի Դիմադրության շարժման շարքերը:

Նամակում անդրադարձ է կատարվել այն հարցին, թե ինչ սկզբունքով է տեղի ունեցել լեգեոնի կազմավորումը, և քննադատվում է «Հայաստան» թերթը՝ կամավորության վերաբերյալ քարոզչության համար՝ դա համարելով «անամոթ սուտ» և «իրականության առևանգում»: «Բացի խորհրդային Միությունից դժգոհ

մի բուռ մարդկանցից, մնացածը լեզեոն բերվեցին՝ նրանց սպառնալով ոչնչացնել սովի կամ սրի միջոցով», իսկ հրաժարվելու դեպքում մարդկանց մտցնում էին «տուգանային ճամբարներ», որ նշանակում էր «անխուսափելի մահ», կարողում ենք նամակում: Իսկ լեզեոն մտնողները, այնուհետև պարզաբանվում է նամակում, ելնելով այն հանգամանքից, որ իրենք կունենան զենք, կմտցվեն ճակատ և հնարավորություն կստանան փախչելու, չէին ընդդիմանում իրենց հավաքագրմանը:

Հայ ռազմագերիների անհնազանդության մասին խոստովանել է նաև անձամբ Հիտլերը: «Այդ զուտ Կովկասյան գունարտակների կազմակերպումը,— հայտարարել է նա 1942 թ. վերջին,— համարում են չափազանց վտանգավոր գործ... Չնայած Ռոզենբերգի և զինվորականների հավաստիացումներին, հայերին նույնպես չեն հավատում»<sup>35</sup>: Եվ Հիտլերն իսկապես չէր սխալվում: Հետագա իրադարձությունները նոր փաստերով հաստատեցին նրա հայտնած անվստահությունը:

1942 թ. հոկտեմբերին «Կարմիր աստղ» անունով գաղտնի կազմակերպություն էր ստեղծվել հայ ռազմագերիների այն գունարտակում, որն աշխատում էր Կերչ-Թեոդոսիա խճուղում, և որի ղեկավարներն էին կոմունիստ Արամ Տերյանը և Լեոնիդ Պուշչերովսկին: Կազմակերպությունը կապ ուներ տեղի ընդհատակայինների ու պարտիզանների հետ և գործում էր նրանց օգնությամբ ու առաջադրանքով: Հայ ընդհատակայինները հակաֆաշիստական ազիտացիա էին տանում ռազմագերիների մեջ, Ստալինի Կրիմի շրջանի պարտիզանների հետ համագործակցելով, կատարում էին խափանարարական և այլ գործողություններ: Սակայն, ղժբախտաբար, ֆաշիստներին հաջողվեց հայտնաբերել ընդհատակը, որի ղեկավարների հետ նրանք խիստ դատաստան տեսան: Իսկ ընդհատակայինների մեծ մասը կարողացավ փախչել և միանալ Ղրիմի պարտիզաններին<sup>36</sup>:

Կոմերիտական ընդհատակյա կազմակերպություն էր գործում Ղրիմի հայաբնակ Պրոլոմ (Պարտիզանսկոյե) գյուղում, որի ղեկավարներն էին Գուրգեն և Գարեգին Ասլանյան եղբայրները և Պավել Կուզմինը: Որոշ վերակառուցում կատարելուց հետո նրանք դարձան կազմակերպության նոր ղեկավար, նավաստի,

պարտիզանական կոմիսար Լեոնիդ Ուվարովի տեղակալները: Բնակչությանն ուղղված առաջին հակաֆաշիստական կոչը կազմակերպությունը տարածեց 1942 թ. մարտին, իսկ վերջին գործողությունը կատարեց պարտիզանների հետ միասին, որի շնորհիվ ալրադացում գրավվեց ֆաշիստների համար պատրաստված ամբողջ այլուրը: Այդ գործողությունից հետո կազմակերպության անդամները փոխադրվեցին պարտիզանական ճամբար<sup>37</sup>:

Ավելի փոքր խմբերով և միայնակ հայ ընդհատակայիններ կային բազմաթիվ ընդհատակյա կազմակերպություններում՝ ամենատարբեր վայրերում:

Ռիզայի ռազմագերիների ճամբարից լատիշուհի Եմիլիա Բերրիսի օգնությամբ ազատվելուց հետո Արկադի Մարկոսյանը աշխատանքի անցավ «Արսենալ» գործարանում և լատիշ հայրենասերների հետ միասին 1941–1942 թթ. կատարեց խափանարարական գործողություններ: Նրանք խափանում էին վերանորոգվող տանկերը, գրում և տարածում էին հակաֆաշիստական թռուցիկներ, օգնում ռազմագերիներին՝ փախչելու պարտիզանների մոտ: Ֆաշիստների կողմից ընդհատակի բացահայտումից հետո գնդակահարվեց նաև Արկադի Մարկոսյանը<sup>38</sup>:

Բելոռուսական ընդհատակայինների մեջ էին Քրիստափոր Ալավերդյանը, Վահագ Չայրապետովը, Անուշավան Պետրոսյանը, Միքայել Բաղդասարյանը, Չենրիկ Զաքարյանը, Սոս Նուրիջանյանը և ուրիշներ: Դիվիզիայի հրամանատար, գեներալ–մայոր Քրիստափոր Ալավերդյանը Բրեստի մոտ գտնվող Բյալա–Պոդլյասկայի ճամբարում բարձրացնում էր ռազմագերիների ոգին; կոչ անում նրանց չընկճվել և հավատալ, որ գերմանական ֆաշիստներն անպարտելի չեն: Ֆաշիստներին չհաջողվեց կոտրել մեծ հայրենասերի ոգին և գրավել իրենց կողմը: Շուտով նրան փոխադրեցին Չամբուրգի համակենտրոնացման ճամբար, ապա Նյուրնբերգի բանտը, որտեղ էլ գնդակահարեցին 1942 թ. ապրիլին<sup>39</sup>:

Սահմանապահ զորքերի գնդապետ Վահագ Չայրապետովը մնացել էր թշնամու թիկունքում ընդհատակյա աշխատանքով զբաղվելու համար: Գևորգ Չակոբյան անվան տակ նա դարձավ 208–րդ մոտոմեքենայացված դիվիզիայի նախկին հրամանա-

տար, գնդապետ Վլադիմիր Նիչիպորովիչի ընդհատակյա խմբի սկտիվ գործիչներից մեկը: Խումբը կազմակերպվել էր Մինսկի գաղթականների հանրակացարանում, որը, ըստ ֆաշիստների մտահղացման, ծառայելու էր որպես կասկածելի մարդկանց հայտնաբերելու և հետևելու միջոց: Հայրապետովը ձեռք բերեց և գործի գցեց ռադիոընդունիչ ապարատ, ընդունում էր Սովինֆորմբյուրոյի հաղորդագրությունները և դրանք տարածում Մինսկում ու գյուղական վայրերում (1941–1942 թթ.): 1942 թ. փետրվարին նա նշանակվեց Նիչիպորովիչի կազմակերպած և հրամանատարությամբ գործող պարտիզանական ջոկատի շտաբի պետ<sup>40</sup>:

Հանրակացարանի ընդհատակյա կազմակերպության մեջ եղել են մոտ 20 հայեր, որոնք փաստորեն համախմբված էին Անուշավան Պետրոսյանի շուրջը: Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի շրջանավարտ Անուշավան Պետրոսյանը մինչև պատերազմը աշխատում էր Բելուռուսիայում, ապա գտնվում էր զինվորական ծառայության մեջ: Նրա բնակարանը դարձել էր ընդհատակայինների և պարտիզանների հանդիպավայր: Պետրոսյանը կատարում էր հետախուզական և խափանարարական աշխատանք Ստանիսլավ Վաուպչասովի (Գրադով) ղեկավարած պարտիզանական ջոկատի առաջադրանքով<sup>41</sup>:

1941 թ. հոկտեմբերին կրտսեր լեյտենանտ Միքայել Բաղդասարյանի ղեկավարությամբ 18 դեսանտայիններ վայրէջք կատարեցին Մինսկի մարզի Բորիսով քաղաքի շրջանում՝ այստեղ հակաֆաշիստական պայքար կազմակերպելու համար: Վայրէջքի ժամանակ թշնամին կրակ բացեց դեսանտայինների վրա, և Միքայել Բաղդասարյանը ծանր վիրավորվեց: Բելուռուս գյուղացիների օգնությամբ բուժվելուց հետո հասավ Մինսկ և մտավ Վասիլի Սայչիկի գաղտնի խմբի մեջ: Առաջադրանքի համաձայն՝ Բաղդասարյանը թափանցեց Մոլոդեչնոյի ռազմագերիների ճամբար և կազմակերպեց բազմաթիվ ռազմագերիների փախուստներ: 1942 թ. հոկտեմբերին, հեռանալով ճամբարից, Բաղդասարյանը Շուրուպով ծածկանունով ընդգրկվեց Մինսկի կուսքաղկոմի օպերատիվ խմբի մեջ, որը բացահայտում և վերացնում էր հայրենիքի դավաճաններին, լրտեսներին և ուրիշների: Նրա գործընկերներից էր նաև Սուրեն Մաթևոսյանը (Մուրզի), որը խմբի ղեկավար է-

վան Կաբուշկինի հետ ձերբակալվեց և գնդակահարվեց գեստապոյի կողմից 1943 թ. փետրվարին (Իվան Կաբուշկինին հետմահու շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում), իսկ Միքայել Բաղդասարյանը փոխադրվեց Քեռի Կոլյայի պարտիզանական բրիգադ, ուր բազմապատկեցին նրա հերոսական մարտական գործերը, ապա մարտնչել է ռազմաճակատում: Նրա կուրծքը զարդարում էին Կարմիր դրոշի, Հայրենական մեծ պատերազմի առաջին աստիճանի, Կարմիր աստղի և Փառքի երրորդ աստիճանի շքանշանները և Հայրենական մեծ պատերազմի պարտիզանի առաջին աստիճանի ու այլ մեդալները<sup>42</sup>:

Մեծ երկրից 1942 թ. մարտին թշնամու թիկունք ուղարկվել էր Գրիգոր Ալեքսանյանը: Կիրովի անվան պարտիզանական ջոկատում վիրավորվելուց հետո նա բուժվելու համար մնաց Ջապրուլոյե գյուղում, որտեղ տանում էր ընդհատակյա աշխատանք, տարածում ջոկատից ուղարկված թռուցիկները (1943 թ. վերադարձավ պարտիզանական ջոկատ)<sup>43</sup>:

ԲԿ(բ)Կ Կենտկոմի առաջադրանքով չեկիստ Գեորգի Խումարյանը 1941–1942 թթ. մնացել էր թշնամու թիկունքում և զբաղվում էր հակաֆաշիստական պայքարի կազմակերպումով: Նա գործի անցավ Գոմելի մարզի Ռեչիցա քաղաքի թատրոնում որպես բանվոր և ստեղծեց ընդհատակյա կազմակերպություն (1942 թ. մայիսից գտնվում էր Վորոշիլովի անվան պարտիզանական ջոկատում)<sup>44</sup>:

1942 թ. հունվարին ռազմագերիների ճամբարից փախչելուց հետո հրետանու կապիտան, կոմունիստ Հովհաննես Սարգսյանը (ծածկանունը Վասիլի Կոզիրյան) դարձավ ընդհատակային: Նա հնգյակի ղեկավար էր Պոլեսյեի մարզի Խոյնիկի քաղաքի ընդհատակյա կուսակցական խմբակում, ուր կազմակերպում էր ռազմագերիների փախուստներ, ագիտացիա ծավալում բնակչության շրջանում: Անձամբ Սարգսյանը ձեռք բերեց ռադիոընդունիչ և հետևում էր Մոսկվայի հաղորդումներին: 1942 թ. աշնանը ընկերների հետ միասին փոխադրվեց Չապակի անվան ջոկատ<sup>45</sup>:

Ռազմագերիների ճամբարից էր փախել նաև բժիշկ Վազգեն Մինասյանը, որը, թաքնվելով ընդհատակում, մեծ օգնություն ցույց տվեց Մինսկի «Վորոշիլով» պարտիզանական ջոկատին՝

նրա համար հայթայթելով դեղորայք, վիրակապեր և այլ պարագաներ, տարածում էր թռուցիկներ<sup>46</sup>:

Բելոռուսիայի ընդհատակային շարժման մեջ հանրահայտ է կոմերիտական Յենրիկ Ջաքարյանի անունը: 1941 թ. օգոստոսին Սոգիլովի հոսպիտալում Իլյա Գուրիևի (Կազբեկ) ղեկավարությամբ ստեղծվել էր երիտասարդական հակաֆաշիստական կազմակերպություն, որի ակտիվ գործող անձերից էր Յենրիկ Ջաքարյանը (Ռոմանով): Վերքի բուժվելուց հետո նա նորոգող էր աշխատում ջերմաէլեկտրակենտրոնում, ապա ռեզերվների կազմավորման հավաքակայանում, ուներ անցաթուղթ և վայելում էր գերմանացիների վստահությունը: Նման պայմաններում նրան հաջողվեց իրականացնել մի շարք հետախուզական և խափանարարական առաջադրանքներ: Յուլետեմբերյան հեղափոխության 24-րդ տարեդարձի օրը մասնակցել է հոսպիտալի շենքի վրա կարմիր դրոշի բարձրացմանը: Բուժքույր Ե. Եվդոկիմենկոյի բնակարանում, որտեղ նա ապրում էր, տեղադրել էր ռադիոընդունիչ և ընդունում էր Սովինֆորմբյուրոյի հաղորդագրությունները: 1942 թ. հունվարին խափանել է էլեկտրաէներգիայի մատակարարումը, որը նախատեսված էր գերմանական տանկերի վերանորոգման համար: Ապրիլի 3-ին պայթեցրել է ջերմաէլեկտրակենտրոնի կաթսան, իսկ օգոստոսի 30-ին՝ ռեզերվների կազմավորման շտաբի կապի հանգույցը, որը հրդեհ է առաջացրել գեներալ Գյունտերի առանձնասենյանում՝ ոչնչացնելով գաղտնի փաստաթղթեր<sup>47</sup>:

Խորհրդային հայրենասերների գաղտնի խմբակ էր ստեղծել նախկին ասպիրանտ Գուրգեն Մարտիրոսովը Գրողնոյի մարզի Լիդա քաղաքի հոսպիտալում: Մարտիրոսովի իրագործած կարևոր գործողություններից է հոսպիտալի մի խումբ վիրավոր ռազմագերիների փախուստը: Խմբակը շուտով միանում է քաղաքի կոմերիտական ընդհատակյա կազմակերպությանը (1943 թ. գարնանը խուսափելով գեստապոյի հետապնդումներից ու ձերբակալություններից, ընդհատակայինները հեռացան պարտիզանների մոտ):

Խորհրդային վրիժառուների տարեգրության մեջ ոսկե տառերով է գրված «Երիտասարդ գվարդիա» կոմերիտական ընդհա-

տակյա կազմակերպության պատմությունը: Կազմակերպությունը ստեղծվել էր Ուկրաինայի Վորոշիլովգրադի մարզի Կրասնոդոն քաղաքում և գործում էր կուսակցության քաղաքային կոմիտեի ղեկավարությամբ ու ցուցումներով: Նրա շարքերում ընդգրկված էին ավելի քան 100 երիտասարդներ: Կազմակերպությունը գործում էր հնգյակներով, որոնցից մեկի ղեկավարն էր Մայա Պեգլիվանովան (Փահլևանյան): Իսկ Գեորգի Հարությունյանցի բնակարանում տեղադրված էր գաղտնի տպարանը: «Սովորաբար,— հիշում է Հարությունյանցը,— թռուցիկները շարում էին Վոլոդյա Օսմուխինը, Անատոլի Օռլովը, Վասիլի Լևաշովը, Վանյան և ես, «փակցնելու զնում էինք երեկոյան կողմ, տղա ու աղջիկ միասին, զույգերով»<sup>48</sup>:

Դժբախտաբար տեղի ունեցավ դավաճանություն, և 1943 թ. հունվարին սկսվեցին ձերբակալությունները: Խոշտանգումներից հետո գեստապոն գնդակահարեց Իվան Ջեմնուխովին, Օլեգ Կոշևոյին, Ուլյանա Գրոմովային, Սերգեյ Տյուլենինին, Լյուբա Շևցովային, որոնք հետմահու արժանացան Խորհրդային Միության հերոսի կոչման և ուրիշների: Գնդակահարվեց նաև 16-ամյա Մայա Պեգլիվանովան: Գեորգի Հարությունյանցին հաջողվեց խուսափել ձերբակալությունից: Մայան պարզևատրվել է Հայրենական պատերազմի առաջին աստիճանի, իսկ Գեորգին՝ Կարմիր աստղի շքանշաններով:

«Ձա Սովետսկույու Ուկրաինու» երիտասարդական-կոմերիտական կազմակերպություն է գործել Կիևում նրա ժամանակավոր օկուպացիայի ամբողջ ժամանակամիջոցում: Նրա ղեկավարներն էին Կ. Եգունովը և Թաթոս Ազոյանը: Կազմակերպության անդամներից էին Թաթոսի եղբայր Հակոբը և Գալուստ Ռեհանյանցը: Կազմակերպությունը բնակչության շրջանում տանում էր քաղաքական աշխատանք, տարածում էր թռուցիկներ, կատարում խափանարարական գործողություններ, ճամբարներից ազատում ռազմագերիներին: 1942 թ. ապրիլին մատնությամբ ձերբակալվեցին և գնդակահարվեցին Ազոյան եղբայրները, Գալուստ Ռեհանյանցը, կազմակերպության այլ անդամներ, հետագայում նաև Ազոյանների մայրը՝ Մարիամ Պողոսովան: Ձերբակալու-

թյունից խուսափած ընկերները շարունակեցին իրենց գործունեությունը մինչև Կիևի ազատագրումը<sup>49</sup>:

Կիրովոգրադի մարզում ընդհատակյա շրջկոմի անդամ, սովխոզի նախկին դիրեկտոր Յա. Շուխուլյանը մեծապես նպաստել է շրջանում պարտիզանական և ընդհատակյա պայքարի կազմակերպման և զարգացման գործին: 1942 թ. նա բռնվեց ֆաշիստների կողմից և տանջամահ արվեց<sup>50</sup>: Ֆաշիստները գնդակահարեցին նաև Մուշեղ Բալասանյանին, որը հայրենասիրական աշխատանք էր տանում Ժիտոմիրի համակենտրոնացման ճամբարում<sup>51</sup>:

Ծանր վախճան վիճակվեց նաև կոմունիստ, լեյտենանտ Արտաշես Ավագյանին, որն ընդհատակյա աշխատանք էր կատարում Սնուլենսկի մարզում: Վասիլևո գյուղի հայրենասեր կոլտնտեսականների օգնությամբ նա ազատվել էր գերությունից և փաստաթղթով դարձել տեղական բնակիչ: Այստեղ Ավագյանը կազմակերպեց երիտասարդական մարտական խումբ, որը շուտով միացավ Կարդիմովսկի բանավանի ընդհատակյա կազմակերպությանը: Նա տանը թաքցրել էր գնդացի, ռադիոընդունիչ և հետևում էր Հայրենիքի ձայնին: Մատնությամբ ձերբակալված Ավագյանը հարցաքննության ժամանակ իրեն պահեց որպես իսկական հայրենասեր, իսկ ֆաշիստ քննիչը դաշունահարեց նրան, ատրճանակից կրակեց, ապա կախաղան հանեց: Երկու օր անց կախեցին նաև նրա մարտական ընկերուհի Մարիա Շալունովային: Արտաշես Ավագյանը հետմահու արժանացավ Հայրենական մեծ պատերազմի առաջին աստիճանի շքանշանի<sup>52</sup>:

Կրեմենչուգում (Պոլտավայի մարզ) բժիշկներ Տ. Կ. Ժվանիայի և Վ. Կ. Կոստանտինովիչի հայրենասիրական աշխատանքի շնորհիվ հարյուրավոր ռազմագերիներ, ստանալով համապատասխան օգնություն, ազատվեցին ճամբարներից ու տեղավորվեցին կոնսպիրատիվ բնակարաններում կամ ուղարկվեցին պարտիզանների մոտ: Նրանց ընդհատակի ակտիվ անդամներից էր լեյտենանտ Ազատ Մովսիսյանը (Աշոտ Վարդանյան): Նրա մասնակցությամբ ընդհատակայինները 150 երեխաների փրկեցին Գերմանիա տաժանակիր աշխատանքի ուղարկելուց, պարտիզանների պահանջով հայթայթեցին և նրանց հատկացրին մոտ 200 հրացան<sup>53</sup>:

Ղրինի մարզի Թեոդոսիա քաղաքում, որը խորհրդային գործերը երկրորդ անգամ թողեցին 1942 թ. սկզբին՝ անհաջող դեսանտային օպերացիայից հետո, ընդհատակյա աշխատանք էին կատարում լեյտենանտ Հայկ Մարտիրոսյանը (Հարրի Մայդերոսով), Ասյա Ամետովա-Բալյանը, լեյտենանտ Աշոտ Հայրապետովը (Ալյոշա), Արամ Տերյանը, որի մասին խոսվեց վերևում և ուրիշներ: Նրանք այն կազմակերպության մեջ էին, որը ղեկավարում էր ծխախոտի գործարանի մանկամտուրի վարիչ Նինա Լիստովնիչայան: Աշոտ Հայրապետովը թարգմանիչ էր ռազմագերիների ճամբարում, իսկ Հայկ Մարտիրոսյանը՝ քաղաքի գերմանական պարետատանը: Ասյա Ամետովա-Բալյանը, որը տիրապետում էր մի քանի լեզուների, քարոզչական աշխատանք էր տանում հայ և այլազգի ռազմագերիների շրջանում: Թեոդոսիայի կուսակցական ընդհատակի կողմից էր ստեղծվել վերևում հիշված «Կարմիր աստղ» կազմակերպությունը<sup>54</sup>:

1942 թ. մայիսին Սիմֆերոպոլում գաղտնի խումբ էր կազմակերպել ռազմագերիների ճամբարից փախած, կապի աշխատակից Արտեմ Գյուրեդյանը (Իվան): Խմբում նույնպես ներգրավված էին կապի աշխատողներ, որոնք խափանարարական գործողություններ էին կատարում կապի ձեռնարկություններում, ընդունում և տարածում էին Մոսկվայի ռադիոյի հաղորդումները: Խումբը սերտորեն համագործակցում էր Պավել Տոպալովի (Քեռի Յուրի) ընդհատակյա կազմակերպության և պարտիզանական ջոկատների հետ<sup>55</sup>:

Հյուսիսային Կովկասի ընդհատակայիններից հիշատակության արժանի է կազմակերպության ղեկավար, 1919 թ. կուսակցության անդամ Վահան Սարկիսովը, որը հիտլերականների կողմից ձերբակալվեց և գնդակահարվեց 1942 թ. դեկտեմբերին Կրասնոդարում: Երկրամասի անասունների մթերման գրասենյակի կառավարիչը ձախողում էր խորհրդային մարդկանց ունեցվածքը Գերմանիա քշելու ֆաշիստական միջոցառումները<sup>56</sup>: Թշնամու գնդակին զոհ գնաց նաև Եյսկ քաղաքի ընդհատակային, գործարանի նախկին դիրեկտոր, 1918 թ. կոմունիստական կուսակցության անդամ, Հյուսիսային Կովկասում և Հայաստանում քաղաքացիական կռիվների մասնակից Սուրեն Հարությունյանը<sup>57</sup>: Արմավիր քաղաքի

ընդհատակյա կազմակերպություններից մեկը, 13 մարդուց բաղկացած, ղեկավարում էր Դայրենական մեծ պատերազմի հաշմանդամ Ավանեսովը: Նրա խումբը, ասված է պաշտոնական փաստաթղթում, «ուներ իր ռադիոընդունիչը, բնակչության շրջանում տարածում էր Սովինֆորմբյուրոյի հաղորդումները, ոչնչացնում էր կապը: Իսկ քաղաքից գերմանացիների նահանջելու ժամանակ կազմակերպեց հրդեհների մարումը, կտրտեց ականների էլեկտրալարերը, փրկելով մի շարք ձեռնարկություններ»<sup>58</sup>: Հիմնականում հայ երիտասարդներից էր կազմված Դոնի Ռոստովի մարզի Սուրբ Խաչ ավանում (Մյունսիկավան) 1942 թ. գործող «Դրուժբա» ընդհատակյա կոմերիտական կազմակերպությունը, որի ղեկավարն էր դպրոցի նախկին դիրեկտոր Ալեքսեյ Պետրոսի Ավետիսյանը: Ադանյանների ընտանիքը և ուրիշ ընդհատակայիները քաքքրին գերմանացիների կողմից գետը նետված հեղափոխական-դեմոկրատ Միքայել Նալբանդյանի և Ռափայել Պատկանյանի կիսանդրիները, որոնք Սուրբ Խաչի ազատագրումից հետո կանգնեցվեցին իրենց տեղում:

Կիսլովոդսկի բժիշկների ընդհատակյա խումբը, որի մեջ էին նաև Սերգեյ Սարկիսյանը, Ազարովը և ուրիշներ, կեղծելով հիվանդության փաստաթղթերը, փրկեց բազմաթիվ կոմունիստների ու սպաների կյանքը: Ընդհատակայիների և բնակչության օգնությամբ շատ վիրավորներ դիմեցին փախուստի՝ խուսափելով բանտարկությունից և սպանությունից<sup>59</sup>:

Դոնի Ռոստովի Ստալինի անվան պարտիզանական ջոկատի հրամանատար Մ. Ս. Տրիֆոնովի (Յուզով) առաջադրանքով Թադևոս Աղաբաբյանը աշխատանքի տեղավորվեց Ռոստովի քաղաքապետարանի ճաշարանում և ապահովեց տասնյակ պարտիզանների սննդի կազմակերպման գործը: Նա հաջողությամբ իրականացրեց նաև պարտիզանների մի այլ առաջադրանք՝ քայքայել գերմանացի, ռումինացի և սլովակ սպաների շարքերը, պառակտում մտցնել նրանց միջև: Այդ նպատակի համար դարձյալ օգտագործվեց ճաշարանը, որտեղ խնջույքի ժամանակ խառնակություն սարքեց սպաների միջև, խորացրեց հակահիտլերյան տրամադրությունը:

«Դժվարին խնդիր էր վիճակվել Աղաբաբյանին,— գրել է Հարավային ռազմաճակատի պարտիզանական շարժման շտաբի օպերատիվ բաժնի պետ Գ. Ա. Պերեկլալսկին,— բայց նա արդարացրեց պարտիզանների հույսերը, կատարեց ջոկատի հրամանատարության առաջադրանքը»<sup>60</sup>: Ռոստովի ազատագրումից հետո՝ 1943 թ., ծառայել է Հարավային, 1–ին և 4–րդ Ուկրաինական ռազմաճակատների պարտիզանական շարժման շտաբներում՝ զբաղվելով պարտիզանական ջոկատների մատակարարման գործով: Այստեղ ևս բարձր է գնահատվել նրա ծառայությունը<sup>61</sup>:

Ընդհատակայինների շարքերում կային Դյուսիսային Կովկասի և Ռոստովի մարզի հայաբնակ վայրերի շատ բնակիչներ: Ֆաշիստական տեռորի ու բռնությունների պայմաններում խիզախաբար գործեցին Սիրանուշ Կարապետի Բոստանջյանը, Գրիգոր Պողոսի Լուսպիկյանը և ուրիշներ:

Բուլչիե Սալի գյուղի բնակիչ Սիրանուշ Բոստանջյանը թաքցրել էր լեյտենանտ Սերգեյ Օհանյանի հրետանային մարտկոցի անձնակազմի փաստաթղթերը, անձնակազմ, որը Բերբեր Օբա գյուղի մոտ հերոսաբար և անձնագոհ կերպով պայքարեց թշնամու 50 տանկերի դեմ<sup>62</sup>: Գրիգոր Լուսպիկյանը (նույն գյուղից) վտանգելով կյանքը, իր բնակարանում 12 օր թաքցրեց և ապաստան տվեց պարաշյուտով թշնամու թիկունք իջած խորհրդային 3 հետախույզների, օգնեց նրանց աշխատանքներին:

Օրյոլի մարզի Դուբրովկայի շրջանի առբաժնի նախկին բուժակ Մանուկյանը ներգրավվել էր ընդհատակյա աշխատանքի մեջ՝ ծառայության մտնելով ֆաշիստների շրջանային վարչությունում: Զբաղմունքի բերումով շրջելով գյուղերը՝ նա ընդհատակի և Կորոշիլովի անվան պարտիզանական բրիգադի միջև կատարում էր կապավորի դեր: Բացի դրանից, Մանուկյանը ղեկորայք և բժշկական գործիքներ էր հասցնում պարտիզանական հոսպիտալին<sup>63</sup>:

\*\*\*

Ընդհատակայինների նման քիչ չէր նաև պարտիզանական պայքարի հայ մասնակիցների թիվը: Ռուսների, ուկրաինացիների,

բելոռուսների և խորհրդային մյուս ժողովուրդների զավակների հետ միասին նրանք մարտնչում էին գերմանական ֆաշիստների ջախջախումը արագացնելու համար: Հայրենական պատերազմի առաջին փուլում խորհրդային պարտիզանների շարքերում հայերը հանդես էին գալիս խմբերով և անհատորեն: Նրանց մեջ կային ինչպես շարքային մարտիկներ, այնպես էլ հրամանատարներ:

Գեներալ-լեյտենանտ Հայկ Թումանյանը ԲԿ(բ)Կ Կենտկոմի առաջադրանքով զբաղվել է Բելոռուսիայում պարտիզանական պայքարի կազմակերպման գործով, ղեկավար աշխատանք է կատարել Լենինգրադի մարզի 4-րդ պարտիզանական գնդում, այնուհետև նշանակվել Հյուսիսարևմտյան ռազմաճակատի ռազմական խորհրդի լիազոր՝ նույն ռազմաճակատի ուղղությամբ ժողովրդական վրիժառուների պայքարը կազմակերպելու համար:

1942 թ. փետրվարից Վահագ Հայրապետովը, որը մինչև այդ գտնվում էր ընդհատակյա պայքարում, Նիչիպորովիչի ղեկավարած պարտիզանական ջոկատի շտաբի պետն էր (եղել է նաև Կ.իչևի շրջանի պարտիզանական ջոկատների օպերատիվ շտաբի պետ): Ջոկատը գործել է Մինսկի և Մոգիլյովի մարզերում: «Հայրապետովի մշակած գործողությունները,— կարդում ենք նրան տրված բնութագրում,— միանգամայն գրագետ և կշռադատված են, ռազմական խորամանկության տարբերով, որոնք պարտիզանների համար ունեցան մեծ նշանակություն<sup>64</sup>: 1942 թ. հուլիսին պարզատրվել է Լենինի շքանշանով:

Ս. Վառլայասովի (Գրադով) հրամանատարությամբ գործած ջոկատի (այնուհետև դարձավ բրիգադ) առաջին հայ պարտիզաններից է Անուշավան Պետրոսյանը, որը ջոկատ եկավ 1942 թ. նոյեմբերին Մինսկի ընդհատակից և դարձավ հետախուզական ջոկի հրամանատար:

Հարուստ է ավագ լեյտենանտ Խաչիկ Սաթևոսյանի պարտիզանական գործունեությունը: 1942–1944 թթ. նա եղել է ջոկատի, ապա բրիգադի հրամանատար: Խորհրդային զորքերի նահանջի ժամանակ մնալով թշնամու թիկունքում, Սաթևոսյանն իր շուրջը հավաքեց զինվորական ծառայողների և կոլտնտեսականների խումբ, որը 1941 թ. աշնանը ձուլվեց Վլադիմիր Արտեմենկոյի պարտիզանական ջոկատի մեջ: 1942 թ. մայիսին մի խումբ պար-

տիզաններ, խաչիկ Մաթևոսյանի հրամանատարությամբ, հաստատվելով Ռուդենսկի շրջանում, դրեցին նոր ջոկատի հիմքը, որը կոչվեց Չապակի անվան:

Ջոկատի առաջին նշանավոր գործողություններից է «աղի օպերացիան», երբ Վալերիանի գյուղում նա կարողացավ գրավել 5 տոննա աղ, որն այնքան կարևոր էր պարտիզանների ու բնակչության համար: 1942 թ. սեպտեմբերի ընթացքում Մաթևոսյանի պարտիզանները Մինսկ–Օսիպովիչի գծում պայթեցրին մեկ երկաթուղային կամուրջ, խորտակեցին զինվորական գնացքը, ոչնչացնելով 150 զինվոր ու սպա, ջախջախեցին Պուխովիչի շրջանի գյուղերից մեկի թշնամու կայազորը, որն ուներ 103 զինվոր ու սպա: Նույն թվականի հոկտեմբեր–նոյեմբեր ամիսներին Մինսկի՝ 2–րդ պարտիզանական բրիգադի համագործակցությամբ պայթեցրին 13 գետային կամուրջ, ջախջախեցին Շացկ քաղաքի և Ուզդա գյուղի կայազորները: Շացկի կայազորի ռումինացի և հունգարացի շատ զինվորներ անցան պարտիզանների կողմը<sup>65</sup> (1943–1944 թթ. խաչիկ Մաթևոսյանի բրիգադը ֆաշիստների դեմ պայքարը շարունակեց Բելոռուսիայի արևմտյան մարզերում):

«Կոմունարներ» անունը կրող ոչ բազմանդամ պարտիզանական ջոկատի հրամանատարն էր Վահան Գրիգորյանը, որին հաջողվել էր փախչել Մինսկի ռազմագերիների ճամբարից: Ջոկատը մարտական գործողություններ էր վարում Մինսկ–Մոսկվա խճուղային և երկաթուղային գծերում՝ խորտակելով թշնամու ավտոշարասյուները և գնացքները: Որոշ ժամանակ ինքնուրույն գործելուց հետո միացավ «Քեռի Կոլյա» բրիգադին<sup>66</sup>:

Կոմունիստ Լազար Բադայանը ղեկավարում էր «Պլանյա» բրիգադի «Պոբեդա» ջոկատը: Այստեղ դասակի հրամանատար էր Նիկոլայ Ջաքարյանը:

Ջոկի հրամանատարից մինչև ջոկատի կոմիսարի ուղին անցավ Ադասի Գրիգորյանը: Նրա պայքարն սկսվեց 1942 թ. ապրիլին «Ջվեգդա» ջոկատում, որը 1943 թ. վերակառուցվեց N 17 Գորեցկյան բրիգադի (Մոզիլյովի մարզ): 1942 թ. օգոստոսին Գրիգորյանի ղեկավարած խումբը խորտակեց ռազմաճակատ մեկնող թշնամու սպայական գնացքը Օրշա–Պոզոդինո գծում<sup>67</sup>:

Խափանարարական գործողություններով էր զբաղվում նաև Իշխան Մալուգարյանի խումբը Խորհրդային Միության հերոս, գեներալ-մայոր Ն. Ֆ. Կարալովի միավորման 210-րդ ջոկատում (մինչև այդ գործել է ինքնուրույն): Նրա մարտական առաջադրանքների առարկան Բոբրույսկ-Օսիպովիչի երկաթուղին էր: Պարզևատրվել է Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշանով և Հայրենական մեծ պատերազմի պարտիզանի 2-րդ աստիճանի մեդալով: Նրա մարտական զինակիցներից էր Անդրանիկ Ջաքարյանը, որը զոհվեց 1944 թ. փետրվարին և հետմահու պարգևատրվեց Կարմիր աստղի շքանշանով ու Հայրենական պատերազմի պարտիզանի առաջին աստիճանի մեդալով<sup>68</sup>:

Կապիտան Յովհաննես Խաչատրյանի պարտիզանությունն սկսվել է Բարանովիչի շրջանում: 1942 թ. նրա ղեկավարած խմբի և Մեծ երկրից այստեղ ռադիոկայանով վայրէջք կատարած դեսանտայինների բազայի վրա ստեղծվեց Չապաևի անվան N 620 ջոկատը, որի հրամանատարն էր Սիխալապ Մակեյը, իսկ կոմիսարը՝ Յովհաննես Խաչատրյանը: 1942 թ. հուլիսին Խաչատրյանը պարզևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով: 1943 թ. ջոկատը վերածվեց N 5 բրիգադի (5 ջոկատներով), որի պայքարը շարունակվեց մինչև Բելոռուսիայի ազատագրումը և Կարմիր բանակի զորամասերին: միանալը: Իսկ այդ ընթացքում Յովհաննես Խաչատրյանի մարտական կենսագրությունը հարստացավ նոր սխրանքներով<sup>69</sup>:

Քսաննեկամյա Վահան Աղաջանյանը 1942 թ. մարտին հինգ ընկերներով ընդհատակից փոխադրվեց Գոմելի մարզի Գորեցկի շրջանի անտառ, որտեղ միացավ «Չեկիստ» բրիգադի մի խումբ պարտիզանների՝ ստեղծելով ինքնուրույն ջոկատ: Նրա հրամանատար նշանակվեց Ֆ. Չեբիկինը, իսկ հետախուզության գծով տեղակալ՝ Վահան Աղաջանյանը: Հրամանատարության առաջադրանքով Աղաջանյանը Դոբրովինսկի շրջանում կազմակերպեց խափանարարական խումբ, որի կազմում կար 22 պարտիզան: Այս վերադարձավ ջոկատ, երբ վերջինս 1942 թ. աշնանը վերակառուցվել էր բրիգադի (հրամանատար՝ Մ. Ն. Իվանով), 4 ջոկատներով: Բրիգադը մարտական գործողություններ ծավալեց Գոմելի մարզում: Վահան Աղաջանյանը ղեկավարում էր բրիգադի

խափանարարական գործողությունները, զբաղվում հետախուզությամբ: «Չարկ եղավ հսկայական քրտնաջան աշխատանք տանել ջոկատում հետախուզական ծառայություն կազմակերպելու համար,— գրել է Աղաջանյանը:— Ամեն մի գյուղում մենք ունեինք մեր կապավորները... Այդ բոլոր բնակավայրերում հաջողվեց մեր կողմը գրավել գերմանական հիմնարկություններում աշխատող մեզ պետքական մարդկանց»<sup>70</sup>: Մեծ էին հաջողությունները մասնավորապես խափանարարական գծով: Վահան Աղաջանյանի խափանարարների մեջ էր գնդացրոդ Աղասի Գրիգորյանը, որն աչքի ընկավ մի շարք առաջադրանքներ կատարելիս<sup>71</sup>:

Գոմելի մարզի ընդհատակային, չեկիստ Գեորգի Խումարյանը 1942 թ. մայիսից թշնամու դեմ պայքարում էր Վորոշիլովի անվան պարտիզանական ջոկատում, որտեղ նա ղեկավարում էր հետախուզության գործը և ընտրվեց կուսակցական կազմակերպության քարտուղար (1943 թ. նա Գոմելի պարտիզանական ջոկատների միավորման շտաբի հատուկ բաժնի պետն էր): Խումարյանի ղեկավարությամբ խափանարարական խումբը առաջին զննարկի խորտակումը կատարել է 1942 թ. ամռանը Ռեչիցա-Վասիլևիչի գծում, աշնանը զննարկ է խորտակել Ժլոբին-Բոբրույսկ գծում: Ֆաշիզմի դեմ մղված պայքարում ունեցած ծառայության համար Գեորգի Խումարյանը պարգևատրվել է Լենինի, Կարմիր դրոշի երկու, Չայրենական պատերազմի երկրորդ աստիճանի, Կարմիր աստղի շքանշաններով և Չայրենական պատերազմի պարտիզանի առաջին աստիճանի մեդալով<sup>72</sup>:

1941 թ. սեպտեմբերին Պոլեսյեի մարզում կազմակերպված պարտիզանական ջոկատում (հրամանատար՝ Լուկաշևիչ, կոմիսար և շտաբի պետ՝ Տոմաշով) Սմբատ Արզումանյանը դասակի, վաշտի հրամանատար էր, ապա ջոկատի հրամանատարի տեղակալ: 1942 թ. դարձավ ջոկատի հրամանատար: Աչքի է ընկել Պտիչ գետի (Պրիպյատի վտակ) երկաթուղային կամուրջի պայթեցման, Գրաբովկա գյուղի մոտ մղված մարտի և այլ գործողությունների ժամանակ: Նրա ղեկավարությամբ պարտիզանական ջոկատը կռիվներ է վարել Կարտուզ-Բերյոզկայի շրջանում<sup>73</sup> (1943 թ. Սմբատ Արզումանյանը դարձավ բրիգադի հրամանատար, իսկ շտաբի պետն էր Սերգեյ Կիտյանը):

Սերգեյ Կիտյանի պարտիզանական պայքարն սկսվել էր Բրեստի մարզի Ստարոսելսկի շրջանում, որտեղ նա կազմակերպել էր փոքր պարտիզանական խումբ, որը 1942 թ. մարտին միացավ Սիխայիլ Չերնյակի խմբին, ձևավորվելով նոր ջոկատ: Այստեղ Կիտյանը գնդացրորդ էր, ապա դասակի հրամանատար, ջոկատի շտաբի պետ: Չերնյակի զոհվելուց (1943 թ. հունվար) հետո կատարել է ջոկատի հրամանատարի պարտականությունները:

Կրտսեր լեյտենանտ Չարություն Սամսոնի Ավետիսյանը Շչորսի անվան ջոկատ էր եկել 1942 թ. ապրիլին ռազմագերիների ճամբարից փախչելուց հետո: Շուտով ջոկատի անձնակազմը բավական աճեց և Ավետիսյանը դարձավ դասակի հրամանատար: Օգոստոսի 3-ին դասակը մասնակցեց Գրոդնոյի մարզի Կոսովո քաղաքի թշնամու կայազորի ջախջախմանը: 1943 թ. հունվարից ջոկատի 2-րդ վաշտի քաղղեկն էր<sup>74</sup>:

Մինչև խորհրդային գործերի հետ միանալը (1944 թ. օգոստոս) Լիտվայում գործել է Նիկոլայ (Աշոտ) Արսենի Սարաբյանի ղեկավարած պարտիզանական ջոկատը: «1942 թ. օգոստոսի վերջերին,— գրել է ջոկատի հրամանատարը,— մենք՝ տարբեր ազգերի ներկայացուցիչներս՝ ռուս, հայ, լիտվացի և թաթար, մեր հայրենիքի եվրոպական մասի հեռավոր անկյունում՝ Արևելյան Պրուսիայի սահմանի վրա հիմնադրեցինք պարտիզանական խումբ<sup>75</sup>: Ջոկատը ոչնչացրել է թշնամու կենդանի ուժը և տեխնիկան, այրել կամուրջներ, ընդունել և տեղ է հասցրել դեսանտ իջած խորհրդային հետախույզներին<sup>76</sup>:

Բելոռուսական, ապա լիտվական պարտիզանների շարքերում է գտնվել Գուրգեն Ավագի Վարդանյանը: Լիտվայում 1942 թ. ամռանը նա սկսել է կռվել Ալեկո-Գրոզնու հրամանատարությամբ գործող 14-րդ ջոկատում, կատարել է հատկապես խափանարարական գործողություններ, անձամբ խորտակելով թշնամու 7 զինվորական գնացք<sup>77</sup>:

Լիտվական պարտիզանների և ընդհատակայինների մարտական գործընկերներից էր Չաբեթնակ Պետրոսի Աբրահամյանը, որն աչքի ընկավ շատ գործողությունների ժամանակ և արժանացավ «խիզախության համար» մեդալի<sup>78</sup>:

Խորհրդային պարտիզանական շարժման մեջ հանրահայտ է Դիմիտրի Մեդվեդևի պարտիզանական միավորումը, որն իրականացնում էր խափանարարական և հետախուզական առաջադրանքներ Արևմտյան Ուկրաինայի տարածքում: Այստեղ է եղել հռչակավոր հետախույզ Նիկոլայ Կուզնեցովը (Պատու Ձիբերտ): Հայ մեդվեդևականներից էր Նապոլեոն Սարգսյանը, որը Կարմիր բանակի շարքերում Հայրենական պատերազմն ավարտեց գնդապետի աստիճանով<sup>79</sup>:

Ուկրաինայի Սումիի մարզի Խինելի, ապա Բոյանսկի անտառներում է մարտնչել զինվորական ծառայողների Վորոշիլովի անվան N 2 ջոկատը. կապիտան Իլարիոն Գուժենկոյի հրամանատարությամբ: Նրա պատերազմի սկզբնական շրջանի զինակիցներից էին լեյտենանտ Սարգիս Վարդազարի Ազարյանը, կապիտան Խաչատուր Բախշիի Սիմոնյանը, բուժակ Սուրեն Սարգիսյանի Սարուխանյանը և հայ ժողովրդի ուրիշ զավակներ<sup>80</sup>:

Սարգիս Ազարյանը և Սուրեն Սարուխանյանը պարտիզաններին էին միացել 1942 թ. փետրվարին: Ազարյանի ղեկավարած վաշտը մասնակցեց Օրյոլի մարզի Սևակի շրջանի մի շարք գյուղերի ազատագրման մարտերին, Ստարայա Գուտա և Չերնատի բնակավայրերի հիտլեյրյան կայազորների ջախջախմանը: Այս ամենի համար վաշտի հրամանատարը պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով: Սարգիս Ազարյանի անձնական սխրանքներից մեկի մասին Բոյանսկի ռազմաճակատի քաղվարչության 4-րդ բաժնի 1942 թ. մայիսի 25-ի զեկույցում ասված է. «Ընկ. Գուժենկոյի հրամանատարությամբ գործող Վորոշիլովի անվան ջոկատի վաշտի հրամանատար ընկ. Ազարյանը հունգարացիների դեմ մղվող մարտերից մեկում, երբ նրանք խուճապահար փախչում էին պարտիզաններից, որոշեց հասնել նրանց սպային: Դա ապրիլի առաջին կեսին էր: Ցեխը խանգարում էր շարժվելուն, ուստի ընկ. Ազարյանը հանելով սապոզները, ոտաբոբիկ ընկավ «լեզվի» հետևից: Չնայած ուժեղ կրակին՝ նա հասավ սպային և նրան քարշ տվեց ջոկատ<sup>81</sup>:

Ապրիլի 25-ին Ազարյանի վաշտը ենթարկվեց թշնամու քանակով տասնապատիկ գերազանց ուժերի հարձակմանը: Չնայած ուժերի այդպիսի խիստ անհավասարությանը՝ վաշտը մտավ մար-

տի մեջ, որի հրամանատարն անձամբ ոչնչացրեց 40 ֆաշիստ և ցրիվ տվեց մինչև 200 հիտլերականների: Խիզախ պարտիզանը շուտով ընդունվեց կուսակցության մեջ, իսկ ընդունում էին, ինչպես նշված է ջոկատի կուսակցական-քաղաքական աշխատանքի մասին հաշվետվության մեջ, թշնամու դեմ մղված մարտերում իրենց դրսևորած մարտիկներին ու հրամանատարներին: Եվ որպես այդպիսի ընդունելության օրինակ, բերված է Սարգիս Ազարյանի անունը<sup>82</sup>:

Նույն հաշվետվության մեջ դրական խոսք է ասված կուսակցության անդամության թեկնածու Սուրեն Սարուխանյանի մասին: Նրա ղեկավարած վաշտը Յամնոյե գյուղի համար մղված կռվում պայքարել է մինչև վերջին փամփուշտը: Վաշտը հետ է մղել քանակապես գերազանց թշնամու հակագրոհները: Գավրիլովա Սլոբոդա գյուղի համար մղված մարտում ևս վաշտը կարողացավ հետ մղել հիտլերականների երեք գրոհները<sup>83</sup>:

Վորոշիլովի անվան N 2 ջոկատի անձնակազմը, բազմանալով, հասավ մինչև 1500 մարդու, ուստի այն վերակազմվեց բրիգադի, որի Բուդյոննու անվան գումարտակի հրամանատարը Սարգիս Ազարյանն էր (1943 թ. ընթացքում Բրյանսկի անտառներում Գուծենկոյի բրիգադը շարունակում էր ծանր մարտեր մղել ֆաշիստների բազմաքանակ պաուժիչ ուժերի դեմ):

Օրյոլի մարզի Նավյայի շրջանում գործում էր Ձերժինսկու անվան պարտիզանական ջոկատը, որի հրամանատարն էր պետական անվտանգության Կարաչևի շրջանային բաժնի պետ Կապիտան Արամայիս Անդրեյի Մեսրոպովը, իսկ կոմիսարը՝ Նոսովը: Ջոկատի 1942 թ. օգոստոս և սեպտեմբեր ամիսների հաշվետվություններում բերված տվյալները վկայում են թշնամու մի շարք գնացքների խորտակման, նրան պատճառած կենդանի ուժի և տեխնիկայի մեծ կորուստների մասին: Պարտիզանները թշնամու վրա հարձակումներ էին գործում Բրյանսկ-Օրյոլ երկաթուղու ու խճուղու և այլ շրջաններում<sup>84</sup>: Դեկտեմբերի առաջին օրերին Ձերժինսկու անվան պարտիզանական բրիգադը Գլուչկովո կայարանի մոտ խորտակել էր ևս մեկ ռազմական գնացք, ջախջախել Բաբանովկա գյուղի հիտլերյան կայագորը<sup>85</sup>:

Տասնյակ հայեր կային Ղրիմի պարտիզանական ջոկատներում ու միավորումներում:

Ղրիմի կենտրոնական շրջաններում գործում էին այն պարտիզանական ջոկատները, որոնք հետագայում միավորվեցին բրիգադների, իսկ վերջիններս՝ Յուսիսային միավորման մեջ:

Կապիտան Գրիգոր Խաչատուրի Սարգսյանը, որը մասնակցել էր Կերչ-Թեոդոսիայի մոտ դեսանտային կռիվներին 1942 թ. սկզբին, վիրավոր վիճակում մնաց էլբալի գյուղում և բուժվելուց հետո օգոստոսին միացավ այն պարտիզանական ջոկատին, որի հրամանատարն էր Ֆ. Ի. Ֆեոդորենկոն: Սկզբում նա հետախույզ էր: Հաջողությամբ կատարել է հեռավոր հետախուզության մի քանի առաջադրանքներ<sup>86</sup>: Հետագայում նա դարձավ դասակի հրամանատար, ապա բրիգադի շտաբի պետ:

Կենտրոնական Ղրիմի պարտիզանական ջոկատներից մեկում 1941 թ. նոյեմբերից մինչև 1943 թ. փետրվարը խմբի հրամանատար էր Արմենակ Յովակիմի Կասյանովը: Բորիս Եգորի Ավետովը պարտիզաններին էր միացել Սևաստոպոլի անկումից հետո (նրա հերոսական պաշտպաններից էր), հետագայում դարձավ 5-րդ պարտիզանական բրիգադի 23-րդ ջոկատի հետախուզական խմբի հրամանատար և քաղղել: Այս նույն ջոկատում կար 26 հայ պարտիզան՝ Սինաս Թորոսի Մարկոսյանը, Անդրանիկ Սարգսի Փոլադյանը, Արտեմ Ստեփանի Վանցյանը, Քերոբ Կիրակոսի Դավթյանը, Միհրան Սկրտչյանը, Սուրեն Սարգսյանը և ուրիշներ: 2-րդ Սիմֆերոպոլյան ջոկատի պարտիզաններից էր Ասյա Գրիգորի Բոյաջյանը, որը գերմանացիների կողմից գնդակահարվեց 1942 թ. փետրվարին: Նույն ջոկատում էին Ալբերտ Նիկոլայի Դադայանը, Խաչատուր Գաբրիելի Տերտերյանը, Եփրեմ Մովսեսի Կոսիյանը և ուրիշներ:

Արմենակ Սիմոնի Պոլադյանին (Օրյոլ) վստահվել էր N 3 ջոկատի հրամանատարությունը, որը գործել է Ղրիմի հյուսիսում: Ջոկատը բազմանդամ դարձավ գերի վերցված սլովակ զինվորների հաշվին, ովքեր այնուհետև համալրեցին գեներալ Լյուդվիգ Սվոբոդայի չեխոսլովակյան կորպուսը<sup>87</sup>:

Ղրիմի հարավային շրջաններում պայքարող պարտիզանական ջոկատների (հետագայում Հարավային միավորում) շարքե-

րում էին գտնվում կապավոր Ռաֆիկ Յակոբի Յայրապետյանը, խափանարարական խմբի ղեկավար Դմիտրի Գրիգորի Կասպարովը (գոհվել է 1941 թ.), Վլադիմիր Ագարյանը և ուրիշներ:

Ղրիմի արևելքում, ինչպես նաև մյուս շրջաններում մարտնչող հայ պարտիզաններից շատերը նախկին ընդհատակայիններ էին (Պրոլյոմ գյուղի և այլ կազմակերպություններից): Ղրիմի պարտիզանական շարժման պատմության մեջ հատուկ տեղ են գրավում Կերչի քարհանքերի անձավների ջոկատները, որոնց շարքերում կային նաև տասնյակ հայեր, նրանց թվում Սուրեն Պետրոսի Յակոբյանը, Աղավարդ Ավետիսի Ղարաջյանը, Յայկազ Դաշյանը, Աշոտ Սանթրոսյանը, Միխայիլ Ծատուրովը, Գեորգի, Իվան և Անդրեյ Ուզանով եղբայրները և ուրիշներ: Սուրեն Յակոբյանը խմբի ղեկավար էր: Մարտերից մեկի ժամանակ նա ծանր վիրավորվեց և գերի վերցվեց: Ֆաշիստները նրանից պահանջեցին ցույց տալ ռազմամթերքի պահեստի տեղը: Քաջարի մարտիկը նրանց ուղեկցեց դեպի ականապատված վայր, ուր բոլորը գտան իրենց վախճանը, զոհվեց նաև ինքը: Տարիներ անց կատարած որոնումների ժամանակ քարհանքերում գտնվել են Աղավարդ Ղարաջյանի կուսակցության անդամության թեկնածուական քարտի քայքայված թերթիկները, որոնց ռենտգենյան ուսումնասիրությունը պարզեց թեկնածուի ով լինելը<sup>88</sup>:

Ինչպես Ղրիմի, այնպես էլ Յյուսիսային Կովկասի պարտիզանական շարժման գործով անմիջապես զբաղվում էր Յյուսիսկովկասյան ռազմաճակատի ռազմական խորհրդի պարտիզանական շարժման հարավային շտաբը (անդամներ՝ կուսակցության Կրասնոդարի երկրկոմի արաջին քարտուղար, երկրամասի պարտիզանական շտաբի պետ Պ. Ի. Սելեզնյով, Ղրիմի մարզկոմի 1-ին քարտուղար, Ղրիմի պարտիզանական շարժման շտաբի պետ Վ. Ս. Բուլատով):

1942 թ. օգոստոսից Յարավային շտաբում որպես հրահանգիչ էր աշխատում Դմիտրի Գրիգորի Վարդանյանը: Նա մեծ գործ է կատարել պարտիզանական կադրերի պատրաստման և նրանց իրենց բազաները հասցնելու ուղղությամբ: Բազմիցս եղել է թշնամու թիկունքում: Յարավային շտաբի վերացումից հետո գործում էր Կրասնոդարի պարտիզանական շարժման շտաբում, իսկ

1944 թ. հունվարից՝ Ղրիմի պարտիզանական շարժման շտաբում՝ որպես նրա նյութատեխնիկական մասի պետ: Պարզևատրվել է մի շարք շքանշաններով ու մեդալներով:

Կրասնոդարի երկրամասի Արմյանսկի շրջանում կազմակերպվել էր Ստ. Շահունյանի անվան ազգային ջոկատ, որը սկզբում ուներ 21, ապա՝ 33 անդամ, նրա հրամանատարն էր շրջսովետի գործկոմի նախագահ Անդրանիկ Մեսրոպի Մալխասյանը, կոմիսարը շրջկոմի 1-ին քարտուղար Սիդորինը, ապա շրջկոմի քարտուղար Սուրեն Սիմոնի Մարգարյանը: Մատակարարման մասի պետն էր կուսշրջկոմի քարտուղար Մատասյանը: Ջոկատը մարտերի մեջ մտավ 1942 թ. օգոստոսի 15-ին և 5 ամիս շարունակ հերոսաբար մարտնչում էր Նևթեգորսկի պարտիզանական փնջի կազմում: Հայ պարտիզանները ջախջախեցին Չայկա բարձունքում վայրէջք կատարած ֆաշիստական դեսանտայիներին, համագործակցելով Կարմիր բանակի հետ, ազատագրեցին Չեննիգովկա և Կուշինկա բնակավայրերը՝ նպաստելով խորհրդային զորամասերի առաջխաղացմանը: 1942 թ. նոյեմբերի 12-ին մղված ծանր մարտում զոհվեց ջոկատի հրամանատար Անդրանիկ Մալխասյանը, նրան փոխարինեց Միսակ Փարթալյանը, ապա՝ Պյոտր Ռեմիզովը: Ջոկատը կռվեց մինչև շրջանի ազատագրումը և Կարմիր բանակին միանալը<sup>89</sup>:

Անապայի շրջանում գործել է «Մայակ» պարտիզանական ջոկատը, որում ընդգրկված էին հայաբնակ Հայկաձոր գյուղի հարյուրից ավելի կոլտնտեսականներ<sup>90</sup>:

Բազմաթիվ հայ պարտիզաններ էին կռվում Կիսլովոդսկի «Լոնոնոսով», Մոզդոկի «Թերեք» և Հյուսիսային Կովկասի շատ այլ ջոկատներում:

Լենինգրադի Լենսովետի անվան տեխնոլոգիական ինստիտուտի ուսանողներ Հմայակ Աղուզումցյանը, Հ. Հարությունյանը և ուրիշներ ժողովրդական աշխարհազորի 4-րդ պարտիզանական զնդի կազմում մասնակցում էին քաղաքի պաշտպանությանը: Թափանցելով թշնամու թիկունքը՝ նրանք կատարում էին հետախուզական առաջադրանքներ և այլ գործողություններ: 1942 թ. մարտի 25-ին հերթական մարտական գործողության ժամանակ Աղուզումցյանը զոհվեց<sup>91</sup>:

Խորհրդային պարտիզանների շարքերում կային նաև բժշկական ծառայության հայազգի աշխատողներ, որոնք ոչ մի ջանք չէին խնայում վիրավոր և հիվանդ պարտիզաններին բուժելու և նրանց մարտական շարք վերադարձնելու համար:

Բժշկական ծառայության փոխգնդապետ Նիկոլայ Գրիգորի Աղաբաբյանը և վիրաբույժ Ա. Ա. Թումանյանը հայտնի դեմքեր էին Բրյանսկի պարտիզանների շրջանում: Երևանի բժշկական ինստիտուտի 1940 թ. շրջանավարտ Աղաբաբյանը ծառայում էր Բարանովիչի կայազորային հոսպիտալում, իսկ պատերազմի ժամանակ բանակային դաշտային հոսպիտալի վիրաբուժական բաժնի օրդինատոր էր: 1941 թ. հոկտեմբերին ընդգրկվեց Օրյոլի մարզի Սուզեմկայի շրջանում գործող «Ձա վլաստ սովետով» պարտիզանական ջոկատի մեջ: Շուտով նա կազմակերպեց հոսպիտալ, որը սպասարկում էր ինչպես պարտիզաններին, այնպես էլ տեղական բնակչությանը:

1942 թ. գարնանը, երբ Բրյանշչինայում ստեղծվել էր պարտիզանական մեծ երկրամաս, ջոկատն աճելով դարձավ բրիգադ, իսկ Աղաբաբյանը նշանակվեց բրիգադի բժշկասանիտարական մասի պետ: Երկու տարվա ընթացքում, ինչպես վկայում է բրիգադի հրամանատար Յա. Կիսելյովը, նա կատարել էր մի քանի հարյուր բարդ վիրահատություն: Մասնակցել է նաև մարտերի, կռվի դաշտից դուրս բերել տասնյակ վիրավոր պարտիզանների (Տարասովկա, Շենյակինո գյուղերի համար մղված մարտերում, Ուստար գյուղի ֆաշիստական կայազորը ջախջախելու ժամանակ և այլ կռիվներում): Նիկոլայ Աղաբաբյանի ծառայությունները գնահատվել են Կարմիր աստղի շքանշանով և Հայրենական պատերազմի պարտիզանի առաջին աստիճանի մեդալով<sup>92</sup>:

Բժշկական ծառայության կապիտան Արտեմ Յովսեփի Ակոպովը Ղրիմում բուժում էր «Ձա պոբեդու» ջոկատի վիրավոր պարտիզաններին: Ղրիմի 19-րդ պարտիզանական ջոկատում էր գտնվում բժիշկ Իվան Սարգսի Իսրայելյանը, ծովափնյա պարտիզանական ջոկատներում՝ բժշկական ծառայության կապիտան Սիքայել Յունանի Անանյանը, արևելյան շրջաններում՝ Սամվել Ավագի Ավագյանը: Իսկ վիրաբույժ Արամ Թումանյանը ծառայում էր Չապակի անվան բրիգադում: Նրա հնուտ ձեռքերի շնորհիվ

կյանք ստացան Գլեբովը և շատ ուրիշ ծանր վիրավոր պարտիզաններ<sup>93</sup>:

Այսպիսով՝ Չայրենական մեծ պատերազմի առաջին իսկ օրերից հայ ժողովրդի գավակները ներգրավվեցին թշնամու թիկունքում կազմակերպված ու ծավալված համաժողովրդական պայքարի մեջ: 1941–1942 թթ. խորհրդային վրիժառուների պայքարը դարձավ լուրջ մարտական ուժ, որը մեծ օգնություն էր Կարմիր բանակի համար պատերազմի դժվարին ժամանակաշրջանում, երբ նա հարկադրված էր նահանջել և թշնամուն թողնել խորհրդային Միության տարածքի մի մասը:

Արդեն 1942 թ. վերջին թշնամու թիկունքում խորհրդային մարդկանց պայքարը լուրջ սպառնալիք էր ստեղծել գերմանական ֆաշիստների համար, որի մասին խոստովանում էին նաև իրենք: Ուստի 1942 թ. դեկտեմբերի 16--ին գերմանական զինված ուժերի գերագույն հրամանատարությունը «խիստ գաղտնի» հրահանգ արձակեց «Բանդաների դեմ պայքարելու մասին»: Ընդունվում էր, որ խորհրդային «բանդաներում» ներգրավված են «ֆանատիկ, կոմունիստական պատրաստություն ունեցող մարտիկներ, որոնք կանգ չեն առնում ոչ մի բռնի միջոցի առաջ»: Չարկավոր է դիմել ամենախիստ միջոցների, ասված է հրահանգում, այլապես առաջիկայում անհնար կդառնար եղած ուժերով «արմատախիլ անել այդ ժանտախտը»<sup>94</sup>:

ԲԵԿՄԱՆ ՏԱՐՎԱ ՊԱՅՔԱՐՈՒՄ

Հայրենական պատերազմի ընթացքում արմատական բեկում ստեղծելու մեջ իրենց ավանդը ներդրեցին նաև խորհրդային պարտիզանները: 1943 թ. ավելի աճեց պարտիզանական ջոկատների ու նրանց անդամների թիվը, պայքարի թափն ու մարտունակությունը: Պարտիզանական պայքարն ավելի սերտորեն էր կապվում Կարմիր բանակի գործողությունների հետ: Արմատական բեկման տարում խորհրդային վրիժառուների կռիվն ընդունեց ավելի կազմակերպված բնույթ, իսկ նրա ուժգնությունը հասավ բարձրակետի:

Թշնամու թիկունքում համաժողովրդական դիմադրության զարգացման համար մեծ աշխատանք կատարեցին կուսակցական կազմակերպությունները, հատկապես ռազմակալած շրջաններում գործող գաղտնի կուսակցական կոմիտեները: Կարևոր նշանակություն ունեցավ 1942 թ. սեպտեմբերին Մոսկվայում հրավիրված խորհրդակցությունը, որին մասնակցում էին պարտիզանական միավորումների ու ջոկատների ականավոր հրամանատարներ: Խորհրդակցությունը քննարկեց համաժողովրդական պայքարի զարգացման խնդիրները և մշակեց համապատասխան միջոցառումներ: Պարտիզանական շարժման կենտրոնական շտաբին կից ստեղծվեց Քաղաքական վարչություն (հետո կոչվեց Քաղաքական բաժին), որը համակարգում էր ռազմակալված շրջաններում տարվող քաղաքական-զանգվածային աշխատանքը: 1942 թ. դեկտեմբերին ՈՒԿ(բ)Կ անլեգալ Կենտկոմը քննարկեց Ուկրաինայի գրավված տարածքներում կուսակցական աշխատանքի մասին հարցը: Այդ ուղղությամբ մեծ աշխատանք

էին կատարում անլեգալ Կենտկոմի անդամներ Ս. Ա. Կովպակը, Ս. Վ. Ռուդնևը, Ա. Ն. Սաբուրովը և ուրիշներ<sup>95</sup>:

1943 թ. հուլիսին ՌԻԿ(Բ)Կ Կենտկոմը միջոցառումներ մշակեց քաղաքային շրջաններում և Արևմտյան Ուկրաինայում հակաֆաշիստական պայքարը զարգացնելու ուղղությամբ<sup>96</sup>: Կուսակցական-պարտիզանական պայքարի բորբոքման հարցը հանգամանորեն քննարկեց ԲԿ(Բ)Կ Կենտկոմի 1943 թ. փետրվարյան պլենումը: Հուլիսին նա անդրադարձավ Արևմտյան Բելոռուսիայում պայքարի կազմակերպման հարցին<sup>97</sup>:

1943 թ. կեսերին թշնամու զավթած շրջաններում գործում էր կուսակցության 24 մարզային, 222 օկրուգային, քաղաքային ու շրջանային կոմիտե և միայն Ուկրաինայում ու Բելոռուսիայում՝ 800 սկզբնական կուսակցական կազմակերպություն<sup>98</sup>:

Հենվելով թշնամու թիկունքում աճող կուսակցական աշխատանքի, կուսակցական կոմիտեների ու կազմակերպությունների լայն ցանցի վրա՝ կոմունիստական կուսակցությունը ավելի ուժեղացրեց և օպերատիվ դարձրեց պարտիզանական շարժման ղեկավարման գործը:

Աշխուժացավ կոմերիտական կազմակերպությունների գործունեությունը: Միայն Ուկրաինայում գործում էին կոմերիտմիության 12 մարզային, 265 քաղաքային ու շրջանային կոմիտե և 670 կոմերիտական-երիտասարդական կազմակերպություն<sup>99</sup>:

Կուսակցական-քաղաքական աշխատանքի ուժեղացման անմիջական արդյունքը եղավ համաժողովրդական պայքարի չտեսնված ալիքը ռազմագրավված շրջաններում: Այդ մասին են վկայում նաև հետևյալ թվական տվյալները: Եթե 1942 թ. վերջին — 1943 թ. սկզբին թշնամու թիկունքում զենքը ձեռքին մարտնչում էր 120 հազար պարտիզան, ապա 1943 թ. վերջին միայն Ուկրաինայում (առանց ազատագրված շրջանների, որտեղ հաշվվում էր 15 հազար պարտիզան) կռվում էին 43,5 հազար, իսկ Բելոռուսիայում (առանց ազատագրված շրջանների 30,8 հազար պարտիզանների)՝ 122,6 հազար վրիժառուներ<sup>100</sup>: Ընդհանուր առմամբ արմատական բեկման տարվա ընթացքում զինված և հաշվի առնված պարտիզանների թիվը աճել էր ավելի քան երկու ան-

գամ<sup>101</sup>: 1943 թ. վերջին գինված պարտիզանների թիվը կազմում էր 250 հազար<sup>102</sup>: Համաժողովրդական պայքարն ընդգրկեց ամբողջ ռազմակալված տարածքը, ավելացավ նաև պարտիզանական ջոկատների ու միավորումների թիվը:

Ստալինգրադի ճակատամարտի և Կարմիր բանակի 1942–1943 թթ. ձմեռային մյուս գործողությունների ժամանակ, երբ Վոլգայի ափերին, Ղոնի շրջանում, Հյուսիսային Կովկասում և այլուր գերմանաֆաշիստական զորքերը ջախջախիչ հարվածներ ստացան, արմատական բեկում կատարվեց պատերազմի ընթացքի մեջ և սկսվեց թշնամու զանգվածային վճռումը խորհրդային հողից, իրենց գործողություններն ուժեղացրին Բրյանսկի անտառների, Ղրիմի, Հյուսիսային Կովկասի, Բելոռուսիայի, Ուկրաինայի և այլ շրջանների ժողովրդական վրիժառուները:

1943 թ. պարտիզանական պայքարը կենտրոնացավ գլխավորապես թշնամու հաղորդակցության ուղիները և այլ ռազմական օբյեկտները շարքից հանելու վրա: «Ռելսային պատերազմը» (նրա նրկորդ փուլը՝ «Կոնցերտ»), որ ծավալվեց հիմնականում 1943 թ. երկրորդ կեսին, լուրջ կերպով խափանեց թշնամու ուժերի մատակարարումը և մեծ օգնություն ցույց տվեց Կարմիր բանակի ամառային (Կուրսկի գործողություն) և ամառային–աշնանային հարձակողական գործողություններին: «Ռելսային պատերազմի» հետ միաժամանակ, երբ խորտակվում էին ֆաշիստների ռազմական գնացքները, օդ էին ցնդում կամուրջները, ջախջախիչ հարվածներ էին հասցվում նաև թշնամու կայազորներին և ռազմական նշանակություն ունեցող այլ օբյեկտների:

Պարտիզանական պայքարի ձևերից էին ռազմերթերը: Մի շարք ուկրաինական, բելոռուսական և այլ միավորումներ (Ս. Ա. Կովպակ, Ա. Ն. Սաբուրով, Մ. Ի. Նաումով, Յա. Ի. Մելնիկ, Վ. Ե. Սանուտին, Ֆ. Ֆ. Տարանենկո, Ս. Վ. Գրիշին և ուրիշներ), երթեր կատարեցին թշնամու խոր թիկունքում, որոնց շնորհիվ շարքից հանվում էին ֆաշիստների ռազմական օբյեկտները, ծավալվում էր քարոզչական–քաղաքական աշխատանքը խորհրդային բնակչության շրջանում, ընդհատակյա և պարտիզանական պայքարի մեջ էին ներգրավվում նորանոր ժողովրդական զանգվածներ:

Խորհրդային պարտիզանների անձնուրաց գործունեության արդյունքն էր ընդարձակ տարածքների ազատագրումը: 1943 թ. մեծ պարտիզանական երկրամասեր կային Բելոռուսիայում, Ուկրաինայում, Լեհինգրադի, Կալինինի, Օրյոլի մարզերում: Դրանց ընդհանուր տարածությունը 1943 թ. ամռանը հասնում էր 200 հազար քառակուսի կիլոմետրի կամ հավասար էր Անգլիայի, Դանիայի և Բելգիայի ամբողջ տարածքին<sup>103</sup>: Այդ տարածքների մեծ մասը, որտեղ վերականգնվել էր խորհրդային իշխանությունը, պարտիզանները կարողացան պահել մինչև Կարմիր բանակի հասնելը:

Շարունակում էր զարգանալ ընդհատակայինների պայքարը: Ֆաշիստական անասելի ահաբեկությունը, խոշտանգումներն ու գնդակահարությունները, «Նոր կարգը» ոչ միայն չընկճեցին խորհրդային մարդկանց կամքը և նվիրվածությունը հայրենիքին, այլև ավելի բորբոքեցին նրանց ատելությունը ֆաշիստների նկատմամբ և խտացրին ընդհատակայինների ու պարտիզանների շարքերը:

Ռուս, ուկրաինացի, բելոռուս պարտիզանների շարքերում աճեց նաև խորհրդային Միության մյուս ժողովուրդների զավակների, այդ թվում հայերի թիվը: Վերջիններիս ճնշող մեծամասնությունը ռազմագերիների ֆաշիստական ճամբարներից և լեզեռնից փախածներ էին, ընդհատակյա պայքարի մասնակիցներ: Առաջին անհաջող փորձից հետո, որի մասին նշվել է վերևում, գերմանական ֆաշիստներն այլևս չհամարձակվեցին հայ ռազմագերիներին օգտագործել ռազմաճակատում: Հիտլերը չէր սխալվել, երբ հայտարարել էր. թե ինքը հայերին չի զստահում: Դրա համար նրանք 1943 թ. ընթացքում և հետագայում տվեցին նոր ապացույցներ ինչպես խորհրդային Միության տարածքում, այնպես էլ Ֆրանսիայում և այլ երկրներում: Հայերն ամենուրեք ապստամբում էին, կազմակերպում փախուստներ, միանում պարտիզաններին և դիմադրության շարժման մարտիկներին, գերմանացիների տված զենքն ուղղում հենց նրանց դեմ: «Ֆաշիստները, — ինչպես նշել են Լեհինգրադի մարզում պարտիզանական պատերազմի ակտիվ մասնակիցներ ու հրամանատարներ Գ. Ի. Եֆիմովը և Գ. Գ. Սվետլովը, — ռազմագերիների համակենտրոնացման

ճամբարներում և բարաքներում գործադրելով տեռորը, քաղցը, կախաղանը և զնդակահարությունը, փորձում էին գերիներից ստեղծել ազգային զորամիավորումներ և հարկադրելով նրանց ստիպել ծառայելու իրենց: Խորհրդային մարդիկ, ճամբարներից դուրս արժնելու ուրիշ ելք չունենալով, լեզեոնների մեջ տեսնում էին դեպի պայքար տանող ուղին: Համաձայնվելով գնալ լեզեոն՝ նրանք հնարավորություն էին ստանում անցնելու փշալարերից այն կողմ, այնտեղ ստանալ ու զենք, գտնելու պարտիզաններին և նորից նետվելու պայքարի մեջ»<sup>104</sup>:

Ընդհատակյա հակաֆաշիստական կազմակերպություններ են գործել տարբեր ճամբարներում և ազգային լեզեոնի զորամասերում: Այդպիսի կազմակերպություն կար նաև Լոխվիցայի (Պոլտավայի մարզ) ճամբարում, որի անդամներից էին Հակոբ Չոբանյանը, Արտեմ Սաղունյանը, Պերճ Աղաջանյանը, Վաղարշակ Գոգորյանը, Հովակ Հովակիմյանը, Երվանդ Եղիազարյանը և ուրիշներ: Ընդհատակայինները մղում էին հակաֆաշիստական քարոզչություն, նախագծում փախուստի ծրագրեր և այլ միջոցառումներ: Չնայած զգուշությանը և գաղտնապահությանը, որ պահպանում էին ընդհատակայինները, այնուամենայնիվ գտնվեցին դավաճաններ ու լրտեսներ, որոնք մատնեցին խորհրդային հայրենասերներին: Ֆաշիստները գնդակահարեցին ընդհատակի մի խումբ ղեկավարների, մի քանի տասնյակ մարդու նետեցին համակենտրոնացման ճամբարները, իսկ ռազմագերիներին ուղարկեցին տարբեր վայրեր ֆիզիկական ծանր աշխատանքների: Գաղտնի կազմակերպության անդամների գործունեությունը շարունակվեց նաև նոր վայրերում՝ Բրյանշչինայում, Կալինինի մարզում և այլուր:

Պարտիզանական պայքարի այս և այլ վայրերում, ուր փոխադրվեցին հայ ռազմագերիները, նպաստավոր պայմաններ էին ստեղծվում ընդհատակայինների պլաններն իրականացնելու համար: Նշենք նաև այն մասին, որ խորհրդային պարտիզաններն իրենց հերթին աշխատում էին մերձենալ և շփում ունենալ ռազմագերիների հետ՝ նրանց իրենց կողմը գրավելու համար, օգնելու նրանց փախուստներին:

1943 թ. փետրվարին Լոխվիցայից հայ ռազմագերիների մի քանի վաշտեր տեղափոխվել էին Բոյանշչինա՝ Կլետնյա և Ակուլիչի, պարտիզանների հարձակումներից Կլետնյա-ժուկովկա երկաթուղին պաշտպանելու համար: Տեղական ընդհատակայիններին, որոնք պարտիզանների հետախույզներն էին, հաջողվել էր հայտնաբերել, որ վաշտերում գործում է կոմունիստներից բաղկացած ընդհատակ, որը նպատակ ունի միանալ պարտիզաններին: Ընդհատակյա կազմակերպության ղեկավար կոմիտեի մեջ էին Զակոր Չոբանյանը, Վաղարշակ Գոգորյանը, Վարդգես Շահբազյանը, Ստեփան Բատալովը և Կորյուն Թորոսյանը: Այդ մասին մարտի սկզբին հետախույզները տեղեկացրին պարտիզանական բրիգադի հրամանատարությանը՝ խնդրելով ցուցումներ և թույլտվություն՝ «հայերի մեջ աշխատանք տանելու և նրանց ընդհատակյա կազմակերպության ղեկավարների հետ ուղղակի շփում ունենալու համար»<sup>105</sup>: Բրիգադի հրամանատարությունը իր հետախույզներին հրահանգավորեց, թե ինչպես կազմակերպել իրենց աշխատանքը:

Մարտի կեսերին կայացած պարտիզանների հետախույզների և հայ ընդհատակայինների հանդիպումից երկուստեք պարզ դարձավ հայերի փախուստի մտադրությունը և շրջապատում պարտիզանների առկայությունը: Մարտի 18-ին Պավլինկի գյուղում տեղի ունեցավ հանդիպում ընդհատակայինների ղեկավար՝ Զակոր Չոբանյանի և պարտիզանների հրամանատարության միջև, որտեղ պայմանավորվածություն ձեռք բերվեց հայ ռազմագերիների կողմից ապստամբություն կազմակերպելու և պարտիզաններին միանալու վերաբերյալ: Ընդհատակայինների կոմիտեն քննարկեց ապստամբության պլանը և որոշեց յուրաքանչյուրի անելիքը: Կարևոր նշանակություն ուներ գերմանացի հրամանատարների և նրանց շտաբի վերացումը, որի համար վերջինս, ինչպես նաև Կլետնյայի երկաթուղային կամուրջը և պարետատունը ականապատվելու էին (ականներ տրամադրելու էին պարտիզանները): Անհրաժեշտության դեպքում օգնության էին գալու պարտիզանները՝ հարձակում գործելով գերմանական կայազորի վրա:

Ապստամբության ժամանակը որոշվել էր մարտի լույս 21-ի գիշերը: Սակայն որոշ ընդհատակայիններ պարտիզանների հետ

համաձայնեցրին նոր ժամկետ, այն հետաձգելով մեկ օրով, պատճառաբանելով նախապատրաստության ժամանակի սեղմ լինելը: Ժամկետի այդպիսի փոփոխությունը ճակատագրական նշանակություն ունեցավ ապստամբության համար, և պլանը մշակված ձևով իրականացնել չհաջողվեց: Ըստ երևույթին հիտլերականներին հաջողվել էր իմանալ հայերի մտադրության մասին, և նրանք շտապեցին մարտի 21-ին գնացքով Կլետնյա բերել ավտոմատավորների օժանդակ ուժերի մեկ զումարտակ, որը շրջապատեց քաղաքը, հսկողություն սահմանեց ճանապարհներին և բոլոր կարևոր օբյեկտներում: Նույնը կատարվեց նաև Ակուլիչիում, որտեղ գտնվում էր հայ ռազմագերիների մյուս մասը:

Ստեղծված պայմաններում Չոբանյանը և նրա օգնականները ստիպված եղան փոխել ապստամբության պլանը և ընդհատակայիններին ցուցում տվեցին «գտնել հարմար պահ և խմբերով ճանապարհ հարթել դեպի անտառ՝ չսպասելով նշանակված ժամին, քանի որ մինչև այդ, եթե մնան Կլետնյայում, կծերբակալվեն կամ կսպանվեն»<sup>106</sup>: Մարտի 21-ի երեկոյան Կլետնյայից հեռանալ հաջողվեց հայ ռազմագերիների մի քանի խմբերի: Ֆաշիստ ավտոմատավորները կրակ բացեցին, որին փախուստի դիմողները պատասխանեցին դարձյալ կրակոցներով և հեռացան դեպի անտառ: Ավելի մեծաթիվ էին Ակուլիչիից փախչողները, որոնց ղեկավարում էին Կորյուն Թորոսյանը, Վարդգես Շահբազյանը, Վիկտոր Մանուչարյանը, Մանուկ Գևորգյանը և ուրիշներ: Այստեղ տեղի ունեցավ փոխհրաձգություն, որի ժամանակ զոհեր եղան երկու կողմից էլ: Պարտիզաններին միացան ընդամենը 76 հայեր, որից 50-ը Ակուլիչիից<sup>107</sup>: Հայ մարտիկներին իր շարքերն ընդունեց Օրյոլի մարզի (Բոյանշչինայի) Կլետնյայի 1-ին պարտիզանական բրիգադը:

Գերմանացիները զինաթափեցին մնացած ռազմագերիներին, շատերը նետվեցին համակենտրոնացման ճամբարներ, ոմանք գնդակահարվեցին: Հիտլերականները ձերբակալեցին և գնդակահարեցին ակտիվ ընդհատակայիններ Ղանթարջյանին, Սարգսյանին և ուրիշների, ինչպես նաև նրանց և պարտիզանների միջև կապ հաստատած տեղի ընդհատակյա կազմակերպության անդամներ և հետախույզներ Զինա Լոնակովային, Ուլյանա Վոլոդի-

նային, Լիդա Իսայենկովային, Ալեքսեյ Բաբիչևին և այլ հայրենասերների:

Այսպիսով՝ հայ ռազմագերիների մեջ ծավալված ընդհատակյա պայքարը հանգեցրեց ապստամբության, նրանց մի մասի հաջող փախուստին խորհրդային պարտիզանների կողմը և ռազմագերիների վաշտերի (մեկ .գումարտակ) քայքայմանը, որոնք ֆաշիստների համար դադարեցին գոյություն ունենալ որպես մարտական ուժ:

Ֆաշիստների հետ նույն ձևով վարվեցին նաև հայ ռազմագերիների այլ ստորաբաժանումներ ևս:

Լոխվիցայից մի այլ ստորաբաժանում ուղարկվել էր Կալինինի մարզի Նովոռոժն քաղաքը, որտեղ գերմանացիների հսկողության տակ նրանք պետք է պարտիզանների հարձակումներից պաշտպանեին ճանապարհներն ու կամուրջները: Հայ ընդհատակայիններին Գրիբովո գյուղում հաջողվեց գտնել պարտիզանների հետախույզներին՝ Տոյա Օստրոգորսկուն և Կլավա Գրիչենկովային: Նրանք Նովոռոժնի գաղտնի կազմակերպության անդամներից էին, որի ղեկավարն էր ուսուցչուհի Ջոյա Բրեչաուսկը: Նրանց միջոցով կապ ստեղծվեց պարտիզանների հետ, որոնց տեղյակ պահվեց հայերի փախուստի տրամադրության մասին: Մինչև տեղի կունենար դրա կազմակերպումը և իրականացումը, պարտիզանները հայ ռազմագերիներին տրամադրեցին պրոպագանդիստական նյութեր՝ «Պրավդա», «Լենինգրադսկի պարտիզան» թերթերը, թռուցիկներ, Սովինֆորմբյուրոյի հաղորդագրություններով, որոնք ավելի ակտիվացրին ընդհատակյա հայրենասիրական աշխատանքը հայկական վաշտում: Այդ ամենը տեղի էր ունենում 1943 թ. հուլիս ամսին: Վերջապես կայացավ պարտիզանների և ընդհատակի ներկայացուցիչներ Ջավեն Համբարձումյանի ու Օլգա Իվանովայի հանդիպումը, որտեղ մշակվեց փախուստի պլանը: Պարտիզանները հայերին դիմավորելու էին Ալտունյան անտառում<sup>108</sup>:

Շուտով, ինչպես վկայում են որոշ հեղինակներ (պարտիզան հրամանատարներ), 40 հայ ռազմագերիներ, ոչնչացնելով գերմանացի հրամանատարներին, զինված փախան Նովոռոժնի կայազորից և հետախույզների ուղեկցությամբ հասան պայմանավորված վայրը<sup>109</sup>: Այլ փաստաթղթերի համաձայն՝ «1943 թ. հուլի-

սի 31–ին ֆաշիստական գերությունից փախան Կարմիր բանակի 18 նախկին մարտիկներ ու հրամանատարներ: Թողնելով Նովոժնևի կայազորի զորանոցը՝ մարտիկների մի վաշտ, Սաղունյանի գլխավորությամբ, զենքը ձեռքին անմիջապես անցավ պարտիզանների կողմը՝ ցանկանալով ակտիվորեն շարունակել պայքարը հիտլերյան ավազակների դեմ<sup>10</sup>: Հետագայում տեղի ունեցան նոր փախուստներ: Միայն 1943 թ. հոկտեմբերին փախան հայ ռազմագերիների 2 խմբեր, ընդամենը 30 մարդ, որոնք առաջինների հետ միասին ընդգրկվեցին Լենինգրադի մարզի 3–րդ պարտիզանական բրիգադի կազմում:

Հայ ռազմագերիների ավելի մեծ խմբի և ավելի հաջող ու կազմակերպված փախուստ կատարվեց Ուկրաինայի Ժիտոմիրի մարզում, որը դարձյալ հայ ընդհատակայինների և խորհրդային պարտիզանների աշխատանքի արդյունք էր:

1943 թ. օգոստոսին Լեհաստանի Պուլավի քաղաքից հայ ռազմագերիների մեկ գումարտակ ճանապարհվեց դեպի Ուկրաինա՝ Ժիտոմիրի մարզ, որտեղ ընդհատակայինների գործունեությունը ավելի ակտիվացավ: Լեհաստանում գոյություն ուներ և գործում էր հայ ռազմագերիների հակաֆաշիստական հայրենասիրական ընդհատակյա կազմակերպություն, որում ընդգրկված էին Կարմիր բանակի կոմունիստ սպաներ և կոմիսարներ: Նրա ղեկավարներից էին Ստեփան Յաղջյանը, Ալեքսանդր Ղազարյանը, Դավիթ Մինասյանը, Բարթուղ Պետրոսյանը, Ավետիս Կարապետյանը և ուրիշներ: Այն ինչ գաղտնի կազմակերպությանը չհաջողվեց իրականացնել Լեհաստանում, հաջողվեց այնտեղ, ուր նրանց փոխադրեցին:

Երբ հիշյալ գումարտակը փոխադրող երկու գնացքները կանգ առան Նովոգրադ–Վոլինսկիի երկաթուղային կայարանում, ընդհատակայինները հանդիպեցին՝ պայմանավորվելով հիտլերականների դեմ ապստամբելու և պարտիզաններին միանալու ժամկետի վերաբերյալ՝ ընտրելով սեպտեմբերի 20–ը: Հետո, ինչպես կտեսնենք, հարկ եղավ խախտել գումարտակի 3 վաշտերի համար նշանակված ընդհանուր ժամկետը: Սեպտեմբերի առաջին օրերին 2–րդ վաշտը հասավ Ժիտոմիրի մարզի Պոտիևկա շրջանային կենտրոն, իսկ մյուսները՝ Կորոստիշև և Ուդոմիշև (նույն

մարզում): Նրանց այստեղ բերելը հետապնդում էր նույն նպատակը, ինչ նախորդ դեպքերում: Բացի այդ, հացահատիկի բերքահավաքի ժամանակն էր, իսկ հիտլերակազմները, չնայած իրենց ստեղծած «Նոր կարգին», ավելի ու ավելի «մեծ դժվարությունների էին հանդիպում իրենց կողոպուտի իրականացման մեջ»: Այդ ժամանակ մարզում գործում էին Մ. Ի. Նաումովի, Ա. Ն. Սաբուրովի և ուրիշների ղեկավարած միավորումները և տեղական պարտիզանները: Ժիտոմիրի մարզի իրադրության մասին ահա թե ինչ է խոստովանել Ուկրաինայի գլխավոր կոմիսար, ուկրաինական ժողովրդի դահիճ Էրիխ Կոխը. «Այս տարի (1943 թ.) մեզ մոտ ոչ միայն կրճատվել են ցանքատարածությունները, այլև փոխվել են բերքահավաքի պայմանները: Եթե մենք 1942 թ. հավաքեցինք 69 հազար ցենտներ, ապա այս տարի մենք ունեցանք միայն 4,5 հազար ցենտներ հացահատիկ: Մարզում ես կարող եմ կարգադրություններ անել միայն երեք շրջանում... Ժիտոմիրի գեբիտը կարելի է համարել բոլշևիկյան կղզի»<sup>111</sup>:

Ռազմագերիների Պոտիևկայում տեղակայված վաշտը սկզբից ևեթ իրեն զգում էր գրեթե դրության տերը, նրա ակտիվ օգնությամբ ժողովուրդը ավելի համարձակորեն էր մենգադուլի ենթարկում թշնամու միջոցառումները: Այդպես վարվեցին Ներաժ և Դուբովիկ գյուղերի գյուղացիները, ուր գերմանացիները վաշտը տարել էին հացահատիկը զավթելու համար: Վաշտի գերմանացի հրամանատարի կարգադրությունները անտեսվում էին: Պոտիևկայի հիտլերյան կայազորը, որը բաղկացած էր 50 գերմանացի զինվորից և 60 ոստիկանից, ավելի ու ավելի էր չեզոքացվում: Գերմանացի հրամանատարները փորձեցին ռազմագերիներին հարձակման ուղարկել Դուբովիկը գրաված պարտիզանների դեմ, իսկ հայերը կրակեցին միայն օդում «խորհրդային մարտիկները,— գրել է խորհրդային Միության հարոս, գեներալ—մայոր Մ. Ի. Նաումովը,— ապրում էին միայն մեկ երազանքով՝ դուրս պրծնել համակենտրոնացման ճամբարից և վերադառնալ խորհրդային ժողովուրդների ընտանիքը, զենքն ուղղել ֆաշիստների դեմ, պաշտպանել սեփական պատիվը և արժանապատվությունը»<sup>112</sup>: Գերմանացիների համար ռազմագերիների անհնագանդությունը դառնում էր ակնհայտ, ուստի նրանք դիմեցին հա-

մապատասխան քայլերի: Ժիտոմիրից Պոտիևկա ժամանեցին ռազմագերիների գումարտակի գերմանացի հրամանատարը և բժիշկը, որոնք ընդհատակային Արամայիս Յովսեփյանին առաջարկեցին իրենց հետ միասին բուժման համար մեկնել Ժիտոմիր: Բուժումը պատրվակ էր Յովսեփյանին ձերբակալելու և հաջորդ քայլերին դիմելու համար: Իրադրությունը ճիշտ գնահատեցին ընդհատակայինները և չհամաձայնվեցին, որ Յովսեփյանը հեռանա իրենցից: Դեպքերի այսպիսի ընթացքը վաշտի ընդհատակայիններին ստիպեց անմիջապես, այսինքն՝ սեպտեմբերի 16-ի գիշերը, նախատեսված ժամկետից շուտ իրականացնել ապստամբության պլանը: Մշակվեց հետևյալ մարտավարությունը: Գերմանացիներին խաբելու համար մի խումբ ռազմագերիներ, որ նախապես գյուղից պետք է դուրս գային, ուղիղ կեսգիշերին «հարձակվելու էին» գյուղի վրա, իսկ վաշտը զինվելով «հակահարձակման» էր անցնելու «պարտիզանների» դեմ: Այս մարտավարությունը մտածված էր խելացի և իրեն լրիվ արդարացրեց: Գիշտ ժամին լսվեցին «պարտիզանների» կրակոցները: Վաշտը արագորեն զինվեց և դիմեց գրոհի: Մինչև գերմանացիները ուշքի կգային, մոտ 250 հայ ռազմագերիներ, իրենց հետ ունենալով 15 զնդացիր, 3 գումարտակային ականանետ և այլ սպառազինություն, հեռացան Պոտիևկայից դեպի հյուսիս, դեպի պարտիզանները: Նույն օրը տեղի ունեցավ նրանց հանդիպումը ուկրաինական հեծյալ պարտիզանների ջոկատների միավորման հրամանատարության հետ: Ուկրաինական պարտիզանները իրենց շարքերն ընդունեցին ֆաշիստական գերությունից ազատված հայ ժողովրդի զավակների սմենամեծ խմբին<sup>113</sup>:

Հիշյալ միավորման փաստաթղթերում տեղեկություններ կան այն մասին, թե պարտիզաններն ինչպիսի աշխատանք էին ծավալել ֆաշիստական կառավարողները քայքայելու համար: Դրանցից մեկուն ասված է, որ միավորմանը հաջողվեց «քայքայել Ժիտոմիրի, Կորոստենի, Կորոստիշևի, Ռադոմիշլի հայ լեզեոնականների կայազորները, իսկ Պոտիևկայի կայազորը ամբողջ կազմով միացավ պարտիզաններին<sup>114</sup>: Մի այլ պաշտոնական փաստաթղթում կարդում ենք. «Պարտիզանական միավորման գործակալության միջոցով հաջողվեց հասնել Պոտիևկայի և Մալինի ոստիկա-

նությունների լրիվ քայքայմանը, որոնք ամբողջությամբ, զենքով ու ռազմամթերքով անցան պարտիզանների կողմը: Հաջողվեց մասամբ քայքայել ժիտոմիրի և Կորոստենի ոստիկանական կայազորները, որոնք իրենց անվստահության համար զինաթափվեցին գերմանացիների կողմից և ցրվեցին: Գործակալության միջոցով կապ հաստատվեց պարտիզանների դեմ պայքարելու համար Պոտիևկայի շրջան ժամանած հայ լեզեոնականների հետ, որոնք հետագայում լրիվ կազմով և ամբողջ զենքով ու ռազմամթերքով անցան մեր միավորման կողմը»<sup>15</sup>: Պոտիևկայի ռազմագերիների և պարտիզանների միջև կապը իրականացրել էին հետախույզներ Եվա և Ժենյա Մարտինենկո քույրերը: Միավորման կազմում հայերից կազմակերպվեց ինքնուրույն պարտիզանական ջոկատ:

Մի շաբաթ անց ջոկատին միացան 12 պարտիզաններ, որոնք ավելի վաղ փախել էին Ռադոմիշլից, Արմեն Ղուկասովի ղեկավարությամբ: Այստեղից ազատվել էին ընդամենը 25 ռազմագերիներ, որոնք ոչնչացնելով գերմանացի հսկիչներին և զինվելով նրանց ավտոմատներով ու ատրճանակներով, Կողրայի անտառներում հանդիպել էին Մակարովի ղեկավարած պարտիզանական ջոկատին: Իսկ վերջինս օգոստոսին ընդգրկվել էր ուկրաինական հեծյալ պարտիզանական ջոկատների միավորման կազմի մեջ<sup>16</sup>: Այս նույն կայազորից Արամ Ազոյանի ղեկավարությամբ ճողոպրած 80 հայ ռազմագերիներ, անտառներում միայնակ գործելուց հետո, 1943 թ. ամռանը միացան Ուկրաինայի 25-ամյակի անվան ջոկատին, որը հետագայում վերաճեց գումարտակի Մալիկովի ղեկավարած միավորման կազմում<sup>17</sup>:

1943 թ. հունիսին Լեհաստանից Կիրովոգրադի մարզ փոխադրված հայ ռազմագերիների մեջ, որոնց ֆաշիստները զինել էին խորհրդային պարտիզանների դեմ հանելու համար, ակտիվ ընդհատակյա աշխատանք կատարող հայրենասերներից էին Գալուստ Ստեփանյանը, Հայկազ Թերզյանը, Սմբատ Գևորգյանը և ուրիշներ: Սեպտեմբերի 26-ին նրանք գլխավորեցին 30 ռազմագերիների փախուստը, որոնք իրենց հետ պարտիզանական միավորում տարան հրացաններ, ատրճանակներ, հանդերձանք և այլն: Նրանց օրինակին հետևեցին ռազմագերիների այլ խմբեր:

1943 թ. ընթացքում տեղի ունեցան հայ ռազմագերիների բազմաթիվ այլ փախուստներ ավելի փոքր խմբերով կամ անհատորեն: Նրանք բոլորը միացան խորհրդային պարտիզաններին և շարունակեցին պայքարը Շերմանական ֆաշիստների դեմ՝ նորից գնալով ձեռքներն առած:

Արմատական բեկման տարում քիչ չէր նաև հայ ընդհատակայինների թիվը, ովքեր պայքարի մեջ էին դեռևս նախորդ ժամանակաշրջանից կամ նոր էին ընդգրկվել:

Յենրիկ Ալեքսանի Ջաքարյանը 1941 թ. ակտիվ կերպով գործում էր Մոզիլյովում, Իլյա Գուրիևի ղեկավարած «Ըմբոստներ» ընդհատակյա կազմակերպության մեջ: 1943 թ. նա պայթեցրեց ֆաշիստների ագիտացիոն ավտոբուսը, կուսակցության Մոզիլյովի մարզկոմի հանձնարարությամբ գերմանական կայազորային շտաբի սեյֆից դուրս հանեց քաղաքի ռազմական օբյեկտների քարտեզի միակ օրինակը, որը հասցվեց Կարմիր բանակի զորքերի հրամանատարությանը: Վերջին օպերացիան ուժեղ իրարանցում առաջ բերեց ֆաշիստների մեջ: Ձերբակալվեցին բազմաթիվ կասկածելի մարդիկ: 1943 թ. փետրվարի 22-ին գեստապոն ձերբակալեց նաև Յենրիկ Ջաքարյանին: Հարցաքննության ժամանակ նա իրեն պահեց, որպես իսկական հայրենասեր: Ի պատասխան քննիչ, փոխգնդապետ Լայների հասցրած ապտակի, Ջաքարյանը նրան գետին տապալեց, դրան հետևեց ֆաշիստի ատրճանակի կրակոցը: Հավաքելով բոլոր ուժերը՝ վիրավոր Ջաքարյանը ցատկեց քննիչի վրա, ամուր բռնեց կոկորդից և նրան խեղդամահ արեց: Վրա հասած հիտլերականները ատրճանակի մի քանի կրակոցով սպանեցին խիզախ ընդհատակայինին<sup>118</sup>:

Ասպիրանտ Գուրգեն Մարտիրոսովը գաղտնի խումբ էր կազմակերպել Գրողնոյի մարզի Լիոյա քաղաքի հոսպիտալում: Նրա ջանքերով շատ վիրավոր ռազմագերիներ անհայտացան հոսպիտալից և միացան պարտիզաններին: 1943 թ. գարնանից նրա խումբը գործում էր քաղաքի կոմերիտական ընդհատակյա կազմակերպության հետ միասին: Նույն թվականին Գուրգեն Մարտիրոսովը փոխադրվեց պարտիզանների մոտ՝ խուսափելով ձերբակալությունից<sup>119</sup>:

Այս նույն քաղաքի ընդհատակում է գործել օդաչու Արամ Կարապետյանը, որը մինչ այդ գտնվում էր Դվինսկում (Լատվիա):

Կարապետյանի ինքնաթիռը ֆաշիստներին ջախջախել էր Ղրիմում, Յոլուխսային Կովկասում, Սմոլենսկի ու Կալինինի շրջաններում և այլուր՝ մինչև 1942 թ. նոյեմբերը, երբ ինքնաթիռը խփվեց, իսկ օդաչուն ծանր վիրավոր վիճակում գերի ընկավ: Ֆաշիստները ռազմագերի օդաչուներից կազմակերպել էին այսպես կոչված «Արևելյան եսկադրիլիա», ուր քչեցին նաև վիրավոր Կարապետյանին: Շուտով եսկադրիլիայում սկսեցին գործել ընդհատակայինները, որոնք նախապես պարտիզաններին զգուշացնում էին նրանց բազաների վրա ինքնաթիռների հնարավոր հարձակման մասին: Պարտիզաններն անմիջապես հեռանում էին այլ վայր: Գաղտնի խմբերից մեկի մեջ էին Արամ Կարապետյանը, Վլադիմիր Մոսկալեցը և Պանտելեյմոն Ճկաուսելին: Այնուհետև նրանց խումբը կապ հաստատեց Գրոդնոյի մարզի պարտիզանների հետ, երբ եսկադրիլիան փոխադրվել էր մարզի Լիդա քաղաքը<sup>120</sup>:

Ջգալի թվով հայեր կային Ղրիմի մարզի ընդհատակայինների մեջ: Նրանցից էին Եվգենյա և Սոֆյա Լազարևա քույրերը, Օլգա (Յոֆիսիմեն) Տաչչիյանը (Օլեսյա), Վարվառա Ձելենսկայան (Մուխտարովա), Յայկանուշ Լուլեջյանը (Մատվեև Կուրգանո), Պավել Գյուրջիյանցը և ուրիշներ: Եվգենյա Լազարևային Ղրիմի մարզկոմի կողմից տրված բնութագրում նշված է, որ նա 1943 թ. սկզբից կատարել է հետախուզական աշխատանք, պարզել թշնամու ուժերի դասավորությունը, նոյեմբեր ամսից եղել է Սիմֆերոպոլի քաղկոմի քարտուղարի տեղակալը ագիտացիոն-մասսայական աշխատանքների գծով, իր բնակարանը տրամադրել է ընդհատակի և պարտիզանների ղեկավարների հանդիպումների համար, օգնել է գաղտնի խմբերի կազմակերպմանը, բնակարաններ է գտել ռադիոընդունիչ և տպարան տեղադրելու համար<sup>121</sup>:

Նինա Լիստովնիչայայի ղեկավարությամբ գործող Թեոդոսիայի ընդհատակյա կազմակերպության անդամներ Յայկ Արտեմի Մարտիրոսյանը (Յարրի Մայդերոսով), Ասյա Արկադիի Ամետովա-Բալյանը, Աշոտ Այվազի Յայրապետովը (Այոշա), Արամ Սիմոնի Տերյանը և մյուս ընկերները շարունակում էին պայքարել ֆաշիստների դեմ: 1943 թ. մարտին ձերբակալվեցին և գնդակահարվեցին Նինա Լիստովնիչայան, Աշոտ Յայրապետովը և ուրիշ ընդհատակայիններ: Իսկ քաղաքի գերմանական պարետատան

թարգմանիչ Հայկ Մարտիրոսյանի գաղտնի գործունեությունը շարունակվեց մինչև 1943 թ. նոյեմբերը: 25 ամիս շարունակ նա գերմանական սպայի համազգեստի մեջ կատարում էր պարտիզանների առաջադրանքները: «Նա ընդամենը 25 տարեկան էր: 1941 թ. գերազանց ավարտել էր Թեոդոսիայի մանկավարժական ինստիտուտը,— գրել է Թեոդոսիայի «Պրոլետարի» թերթը,— Պատերազմը ստիպեց նրան մանկավարժի աշխատանքը փոխարինել խիզախ ընդհատակայինի մասնագիտությամբ: Գտնվելով թշնամու թիկունքում, Հարրին կարողանում էր ձեռք բերել արժեքավոր տեղեկություններ և հաղորդել պարտիզաններին: Նա անձնագրեր էր ձեռք բերում, մատակարարում պարտիզաններին, որոնք ազատ կարող էին շրջել Ղրիմի քաղաքներում ու գյուղերում, ընդհուպ մինչև Խերսոն: Ռազմագերիների ճամբարում նա տասնյակներով անձնագրեր էր բաժանում, և ամեն օր այնտեղից 20–30 մարդ էր անհետանում: Ամեն անգամ պարտիզաններին զգուշացնում էր նրանց սպառնացող վտանգի մասին և փրկում հարյուրավոր մարդկանց կյանք: Հարրին խորհրդային թռուցիկներ ու լրագրեր էր տարածում: Նրան ձերբակալեցին և բանտ նետեցին: Գերմանական վիժվածքները սոսկալի տանջանքների ենթարկեցին հերոս կոմերիտակնցին: Նա ատելությամբ և արհամարհանքով պատասխանեց դահիճներին... Երկար տանջելուց հետո նրան գնդակահարեցին, այդպես էլ ոչ մի բառ չլսելով նրա շուրթերից»<sup>122</sup>: Գնդակահարվեցին նաև Հայկի հայրը, քույրը և հորեղբոր տղան, որի տնից նա կատարում էր իր ռադիոհաղորդումները:

Ասյա Ամետովա—Բայլանը կատարում էր ընդհատակի ցուցումները վրացական, ադրբեջանական և հայկական լեգեոնների գումարտակները քայքայելու, ռազմագերիների փախուստներ և ապստամբություններ կազմակերպելու ուղղությամբ: 1943 թ. օգոստոսին ձերբակալվեցին և գնդակահարվեցին այդ գործի մի շարք կազմակերպիչներ, նրանց թվում նաև Ասյա Ամետովան: Հայկական գումարտակում դեռևս 1942 թ. գործում էր «Կարմիր աստղ» ընդհատակյա կազմակերպությունը, որի մասին պարտիզանական միավորման հրամանատար Վ. Կուզնեցովը գրել է. «Նովայա Պակրովկա գյուղում գտնվող կամավորական գումարտակի հետ լավ կապ էր հաստատված: Այդ գումարտակի ընդհա-

տակյա կազմակերպությունը ղեկավարում էր բժիշկ Արամ Տերյանը: Կազմակերպության մեջ, ոչոն իրեն անվանել էր «Կարմիր աստղ», կար մոտ 200 մարդ: Նա կապ ուներ պարտիզանների հետ: 1943 թ. սեպտեմբերին կազմակերպության խափանարարական խումբը խորտակեց մեկ զինվորական գնացք, ջախջախվեց մեկ շոգեքարշ, 8 վագոն՝ ծիերով»<sup>123</sup>:

Այնուհետև, զգուշանալով ձերբակալության վտանգից, «Կարմիր աստղի» ընդհատակայինները Արամ Տերյանի ղեկավարությամբ հեռացան պարտիզանների մոտ:

\* \* \*

Արմատական բեկման տարում աճեց նաև խորհրդային պարտիզանների շարքերում մարտնչող հայերի թիվը: Նախորդ ժամանակաշրջանի նման նրանց հիմնական կազմը ներկայացնում էին ֆաշիստական ճամբարներից փախած ռազմագերիները, պատերազմի սկզբնական շրջանում շրջապատման մեջ ընկած մարտիկներն ու սպաները, տեղական բնակիչներ և ուրիշներ: Ի տարբերություն նախորդ ժամանակաշրջանի՝ այժմ հայ պարտիզանների մի զգալի մասը կենտրոնացած էր ազգային ջոկատներում: 1943 թ. հայ պարտիզանների և ընդհատակայինների թիվը հասավ առավելագույնի՝ մինչև 2500-ի, այդ թվում Ուկրաինայում մարտնչում էին ավելի քան 1000, Բելոռուսիայում՝ 800, Ղրիմում՝ 300 մարդ: Մոտ 400 հոգի նաև ՌԽՖՍՐ ռազմագրավված մարզերում և Մերձբալթյան հանրապետություններում: Աճեց նաև նրանց մարտունակությունը, պայքարի թափը:

Խորհրդային պարտիզաններն օգնում էին Կարմիր բանակին, որը Ստալինգրադի ճակատամարտում տարած պատմական հաղթանակից հետո ֆաշիստական զավթիչներից ազատագրում էր խորհրդային հողը, իսկ ամռանը նոր, մեծագույն հաղթանակ նվաճեց Կուրսկի ճակատամարտում:

Արմատական բեկման տարում թշնամին դուրս շարտվեց Ռուսաստանի զավթած մարզերի զգալի մասից, Չախսափնյա Ուկրաինայից, Բելոռուսիայի արևելյան շրջաններից:

Պարտիզանական պատերազմի խոշոր կենտրոններից էին Բրյանսկի անտառները: Այստեղ 1943 թ. մարտին Կլետնյայի 1–ին պարտիզանական բրիգադի շարքերը համալրեցին ֆաշիստական գերությունից փախած մոտ 80 հայ ռազմիկներ, որոնք անմիջապես մտան կռիվների մեջ և ցույց տվեցին հերոսության և արիության բազմաթիվ օրինակներ: Նրանցից առավել աչքի ընկածները առաջ քաշվեցին հրամանատարական պաշտոնների: Վաշտի և դասակի հրամանատարներ նշանակվեցին Վարդգես Շահբազյանը, Կորյուն Թորոսյանը, Սոկրատ Դալլաքյանը, Վիկտոր Մանուչարյանը, Մանուկ Գևորգյանը, Գուրգեն Նիկոյանը, Արտուշ Գրիգորյանը և Սերգեյ Տիրացյանը:

Հայ մարտիկներն իրենց առաջին պարտիզանական մկրտությունը ստացան այն կռիվներում, որոնց շնորհիվ 1943 թ. ապրիլին ազատագրվեցին մի շարք բնակավայրեր, այդ թվում Բերլեց, Վվոզի, Գորոդեց, Պավլինկի և այլ գյուղեր: Ջախջախվեցին դրանց հիտլերական կայազորները, որոնք արգելակում էին պարտիզանների տեղաշարժը դեպի հարավ՝ նոր բազաներ: Պարտիզանական բրիգադի հրամանատար, փոխգնդապետ Ֆ. Ս. Դանչենկովը իր հիշողություններում հատկապես ընդգծել է Վվոզի գյուղի համար մղված մարտում Վարազդատ Օզնեցյանի ցուցաբերած հերոսությունը, որը վիրավոր վիճակում մարտի դաշտից, թշնամու ուժեղ-կրակի տակ, դուրս բերեց ծանր վիրավոր վաշտի հրամանատար Ջենկովին՝ փրկելով նրա կյանքը<sup>124</sup>:

Շուտով հայ պարտիզանները սովորեցին և ներգրավվեցին խափանարարական գործողությունների մեջ: Ս. Դալլաքյանի, Գ. Աղասյանի և Կ. Դանիելյանի խափանարարական խումբը, Վ. Տիտովի հրամանատարությամբ, ապրիլի 30–ին Բրյանսկ–Սմոլենսկ երկաթուղագծում (Ուզկոյե և Սեշչե կայարանների միջև) խորտակեց թշնամու զինվորական գնացքը, 27 վազոն ռազմահինժեներական զույքով և 7 վազոն կենդանի ուժով: Երկաթուղին չգործեց մեկ ամբողջ օր: Մայիսի 2–ին նույն խումբը խճուղում պայթեցրեց մեկ ավտոմեքենա, սպանվեց 3 հիտլերական<sup>125</sup>:

Մայիսի 6–ին պայթեցվեց թշնամու ուժերի փոխադրման կարևոր ուղու՝ Բրյանսկ–Սմոլենսկ խճուղու խոշոր կամուրջներից մեկը: Գործողությանը մասնակցեցին մեծ թվով պարտիզաններ,

այդ թվում Ս. Դալլաքյանը, Կ. Թորոսյանը, Գ. Աղասյանը, Գ. Հակոբյանը, Բ. Գուգուշյանը, Ա. Գրիգորյանը, Կ. Դանիելյանը, Ս. Գևորգյանը, Ն. Իսկանդարյանը, Վ. Օզնեցյանը և ուրիշներ<sup>126</sup>:

Հունիսի 9-ին խափանարարների խումբը, որի մեջ էին Բլոխինը, Նիկիտինը, Գուրովը, Գ. Աղասյանը և Ս. Դալլաքյանը, Ռոզուկինի հրամանատարությամբ, խորտակեց դեպի Բոյանսկ մեկնող զինվորական գնացքը, որը բաղկացած էր վառելանյութով բեռնված 38 ցիստեռներից: Հրդեհվեց նաև երկաթուղային պաստառը 200 մետր տարածության վրա<sup>127</sup>:

Նախապատրաստվելով Կուրսկի գործողությանը՝ թշնամին մեծ ուժեր նետեց պարտիզանների դեմ իր քիկուները ամրապնդած լինելու և հաղորդակցության ուղիների գործունեությունը ապահովելու համար: Միայն Կլետնյայի անտառների պարտիզանների դեմ մայիսին առանձնացվել էին 40–45 հազար հիտլերականներ: Մայիս և հունիս ամիսներին կատաղի կռիվներ ծավալվեցին պարտիզանների և պատժիչ ուժերի միջև: Չկարողանալով կտրել ժողովրդական վրիժառուների համառ դիմադրությունը և անձնագոհությունը, ֆաշիստները հրաժարվեցին հետապնդումից և Կուրսկի ճակատամարտի նախօրյակին իրենց հիմնական զորամասերը նետեցին ռազմաճակատ: «Այդ մարտերում բոլոր, այդ թվում հայ պարտիզանները,— գրել է Ֆ. Ս. Դանչենկովը,— ցուցաբերեցին բացառիկ միասնություն, հավատարմություն միմյանց նկատմամբ, քաջություն և հնարամտություն: Յուրաքանչյուրը պատրաստ էր օգնության գալու մյուսին:

Մեր հին պարտիզանները սիրեցին հայերին եղբայրական սիրով որպես իսկական զինակիցների»<sup>128</sup>:

1943 թ. նոր սխրագործություններով հարստացրին իրենց մարտական հաշիվները Վորոշիլովի անվան բրիգադի (հրամանատար կապիտան Իլարիոն Գուժենկո) հայ պարտիզանները: Սարգիս Վարդազարի Ազարյանը դարձել էր Բուդյոննու անվան գումարտակի հրամանատար: Գումարտակի շտաբի պետ, գումարտակի հրամանատար, ապա բրիգադի շտաբի պետ էր հաջատուր Բախշիի Սիմոնյանը: Բրիգադը ամիսներ շարունակ ծանր մարտեր էր մղում ֆաշիստական պատժիչ ուժերի դեմ, ճեղքում շրջափակման օղակը, ջախջախում թշնամու կայազորները, խոր-

տակում գնացքներ: Ուժեղ կռիվներից մեկում զոհվեց բրիգադի հրամանատար Գուձենկոն, որին որոշ ժամանակ փոխարինեց Սարգիս Ազարյանը: Ազարյանը զոհվեց Բրյանշչինայի ազատագրման համար բրիգադի մղած մարտական գործողությունների ավարտին և թաղվեց Չերնիգովի մարզի Գրեմյաչի գյուղի եղբայրական գերեզմանում:

1943 թ. ընթացքում բրիգադի շարքերը համալրեցին մի խումբ նոր հայ մարտիկներ: Բրիգադը, ինչպես նշված է նրա հաշվետվություններից մեկում, չե՛ծ աշխատանք էր տանում իր կողմը գրավելու այն հայ ռազմագերիներին, որոնց գերմանացիները հանձնել էին երկաթուղիների պահպանությունը: Օգոստոսի 18-ի գիշերը հայ ռազմագերիները պայթեցրին իրենց հսկողությանը հանձնված Կոկարեկայի մոտի 26 մետրանոց երկաթուղային կամուրջը և 17 հոգով, որը կամուրջի ամբողջ կայագորն էր, հեռացան պարտիզանների մոտ<sup>129</sup>: Այնուհետև ֆաշիստները, վախենալով, որ նույն ձևով կվարվեն նաև մյուս հայ ռազմագերիները, նրանց բոլորին հեռացրին երկաթուղային պահակությունից և փոխարենը բերեցին գերմանացի զինվորներ:

Մինչև այդ տեղի էին ունեցել նաև հայ ռազմագերիների այլ փախուստներ, որոնք կարճ ժամանակում հասցրել էին կատարել մի շարք մարտակա՛մ հաշո՛ղ գործողություններ: «Յուլիսի 22-ից մինչև օգոստոսի 10-ը երկաթուղու մեր հատվածում (Ալտուխով-Կոկարեկա),— նշել է պարտիզան Խաչատրյանը,— եղել է ռելսերի պայթեցման 8 և հակառակորդի զինվորական էշելոնների խորտակման 2 դեպք: Ռելսերի պայթեցումը այդ ուղում առաջացրեց աշխատանքի լուրջ ընդհատումներ: Ես անձամբ Նավյա կայարանում տեսել եմ 6 կանգնած շարժակազմ, որոնցից մեկը՝ վառելանյութով: Նրանց մի մասը հետ է ուղարկվել Բրյանսկ»<sup>130</sup>:

Այս պայթեցումները սկսվեցին ճիշտ այն օրվանից, երբ Վորոշիլովի անվան և այլ ջոկարներ ու միավորումներ համատեղ իրականացրին զանգվածային «Ռելսային պատերազմ» (Բրյանսկ-Խուտոր Միխայլովսկի, Նավյա-Կոմարիչի գծերում), որի հետևանքով թշնամու այդ կարևոր մատակարարման ուղիները չգործեցին 3 օր, հետո նաև շատ օրեր, և հիտլերականները ստիպված եղան մեծ ուժեր առանձնացնել գծերի հսկողությունը ուժե-

ղացնելու համար, ինչպես նաև դրանք վերականգնելու նպատակով այստեղ փոխադրելու ռելսեր՝ ոչ միայն զանազան կայարաններից ու երկաթուղիներից, այլ նաև բուն Գերմանիայից<sup>131</sup>:

Բրանշչինայում բրիգադի վերջին մարտական գործողությունը դարձավ Ջլինկա քաղաքի մոտ գտնվող գերմանական կայազորի ջախջախումը:

Բրիգադի հաշվետվության մեջ, որի տակ դրված է նաև նրա շտաբի պետ կապիտան Խաչատուր Սիմոնյանի ստորագրությունը, բերված են հետաքրքիր տվյալներ նրա մարտական գործունեության վերաբերյալ: Իր ամբողջ գոյության ընթացքում (1941 թ. նոյեմբերի 8 — 1943 թ. սեպտեմբերի 25) բրիգադը խորտակել էր 17 զինվորական զնացք, պայթեցրել 7 երկաթուղային ու խճուղային կամուրջ, ոչնչացրել մեծ քանակությամբ զանազան տեխնիկա, ավելի քան 5100 ֆաշիստական զինվոր ու սպա: Թշնամու վիրավորների թիվն անցնում էր 2000-ից: Վերցվել էր մեծաքանակ ռազմաավար<sup>132</sup>:

Նավյայի շրջանում (Բրյանսկից հարավ) իր մարտական գործունեությունն էր շարունակում չեկիստների Ջերժինսկու անվան պարտիզանական ջոկատը, որի հրամանատարն էր Արամայիս Անդրեյի Մեսրոպովը: Ջոկատը կազմակերպվել էր Դյատկովոյի շրջանում 1942 թ. մարտին և հիմնականում իրականացնում էր խափանարարական գործողություններ Օրյոլ-Բրյանսկ-Օրշա երկաթուղագծում և խճուղային ճանապարհներին:

Կուրսկի ճակատամարտում խորհրդային զորքերի տարած փայլուն հաղթանակի շնորհիվ ազատագրվեց նաև Օրյոլի մարզի տարածքը և սեպտեմբերին Բրյանսկի պարտիզանները միացան, Կարմիր բանակի զորամասերին:

ՌեսԽՄԳ Կալինինի մարզի պարտիզաններից էր կապիտան Սիքայել Մակարի Բաբաևը, որը պարտիզանների մոտ էր ուղարկվել 1943 թ. վերջին: Նա մարզի 15-րդ բրիգադի «Մահի ֆաշիզմին» ջոկատի շտաբի պետն էր, ղեկավարել է խափանարարական գործողություններ: Նրա ղեկավարած խումբը ղեկտեմբերի վերջին Սեբեժ-Ձիլուպե գծում խորտակեց թշնամու զինվորական զնացքը: 1944 թ. փետրվարից Բաբաևը պարտիզանական ջոկատի հրամանատար էր: Ջոկատի մարտական հաշվում գրանցված է

երկու պայթեցված գնացք, ոչնչացրել է 9 ավտոմեքենա, 147 հիտլերական: Միքայել Բաձակը պարզևատրվել է Բոգդան Խմել-նիցկու 3-րդ աստիճանի շքանշանով<sup>133</sup>:

1943 թ. օգոստոսին Լենինգրադի մարզի 3-րդ պարտիզանական բրիգադը (նրա 4-րդ գունդը) իր շարքերն ընդունեց Կալինինի մարզի Նովոռժև քաղաքից փախած հայ ռազմագերիների խմբերին: Բրիգադը կազմակերպվել էր 1941 թ. սեպտեմբերին: 1942 թ. նրա հրամանատարն էր Ա. Վ. Գերմանը, որը զոհվեց մարտում 1943 թ. սեպտեմբերին, և որից հետո բրիգադը կոչվեց նրա անունով: 4-րդ գունդը ևս ստեղծվել էր 1941 թ. և սկզբում գոյություն ուներ որպես ինքնուրույն պարտիզանական միավոր: Նա բրիգադին միացվեց 1943 թ. հուլիսին: Գնդում ընդգրկված էին 35-րդ, 37-րդ և 39-րդ պարտիզանական ջոկատները: Այժմ դրանց գումարվեց սկզբում հիմնականում հայ մարտիկներից բաղկացած 41-րդ ջոկատը:

Բրիգադի և գնդի հրամանատարների հետ ճամբարից փախած հայ ռազմագերիների հանդիպումը կայացավ Պոժիկովո գյուղում: Որոշվեց նրանցից ձևավորել ինքնուրույն ջոկատ, որի կազմը աստիճանաբար բազմացավ՝ դառնալով բազմազգ: Ավելացավ նաև հայերի թիվը: Հայ պարտիզաններ կային նաև բրիգադի այլ ջոկատներում: 1943 թ. օգոստոսի 5-ին բրիգադի հրամանատար մայոր Ա. Վ. Գերմանը Գրիշմանի գյուղում ստորագրեց N 173 հրամանը, որում ասված է. «Կամավոր պարտիզանների կողմնանցած նախկին ռազմագերի մարտիկներից ու հրամանատարներից ու Կալինինի մարզի պարտիզաններից կազմակերպել N 41 պարտիզանական ջոկատ»<sup>134</sup>: Ջոկատը թշնամու դեմ մարտնչեց մինչև 1944 թ. փետրվարի 28-ը:

Ջոկատի հրամանատար նշանակվեց կապիտան Արտեմ Գևորգի Սաղումյանը (Կերչենսկի), որը փախուստի ակտիվ կազմակերպիչներից էր: Որոշ ժամանակ հրամանատարի պարտականությունները կատարել է Ջավեն Համբարձումյանը, որը դարձյալ ընդհատակի ակտիվ գործիչներից էր: Իսկ ընդհանրապես նա շտաբի պետն էր, եղել է նաև հետախուզության գծով ջոկատի հրամանատարի տեղակալը: Հետախուզության գործը շարունա-

կել է վարել Պերճ Սերգեյի Աղաջանյանը: Շտաբի պետ եղել է նաև Երվանդ Հովհաննեսի Եղիազարյանը:

Ջոկատը ամրապնդվեց նաև բրիգադի փորձված կադրերով, որոնք մեծ աշխատանք կատարեցին հայ մարտիկներին պարտիզանական պայքարի համար կազմակերպելու ուղղությամբ: Ջոկատի կոմիսարն էր Ա. Ի, Միգրովը, ապա մայոր Կ. Ֆ. Մատյուշչենկոն (Մայկոպսկի): Նույն նպատակով բրիգադի կադրային 41-րդ ջոկատին միացվեց մի շարային վաշտ, ավագ սերժանտ Տ. Ա. Շուլենինի հրամանատարությամբ: Խափանարարական խմբերի կազմակերպումը և վարժեցումը ղեկավարում էր Գ. Գ. Սվետլովը:

Մյուս, ավելի ցածր հրամանատարական պաշտոններում նշանակվեցին հիմնականում հայեր: Վաշտերի հրամանատարներ էին Սուրեն Սարգսյանը, Գարեգին Ղարիբյանը, Սուրադ Սկրտումյանը, դասակների հրամանատարներ՝ Հաբեթնակ Դանիելյանը, Պարույր Մարտիրոսյանը, Սուրեն Մարգարյանը, Արծվիկ Դավթյանը, ջոկերի հրամանատարներ՝ Արտեմ Օհանյանը, Էլբակ Մանուկյանը և ուրիշներ: Մ. Բաղիրյանը, Սուրեն Սարգսյանը, Լազար Բալայանը, Ազատ Խուրշուդյանը, Վահան Բաբայանը, Փաշիկ Կարապետյանը, Վազգեն Էպրիկյանը, Գեորգի Օվչիյանը, Երվանդ Եղիազարյանը և ուրիշներ լավագույն գնդացրորդներ, ավտոմատավորներ ու պայթեցնողներ էին:

41-րդ ջոկատը աստիճանաբար դարձավ բազմանդամ և բազմազգ: Ջոկատի հրամանատարության տվյալներով՝ նրա անձնակազմը 1943 թ. վերջին հասավ 178-ի, իսկ 1944 թ. փետրվարի 1-ին՝ ավելի քան 300 մարդու<sup>135</sup>: Ջոկատում կային ռուսներ, ուկրաինացիներ, հրեաներ, էստոնացիներ և խորհրդային երկրի այլ ժողովուրդների ներկայացուցիչներ: Ջոկատ եկան նաև փախուստ կատարած 30 հայ ռազմագերիներ: 1944 թ. փետրվարի 1-ին 4-րդ գնդում հաշվվում էր 57 հայ պարտիզան, որոնք, եզակի բացառությամբ, կենտրոնացած էին 41-րդ ջոկատում<sup>136</sup>: 1943 թ. վերջին հայերը կազմում էին ջոկատի անձնակազմի մեկ երրորդը, իսկ 1944 թ. փետրվարի 1-ին՝ մեկ հինգերորդ մասը: Իր կազմով նա խորհրդային ժողովուրդների ներկայացուցիչների մարտական համերաշխ ընտանիք էր, որը բրիգադի մյուս ստորաբաժանումների հետ միասին, հաղթահարելով դժվարությունները

և հարստացնելով իր փորձը, դարձավ գնդի և բրիգադի աչքի ընկնող ստորաբաժանումներից մեկը: 41-րդ ջոկատը, ինչպես նշել են 4-րդ գնդի հրամանատարները, «արագ կերպով, ընդօրինակելով 4-րդ գնդի մյուս ջոկատների պարտիզանական պայքարի մարտավարությունը և փորձը, շուտով դարձավ ամուր մարտական միավոր: Դրանում զարմանալու ոչինչ չկար,— շարունակում են նրանք,— նոր ստորաբաժանման կորիզը կազմող բոլոր հայերը զինվորական մարդիկ էին, ծառայել էին բանակում: Նրանց մեծ մասն ուներ սպայական աստիճան և հմտորեն էր ղեկավարում իրեն վստահված պարտիզանների վաշտերը, դասակներն ու ջոկերը<sup>137</sup>:

Ջոկատի մարտունակության բարձրացման գործում մեծ դեր էին կատարում կուսակցական և կոմերիտական կազմակերպությունները, նրանց քաղաքական-կազմակերպական աշխատանքը: 1944 թ. սկզբին 4-րդ գնդում, որի կազմում այդ ժամանակ ընդգրկված էին 35-րդ, 37-րդ և 41-րդ ջոկատները (39-րդ ջոկատը հանձնվել էր նորաստեղծ 3-րդ գնդին) հաշվվում էր 36 կոմունիստ (անդամ և թեկնածու) և 98 կոմերիտական: Գնդում գործում էր 3 կուսակցական (հավանորեն յուրաքանչյուր ջոկատում մեկ) և 4 կոմերիտական կազմակերպություն, որոնց շարքերն աճում էին լավագույն պարտիզանների հաշվին, ովքեր աչքի էին ընկնում մարտերում ցուցաբերած իրենց խիզախություններով: Ահա մեկ օրինակ: Մարտական առաջադրանքի մեկնելուց առաջ գնդացրորդ Գարսո Աղաջանովը հետևյալ դիմումն էր ներկայացրել 41-րդ ջոկատի կոմերիտական կազմակերպությանը. «Մեկնելով առաջադրանքի՝ խնդրում եմ ընդունել ինձ ձեր շարքերը: Իմ կյանքը պատկանում է Հայրենիքիս, ուստի, որպես կոմերիտական, կյանքս կտամ նրա համար: Մեռնելու դեպքում խնդրում եմ ինձ համարել կոմերիտական»<sup>138</sup>: Մարտից հետո նրա և մյուսների խնդրանքը բավարարվեց: Բրիգադն ուներ իր «Պարտիզանսկայա պրավդա» պաշտոնաթերթը:

Կազմակերպման օրից մինչև 1943 թ. վերջը, այսինքն՝ 5 ամսվա ընթացքում 41-րդ պարտիզանական ջոկատը թշնամուն պատճառել էր կենդանի ուժի ու տեխնիկայի մեծ կորուստ: 3-րդ բրիգադի համար ևս 1943 թ. երկրորդ կեսին պայքարի կարևոր

ծներից էր «Ռելսային պատերազմը»: Այդ ընթացքում միայն 41-րդ ջոկատը խորտակեց 11 զինվորական գնացք, պայթեցրեց 5 կամուրջ և 1500 երկաթուղային ռելս, կտրեց 8600 մ կապի գիծ, ջախջախեց թշնամու մեկ խոշոր կայազոր, ոչնչացրեց 669 հիտլերական, զրավեց ռազմավար<sup>139</sup>: «Ռելսային պատերազմում», որը ջոկատը հիմնականում մղում էր Օստրով-Ռեզեկնե, Չիխաչևո-Ղեդովիչի երկաթուղագծերում և այլ ուղիներում, զբաղված էր ջոկատի անձնակազմի զգալի և համեմատաբար մարտունակ մասը: Խափանարարական գործողությունների մեջ աչքի ընկան Երվանդ Եղիազարյանի, Գեորգի Ցիմերմանի, Լազար Բալայանի, Պարույր Մարտիրոսյանի և մյուսների ղեկավարած խմբերը: Բերենք Լազար Բալայանի չորս հոգուց բաղկացած խմբի գործերի սեղմ նկարագրությունը (Օստրով-Ռեզեկնե երկաթուղի, Պիրոշ կայարանի մոտ, 1943 թ. նոյեմբերի 30, ժամը 3): «Խումբը խորտակել է հակառակորդի մեկ զինվորական գնացք, տանկերով, ավտոմեքենաներով ու հրետանիով: Գնացքը մեկնում էր ռազմաճակատ: Խափանարարության հետևանքով ոչնչացվել է մեկ շոգեքարշ, 18 վագոն՝ բեռով: Ոչնչացվել է 43 հիտլերական<sup>140</sup>:

Երկու «կոնցերտ» էր տվել 37-րդ պարտիզանական ջոկատի խումբը Յոլսեփ Մելիքյանի ղեկավարությամբ Պսկով-Կարամիշևո և Պսկով-Պորխով երկաթուղագծերում՝ խորտակելով ռազմական տեխնիկայով ճակատ մեկնող գնացքները<sup>141</sup>:

39-րդ ջոկատի հետ միասին 41-րդ ջոկատի կատարած մարտական գործողություններից է թշնամու Գորուշկայի կայազորի ոչնչացումը 1943 թ. հոկտեմբերի լույս 26-ի գիշերը: Գորուշկան հիտլերականների ուժեղ ամրացված հենակետերից էր (ուներ փշալարերով պատված խրամատներ, ամուր կրակակետեր, 10 գնդացրով, 2 գումարտակային ականանետով), որի կայազորը, ինչպես նշված է 3-րդ բրիգադի հրամանում, «ութ ամիս շարունակ պայքարում էր պարտիզանների դեմ, կողոպտում բնակչությանը, այրում գյուղերը և կանգնել էր բրիգադի տեղաշարժերի ճանապարհին»<sup>142</sup>: Պարտիզանական ջոկատները փայլուն հաղթանակ տարան ֆաշիստների դեմ՝ հիմնահատակ ավերելով Գորուշկայի կայազորը և նրա ամրությունները: 41-րդ ջոկատին բա-

Ժին ընկավ կայագորի շտաբի և մի քանի պահեստի ոչնչացումը, պայթեցվեց 5 կրակակետ, սպանվեց 80 հիտլերական:

3-րդ պարտիզանական բրիգադի հրամանատարության հրամանով թշնամու ուժեղ կայագորի ջախջախմանը մասնակցած 39-րդ և 41-րդ ջոկատների անձնակազմերին հայտնվեց շնորհակալություն; անվանապես շնորհակալության արժանացան հատկապես աչքի ընկած մարտիկները (Համբարձումյան, Մկրտումյան, Բալայան, Ցիմերման և ուրիշներ), առավել խիզախություն ցուցաբերած պարտիզանները ներկայացվեցին կառավարական պարգևատրության<sup>143</sup>:

Բրիգադի պարտիզաններին վիճակված էր մղելու նաև շատ ծանր մարտեր թշնամու պատժիչ խոշոր ուժերի դեմ, որոնք փորձում էին շրջապատել և ոչնչացնել ժողովրդական վրիժառուներին: Այս դեպքում ևս պարտիզանները կռվում էին անձնագոհ կերպով և հասան հաղթանակի: Ահա այդպիսի իրադրություններից մեկի նկարագրությունը, որը կատարված է 4-րդ գնդի շտաբի պետի կողմից իր օրագրում, և որը միաժամանակ հաղորդում է այլ դժվարությունների ու պարտիզանների գործունեության մասին ընդհանրապես: «4 սեպտեմբերի [1943 թ.]: Այսօր բրիգադն ամբողջ գիշեր ինքնաթիռներ էր ընդունում, որոնք մեզ համար բերեցին շատ անհրաժեշտ բեռ և տարան վիրավորներ... Հակառակորդը մեր շուրջը ստեղծում է նոր կայագորների ամբողջ ցանց, հները հանելու հաշվին... Ժողովուրդը մեզ համար ոչինչ չի խնայում...

Երեկո: Իրադրությունը դառնում է խիստ լարված: Հակառակորդը բացահայտ կերպով մեզ շրջապատում է: Ժամը 18-ին օդակը սեղմված է: Լսելի են առաջին կրակոցները: 41-րդ և 39-րդ ջոկատները մտնում են կռվի մեջ: Պատժիչ էքսպեդիցիան սկսվեց: Ժամը 19 ամց 30 րոպեին հրամանատարը և կոմիսարը մեկնեցին խորհրդակցության: Թշնամու ինքնաթիռը մեզ վրա թռուցիկներ է տեղում՝ «Դուք օդակում եք: Ձեզ շրջապատել է 6000-անոց ընտիր զորք»: ...Պարտիզաններն արդեն մտել են գյուղ և մղում են փողոցային մարտեր: Թշնամին, չդիմանալով մեր ճնշմանը, դիմեց փախուստի... Ես գյուղ հասա այն պահին, երբ պարտիզանների մի մասը ճեղքել էր օդակը և դուրս եկել գյուղից այն կողմ: Մենք հեռացանք գյուղից՝ ուժերը վերախմբավորելու և ա-

ռաջ շարժվելու համար: Շրջապատումը վերացված էր: Այդ կո-  
վում հերոսի մահով զոհվեց հրամանատար Ալեքսանդր Վիկտոր-  
ովիչ Գերմանը»<sup>144</sup>: Երթը շարունակվում էր:

3-րդ պարտիզանական բրիգադի գործողությունները տեղի  
էին ունենում Լենինգրադի և Կալինինի մարզերում՝ հիմնականում  
այն տարածքներում, որոնք հետագայում կազմեցին Պսկովի  
մարզը:

Ղրիմի մարզի պարտիզանական ջոկատները, որոնք կենտրո-  
նացած էին Յուսիսային, Չարավային և Արևելյան միավորումնե-  
րում (վերջինը կազմակերպվել էր 1944 թ. փետրվարին), հաղթա-  
հարելով բազմաթիվ դժվարություններ, շարունակում էին ոչն-  
չացնել ֆաշիստների կենդանի ուժը և տեխնիկան: Նրանց գործո-  
ղություններն ավելի ակտիվացան, երբ Կարմիր բանակը 1943 թ.  
հոկտեմբերին ծավալեց Ղրիմի ազատագրման գործողությունը:

Յուսիսային միավորման կազմում գրանցվել է շուրջ 70, իսկ  
մյուս երկու միավորումներում՝ 100-ական հայ պարտիզան:

1943 թ. Յուսիսային միավորման Ֆեոդորենկոյի ղեկավարած  
ջոկատում վաշտի հրամանատար, ապա բրիգադի (վերակառուց-  
ված նույն ջոկատն է) շտաբի պետ էր կսպիտան Գրիգոր Խաչա-  
տուրի Սարգսյանը: Միջայել Խաչատուրի Անանյանը և Բորիս Ե-  
գորի Ավետովը հետախույզներ էին: Արմենակ Սիմոնի Պոլադյանը  
ջոկատ էր ղեկավարում: Այլ ստորաբաժանման հրամանատար էր  
Արմենակ Յովակիմի Կասյանովը: Շտաբային Գրիգոր Սարգսյանը  
միաժամանակ կատարել է բազմաթիվ մարտական առաջադ-  
րանքներ: Նա հետախուզության համար եղել է Սիմֆերոպոլում,  
աչքի է ընկել Շումիսայ գյուղի կայագրի, ապա 250 մարդուց  
բաղկացած ստորաբաժանման և գումակի ջախջախման մարտե-  
րում, կազմակերպել է Սիմֆերոպոլի մոտ տեղադրված թշնամու  
հրանոթների պայթեցումը, որոնք անհամազստացնում էին պար-  
տիզաններին: 1943 թ. վերջին նրա վաշտը մասնակցել է այն  
ծանր կռիվներին, որ վիճակվել էր մղելու բրիգադին թշնամու  
հարձակման անցած խոշոր պատժիչ ուժերի դեմ: 1944 թ. Գրիգոր  
Սարգսյանին վստահվեց միավորման շտաբի պետի պաշտոնը<sup>145</sup>:

1943 թ. նոյեմբերին նույն միավորման «Սմերտ ֆաշիզմու» ջո-  
կատի վրա հարձակվեց գերմանական մեկ գումարտակ, հրետա-

նու և տանկերի աջակցությամբ: Ջոկատի հրամանատարությունը Միքայել Անանյանին և երկու այլ պարտիզանների առաջադրանք տվեց ոչնչացնել տանկերը: Նրանց հաջողվեց խփել մեկ տանկ, իսկ երկրորդի անձնակազմին գերի վերցնել: Դա մեծապես նպաստեց ֆաշիստների ջախջախմանը, որոնք շուտով ստիպված եղան դիմել փախուստի՝ մարտի դաշտում թողնելով հրանոթները և այլ զենք:

1944 թ. հունվարին Անանյանը ծանր վիրավորվեց և նորից շարք վերադարձավ բուժվելուց հետո: «Ինչպիսի՞ հիանալի պարտիզան դարձավ Միքայել Հունանի Անանյանը,— գրել է Հյուսիսային միավորման հրամանատար Պ. Ռ. Յամպոլսկին:— Նա մարտնչում էր աներկյուղ, իր քաջությամբ, հնարամտությամբ զարմացնելով նույնիսկ հմուտ պարտիզաններին»<sup>146</sup>:

Արմենակ Պոլադյանը (Օրյոլ) ղեկավարում էր N 3 Միկոյանի անվան ջոկատը, որի շտաբի պետն էր Արմենակ Կազվեջյանը: Նա մարտական գործողություններ է վարել Կրասնոպերեկոպսկի, Ռազդոլնոյեի և Պերվոմայսկոյեի շրջաններում: 1944 թ. ապրիլին ջոկատը մեծ օգնություն ցույց տվեց Ֆ. Դ. Դիբրովի ղեկավարած գումարտակին (Ուկրաինական 4-րդ ռազմաճակատի 2-րդ գվարդիական բանակի 387-րդ դիվիզիայի 1271-րդ գումը)՝ Սիվաշի հարավային ափին հենակետ գրավելու և այն ընդարձակելու մարտերի ժամանակ: Այնուհետև գումարտակի հետ միասին, ազատադրելով Դրիմի հողը, ջոկատը հասավ մինչև Եվպատորիա<sup>147</sup>:

1942 թ. հոկտեմբերից Կերչ-Թեոդոսիա խճուղում աշխատող հաճախորդների մեջ գործում էր «Կարմիր աստղ» ընդհատակյա կազմակերպությունը: Խուսափելով ձերբակալությունից՝ նրա անդամները՝ թվով 59 մարդ, 1943 թ. նոյեմբերի 4-ի գիշերը փախան և միացան Կուլիկովսկու ղեկավարած պարտիզանական բրիգադին: Հայ մարտիկները դրեցին N 10 պարտիզանական ջոկատի հիմքը: Ջոկատի հրամանատար նշանակվեց ընդհատակայինների ղեկավար Արամ Սիմոնի Տերյանը, կոմիսար՝ Արամայիս (Սաշա) Աստվածատրյանը: Փախուստից 2 օր անց հայ մարտիկները ջախջախեցին Էլբալի գյուղի ռումինական կայազորը: Հայ պարտիզանների մասնակցությամբ բրիգադը հիտլերականներին լավ ջարդ տվեց Թեոդոսիա-Սիմֆերոպոլ խճուղում՝ գրավելով 2

գնդացիր և այլ ռազմավար: Մի այլ կռվում թշնամին տվեց 100 սպանված: Բարակոլ գյուղից վռնդվեց ֆաշիստական կայազորը, գրավվեց ավար՝ նաև 100 գլուխ ոչխար, որը վերադարձվեց գյուղացիներին<sup>148</sup>: Ջոկատի տասնյակ պարտիզաններ Ղրիմի ազատագրումից հետո մտան Հայկական 89-րդ թմանայան դիվիզիայի շարքերը, և պատերազմն ավարտեցին Բեռլինում՝ պարգևատրվելով շքանշաններով ու մեդալներով<sup>149</sup>:

Մեծ երկրի հետ Ղրիմի պարտիզանների կապի գործով էին զբաղվում Նիկոլայ Արսենի Գրիգորյանը, Բարտո Ռեոդորոսի Հովհաննիսյանը և ուրիշներ: Առաջինը պարտիզանական 2-րդ սեկտորի (այնուհետև կենտրոնական օպերատիվ խմբի շտաբի, ապա Հյուսիսային միավորման) ավագ կապավորն էր, իսկ երկրորդը՝ Ռեոդոսիայի ջոկատի կապավորը, որոնք այդ նպատակով թշնամու թիկունքում իջել էին պարաշյուտով: Իր ծառայության ընթացքում Նիկոլայ Գրիգորյանը ընդունել և հաղորդել է 5000 ռադիոգիր՝ մեծապես նպաստելով պարտիզանական պատերազմի կազմակերպմանը և զարգացմանը<sup>150</sup>: Պարգևատրվել է Կարմիր աստղի, Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշաններով և Հայրենական պատերազմի պարտիզանի 1-ին աստիճանի մեդալով:

1943 թ. Ուկրաինայի տարածքում մարտնչած հայ պարտիզանների խմբերից է «Հաղթանակ» ջոկատը: Այն կազմակերպվել էր Լվովի մարզի Սելեց-Չավոնյեի ճամբարից փախած ռազմագերիների կողմից:

Ճամբարում գործում էր ընդհատակյա կազմակերպություն, որի մեջ էին Սերգեյ Հարությունյանցը, Հակոբ Հակոբյանը, Սերգեյ Խալաթյանը, Անտոն Պողոսովը, Հովհաննես Պետյանը, Երվանդ Ղասաբյանը, Մաթևոս Խաչատրյանը, Վլոդոյա Տոնյանը, Ալավերդի (Ալո) Ֆահրոյանը և ուրիշներ: Անտառում, որտեղ ռազմագերիներն աշխատում էին, կապ հաստատվեց Իվան Ֆրանկոյի անվան «Նարոդնայա գվարդիա» ընդհատակյա կազմակերպության հետ: 1942-1943 թթ. ձմռանը ճամբարից փախուստ կատարեցին տասնյակ հայ ռազմագերիներ, որոնք միացան ուկրաինական և լեհական պարտիզանական ջոկատներին: Էդուարդ Թումանյանը մարտնչել է «Լվովեց» պարտիզանական ջոկատում, ապա կռվել

է Չեխոսլովակիայում, որտեղ էլ զոհվել է, Սաքո Սահակյանը, Միքայել Գրիգորյանը և ուրիշներ կռվել են այլ ջոկատներում:

1943 թ. փետրվարյան մի գիշեր հիշյալ ճամբարից միանգամից փախան 21 ռազմագնդիներ, որոնք ուկրաինական ընդհատակայինների օգնությամբ արագորեն հեռացան դեպի անտառի խորքը և դրեցին «Հաղթանակ» պարտիզանական ջոկատի հիմքը: Հետագայում նրա կազմը քառապատկվեց՝ դառնալով բազմազգ, իսկ հայերի թիվը հասավ 45-ի: Ջոկատի հրամանատար դարձավ կապիտան Սերգեյ Արկադիի Հարությունյանցը, քաղղել՝ Հովհաննես Պետրյանը, հետախուզության պետ՝ Անտոն Պողոսովը: Ջոկերի հրամանատարներ էին Լորիս Ամիրյանը, Երվանդ Ղասաբյանը, Ալավերդի (Ալո) Ֆահրոյանը:

Ամբողջ 1943 թ. ընթացքում ջոկատը գործել է միայնակ, առանց պարտիզանների և Մեծ երկրի հետ կապ ունենալու, Արևմտյան Ուկրաինայում, որտեղ վխտում էին ուկրաինական բուրժուազգային զինված խմբեր, ռազմաքաղաքական բարդ իրադրության պայմաններում:

Առաջին մարտական գործողությունը ջոկատը կատարեց փախուստից 3 օր անց, երբ Ստրելչին գյուղի ճանապարհին նա ոչնչացրեց թշնամու երեք ավտոմեքենա, սառը գենքով վերացրեց դրանց վարորդներին և վերցրեց ռազմավար՝ մեկ ձեռքի գնդացիր, 2 ավտոմատ հրացան, 2 ատրճանակ, 5 արկղ փամփուշտ, նռնակներ, ինչպես նաև պարենամթերք: Դա այն ամենն էր, ինչով ջոկատը կարողացավ զինվել իր գոյության առաջին օրերին: Այնուհետև ևս նա թշնամուն ոչնչացնում էր նրանից խլված գենքով: Հաջորդ նշանակալի գործողությունը յուղի գործարանի պայթեցումն էր, միաժամանակ ոչնչացվեց հակառակորդի մի քանի ավտոմեքենա, ձեռք բերվեց այն տեղանքի քարտեզը, որտեղ հայ պարտիզանները մինչև այդ գործում էին գրեթե կուրորեն: Հաջորդ գիշերը խորտակվեց ֆաշիստական զինվորական գնացքը, իսկ վագոններից փախուստի դիմող հիտլերականներին դիմավորեց պարտիզանների գնդացրային կրակը: Դրանից հետո գերմանացիները ուժեղացրին իրենց հսկողությունը և սկսեցին սանրել անտառները, որը պարտիզաններին հարկադրեց փոխել իրենց տեղը: Դա 1943 թ. ամռանն էր, երբ «Հաղթանակ» ջոկատը տեղե-

կացավ Մեծ երկրի և Կուրսկի ճակատամարտում Կարմիր բանակի պատմական հաղթանակի մասին: Շուտով թշնամուց ռադիոընդունիչ խլվեց, և պարտիզանները հնարավորություն ստացան ինֆորմացիա ունենալ ռազմաճակատի դրության մասին, լսել Սոսկվայի ձայնը:

1943 թ. երկրորդ կեսին «Հաղթանակ» ջոկատը ավելի ակտիվացրեց իր պայքարը: Կոնյուխի գյուղում պայթեցվեց սպիրտի գործարանը: Լուցկ-Վլադիմիր-Վոլինսկի խճուղում մարտի բռնվեց թշնամու ուժերի հետ, պայթեցվեց մեկ զրահամեքենա, ոչնչացվեց 14 ֆաշիստ, վերցվեց ռազմավար՝ 2 ձեռքի գնդացի, մեկ ավտոմատ հրացան և 20 այլ հրացան: Սեպտեմբերի 30-ին իետ խլվեց գյուղացիներից կողոպտված 10 սայլ ցորենը, որը վերադարձվեց դրանց տերերին: Հաջորդ օրը թշնամին խոշոր ուժերով հարձակման անցավ ջոկատի վրա և ստիպված եղավ նահանջել՝ կորուստներ տալով: Ջոկեր ունեցան նաև պարտիզանները: Հոկտեմբերի 16-ին նրանք ազատեցին 120 գյուղացիների, որոնց հիտլերականները հավաքել էին Գերմանիա քշելու համար: Նոյեմբերի սկզբին Տուրուպին կայարանի մոտ պայթեցվեց երկաթուղագիծը:

«Հաղթանակ» ջոկատը զբաղվում էր քարոզչական աշխատանքով: Նա բնակչության շրջանում տարածում էր թռուցիկներ, մերկացնում էր ազգայնականների քաղաքականությունը և ուկրաինացիներին ու լեհերին կոչ անում ուժեղացնել հակաֆաշիստական պայքարը: Ջոկատի կազմակերպած քաղաքական աշխատանքի շնորհիվ որոշ թվով աղբյուրների, ուզբեկ և վրացի ռազմագերիներ անցան պարտիզանների կողմը: Հետագայում հայկական ջոկատի մարտական գործունեությունը շարունակվեց ուկրաինական պարտիզանների հետ համատեղ:

Ամենախոշոր հայկական պարտիզանական ջոկատը կրել է Ա. Ի. Միկոյանի անունը: Այն, ինչպես նշվեց, կազմակերպվել էր 1943 թ. սեպտեմբերի 16-ին Ժիտոմիրի մարզում և գործել է մինչև 1944 թ. մարտի 22-ը: Սկզբում նրա անձնակազմում կար 248 մարդ, հետագայում, ստանալով համալրումներ, հասավ մինչև 325-ի: Ջոկատը ընդգրկվեց Ուկրաինական հեծյալ պարտիզանական ջոկատների միավորման մեջ՝ դառնալով նրա ամենամարտունակ

ստորաբաժանումներից մեկը: Այդ ժամանակ միավորման կազմում կար 1200 մարդ:

Հեծյալ միավորումը (հրամանատար՝ Խորհրդային Միության հերոս, գեներալ-մայոր Մ. Ի. Նաումով) նշանավոր տեղ է գրավում Ուկրաինայի պարտիզանական շարժման պատմության մեջ: Նա այն միավորումներից է, որոնց գործունեության հիմքում ընկած էր ռազմարշավի մարտավարությունը: Միավորումը Սումիի մարզից կտրել-անցել է Ուկրաինայի բազմաթիվ մարզեր, մտել Բելոռուսիա և Լեհաստան: 1943 թ. սեպտեմբերին, երբ միավորումը գտնվում էր Ժիտոմիրի մարզում, և հայ ռազմագերիները միացան նրան, նա ավարտել էր իր երկրորդ՝ Տափաստանային արշավը, և այլ միավորումների հետ միասին առաջադրանք էր ստացել., ակտիվ գործողություններ ծավալելով, թիկունքից օգնել Կարմիր բանակին՝ Դնեպրը գետանցելու և Ուկրաինայի մայրաքաղաք Կիևը ազատագրելու համար: Միավորման հետագա գործունեության մեջ Միկոյանի անվան ջոկատը գրավեց կարևոր տեղ:

Ջոկատի հրամանատարն էր լեյտենանտ Արամայիս Հովսեփյանը, կոմիսարը՝ միավորման «Նարոդնի Կլիչ» տպագիր թերթի խմբագիր Յու. Ա. Պավլովսկին, ապա Ա. Յա. Վասյանովիչը և Պ. Ա. Վելիչկոն, շտաբի պետը՝ կապիտան Ֆ. Պ. Լորաչը, ապա լեյտենանտ Ն. Ա. Ֆուրլետը: Ուկրաինական պարտիզանների փորձված հրամանատարները հայկական ջոկատին օգնեցին քաղաքական-մարտական կոփվածությունը բարձրացնելու, միավորման ջոկատների փորձը յուրացնելու գործում:

Վաշտերի հրամանատարները նշանակվեցին Սերգեյ Սայանը և Արմեն Ղուկասովը: Հետախուզությունը վարում էր Սկրտիչ Կարապետյանը: Ստեղծվեցին կուսակցական (52 անդամ և թեկնածու) և կոմերիտական կազմակերպություններ, որոնց քարտուղարներն էին Ժորա Բաղդասարյանը և Սուրեն Հարությունյանը: Պահպանվել են ջոկատի 2-րդ վաշտի ձեռագիր օրգան «Մարտական թերթի» մի քանի համարներ:

Հայկական ջոկատի համար փորձություն և պարտիզանական քննություն դարձավ Պոտիևկայի հիտլերյան կայագրի ջախջախումը, որը նա իրականացրեց փախուստի հաջորդ իսկ գիշերը: Ծանոթ լինելով տեղանքին և թշնամու կրակակետերի և ուժերի

դասավարությանը՝ հայ պարտիզանները հաջողությամբ կատարեցին միավորման հրամանատարության առաջադրանքը: Պոտիկկայի կայազորի ջախջախումը պատմական գրականության մեջ հիշատակվում է 1943 թ. ուկրաինական պարտիզանների կողմից ոչնչացված թշնամու 63 խոշոր կայազորների թվում<sup>151</sup>:

Նա թշնամու կարևոր հենակետերից էր դաշտային ժիտոմիրշիհնայում: Ոչնչացվեցին հենակետի 4 դժտերը, կապի հանգույցը, ռադիոկենտրոնը, գրավվեց մեծ ավար՝ գեմբի և պարենամթերքի պաշարները, սպանվեց 11 և գերի վերցվեց 35 հիտլերական: Գնահատելով հայ ժողովրդի զավակների հայրենասիրությունը և խիզախությունը՝ միավորման հրամանատար Մ. Ի. Նաունովը գրել է. «Մահվան հոսպիտալը և համակենտրոնացման ճամբարը վերապրած այդ մարդիկ պահեցին իրենց հավատարմությունը հայրենիքին: Գերմանացիները զինեցին նրանց՝ հույս ունենալով հարկադրել կռվելու ֆաշիստական Գերմանիայի համար, իսկ նրանք բոլորը եկան պարտիզանների կողմը, որպեսզի ուկրաինական հողում մարտնչեն խորհրդային Հայաստանի համար»<sup>152</sup>:

Պարտիզանական միավորումը ձեռնամուխ եղավ ՌԿ(բ)Կ Կենտկոմի ցուցումի և Պարտիզանական շարժման ուկրաինական շտաբի հրամանի կատարմանը, որի մասին նշվեց վերևում: Սեպտեմբերին Ուկրաինական 1-ին ռազմաճակատի զորքերը ուժեղ ճակատամարտ ծավալեցին Դնեպրը գետանցելու և Կիևը ազատագրելու համար: Բուկի գյուղի մոտ պատրաստած օդանավակայանում պարտիզաններն ընդունեցին վայրէջք կատարած խորհրդային 7 ինքնաթիռների օգնություն հասցրած բեռը և, սպառազինվելով, ուղղություն վերցրին դեպի Կիև: Օդանավակայանի պաշտպանությունը իրականացնում էր հայկական ջոկատը, որն այդ ընթացքում Բուկի գյուղի մոտ ոչնչացրեց 42 հիտլերական<sup>153</sup>: Ժիտոմիրի և Կիևի մարզերում թշնամու փոքր և մեծաքանակ ուժերի դեմ միավորման ջոկատները մղեցին տասնյակ մարտեր՝ նյութական և մարդկային ուժի մեծ կորուստ պատճառելով նրանց, Կարմիր բանակի վճռական գործողությունների ժամանակ իրենց վրա գրավեցին զգալի քանակությամբ ֆաշիստական կանոնավոր զորամասեր:

Պարտիզանները Մայրանովկա գյուղի համար մղեցին 3-օրյա կատաղի մարտեր, ջախջախեցին հիտլերյան կայազորը: Այս մարտում հատկապես աչքի ընկան Կոնոտոպի և Միկոյանի անվան ջոկատները: Նրանք քաջաբար կռվեցին նաև Բուկի և Դերմանկա գյուղերի շրջանում հիտլերյան պատժիչ ուժերի դեմ, պաշտպանելով միավորման մյուս ջոկատների տեղաշարժը նոր դիրքեր (ոչնչացվեց թշնամու 70 զինվոր ու սպա):

Յոկոտեմբերի առաջին կեսի ընթացքում միավորման ջոկատները ֆաշիստների դեմ պայքար էին մղում ինքնուրույն: Հայկական ջոկատը գործում էր Կորոստեն–Մալին–Տուրչինկա եռանկյան շրջանում, թշնամու դեմ կռիվներ է մղել Ջլոբիչի, Դեսյատին գյուղերի մոտ: Այնուհետև ջոկատները դարձյալ միավորվեցին և նորից ուղղություն վերցրին դեպի արևելք՝ Կիև: Միկոյանցիները գտնվում էին շարասյան առջևում: Յոկոտեմբերի 19-ին նրանք Վիշկիչի գյուղում ուժեղ մարտ տվեցին ֆաշիստների դեմ՝ Տետերև գետն անցնելու համար: Հայկական ջոկատը ևս ունեցավ զոհեր: Կոդրայի և Ջաբույանյեի շրջանում (Կիևից հյուսիս–արևմուտք), խուսափելով իրենց հետապնդող ուժերից, պարտիզանները կարողացան խուսափել շրջապատվելուց: Նույնպիսի շրջապատումից միավորումը կարողացավ ազատվել Կոմարովկա գյուղի մոտ, մտավ մարտի մեջ և փախուստի մատնեց իրեն հետապնդողներին: Թշնամին կռվի դաշտում թողեց մեկ ականանետ, 3 հաստոցավոր գնդացի, սպանվածներ: Պարտիզաններին հետապնդում էին գերմանական մեկ դիվիզիա, 3 գունդ, 2 դիվիզիոն, 3 գումարտակ, գեներալ–մայոր ֆոն Ջամների հրամանատարությամբ<sup>154</sup>: Յոկոտեմբերի վերջերին ժիտոմիրի մարզում պարտիզանները մեծ կորուստներ պատճառեցին էսեսական «Բրանդենբուրգ» գնդին: Նոյեմբերի առաջին օրերին պարտիզանական ջոկատները մարտեր էին մղում Ռիշավկա, Սուշկի և Բոնդարևկա գյուղերի մոտ (Կորոստենից ոչ հեռու)<sup>155</sup>: «Ռիշավկա գյուղի մարտում,— ասված է հայկական ջոկատի հաշվետվության մեջ,— մասնակցել է 1-ին վաշտը, Սերյոժա Սայանի հրամանատարությամբ: Հակառակորդի հարձակումը կանգնեցվել է: Բացի այդ, նա հետ է մղվել և կրել է մեծ կորուստներ, սպանված

և վիրավորված է ավելի քան 70 հիտլերական: Մեր կորուստները՝ մեկ սպանված և 2 թեթև վիրավոր»<sup>156</sup>:

Ուկրաինական 1–ին ռազմաճակատի զորքերը 1943 թ. նոյեմբերի 6–ին ազատագրեցին Ուկրաինայի մայրաքաղաքը, ապա ժիտոմիրը և Կորոստենը: Գերմանական զորքերը հակահարձակման դիմեցին և կարճ ժամանակով հետ գրավեցին վերջին երկու քաղաքները: Այդ ժամանակ գեներալ–մայոր Մ. Ի. Նաունովի ղեկավարած պարտիզանական միավորումը թշնամու ոչ խորը թիկունքում շարունակում էր իր վրա գրավել ֆաշիստական ուժերին՝ օգնելով Կարմիր բանակի զորամասերին: Նոյեմբերի 13–ին պարտիզաններն ազատագրեցին Եմիլչինո քաղաքը և այն պահեցին մոտ մեկ ամիս: Այստեղ վերականգնվեց խորհրդային իշխանությունը, միավորումը հանգստացավ և նախապատրաստվեց դեպի Արևմտյան Ուկրաինա նոր ռազմերթի մեկնելու համար: Դեկտեմբերի 5–ին Եմիլչինոյի համար կատաղի մարտեր ծավալվեցին պարտիզանների և հիտլերյան կանոնավոր զորքերի միջև, որն ավարտվեց թշնամու համար մեծ կորուստներով (320 սպանված ու վիրավոր և 4 խփված տանկ): Այնուհետև միավորումը բազավորվեց Ռովնոյի մարզի Լյուդվիպոլսկի շրջանում, որտեղից հայկական ջոկատը ճանապարհ ընկավ դեպի խորհրդային թիկունք՝ Օվրուչ (ժիտոմիրի մարզի հյուսիսում)՝ կատարելու հրամանատարության խիստ պատասխանատու առաջադրանքը: «Սույնը ներկայացնող Ա. Մ. Զովսեփյանը,— կարդում ենք նրան տրված տեղեկանքում,— որը խորհրդային Միության հերոս, գեներալ–մայոր Նաունովի Ուկրաինական պարտիզանական միավորման Միկոյանի անվան հայկական պարտիզանական ջոկատի հրամանատարն է, Պարտիզանական շարժման ուկրաինական շտաբի պետ, պետական անվտանգության կոմիսար ընկ. Ստրոկաչի կարգադրությամբ քաղաք Օվրուչ է ուղարկվում 280 մարդուց բաղկացած խմբով, 80 սայլով, միավորման համար գեներ, զինամթերք, ռադիոկայան և ռադիոմարտկոց ստանալու նպատակով»<sup>157</sup>:

Ջոկատը Օվրուչ մեկնեց 1943 թ. դեկտեմբերի 26–ին, կտրեց ռազմաճակատի գիծը, կատարեց իր խնդիրը և բազա վերադարձավ 1944 թ. հունվարի 15–ին: Այս պատասխանատու և բարդ ա-

ռաջադրանքի կատարումը Միկոյանի անվան ջոկատի գործունեության փառավոր էջերից է և բարձր գնահատվեց վերադաս հրամանատարության կողմից:

Հայրենական մեծ պատերազմի պատմական բեկման տարին Մ. Ի. Նաումովի ղեկավարած պարտիզանական միավորումը եզրափակեց փայլուն հաղթանակով և նախապատրաստվեց նոր տարին նոր առաջադրանքով սկսելու համար: Նշենք, որ մինչ այդ անհաջողությամբ էին ավարտվել ինքնաթիռների միջոցով սպառազինություն ստանալու համար միավորման բազմաթիվ փորձերը: Հայկական ջոկատը մեծ հեղինակություն էր ձեռք բերել միավորման ստորաբաժանումների մեջ իր մարտունակության, նվիրվածության ու քաջության շնորհիվ: 1944 թ. նրան սպասում էին նոր դժվարություններ և հաղթանակներ:

Կիրովոգրադի մարզում հայ պարտիզանների ոչ մեծ խումբ (47 մարդ) ուներ Ի. Դ. Դիբրովի ղեկավարած Վորոշիլովի անվան միավորումը: Նրանք ընդգրկված էին այն վաշտում, որի հրամանատարն էր Գալուստ Ռուբենի Ստեփանյանը (Գրիշա), և որը շուտով վերածեց բազմազգ և բազմանդամ ջոկատի՝ գործելով 1943 թ. սեպտեմբերից մինչև դեկտեմբեր ամիսը: Նրա անձնակազմը համալրեցին նաև ռուսներ, ուկրաինացիներ, օսեր, ադրբեջանցիներ, տաջիկներ և ուրիշներ: Ջոկատի հրամանատարի տեղակալն էր Սյմոն Գյուրջյանը: Դասակի հրամանատար էր Հայկազ Թերզյանը: Հայերը փախուստի էին դիմել մարզի քաղաք Ալեքսանդրիա տեղափոխված հայկական լեգեոնի 3-րդ գումարտակից, այստեղ գործող զաղտնի կազմակերպության պլանով, տեղի պարտիզանների (ղեկավար՝ Պ. Ի. Մարկով) օգնությամբ և ուկրաինական պարտիզաններին միացել Սև կոչվող ամտառում: Սակայն նախօրյակին թշնամուն հաջողվել էր իմանալ ռազմագերիների փախուստի մտադրության մասին և դատաստան տեսնել հայ ընդհատակայինների մի մասի հետ, իսկ երկուսին գնդակահարել:

Հայ ժողովրդի զավակներն աչքի ընկան ջոկատի և միավորման իրականացրած բազմաթիվ մարտական գործողություններում:

Ջոկատի հաջողություններից է նույնների 6-ին Վոլյանոյե Էյուդի թշնամու կայազորի ջախջախումը, երբ ձեռք բերվեց նաև

մեծ ռազմավար: Երեք օր անց հայերի մի խումբ, Սմբատ Վարդանի Գևորգյանի ղեկավարությամբ, հարձակում կատարեց Իվանկովցի գյուղի կայազորի վրա, նրան պատճառելով մեծ կորուստներ: Ծանր վիրավորվեց պարտիզանների հրամանատար Ս. Գևորգյանը:

Գալուստ Ստեփանյանի ջոկատի կարևոր առաջադրանքներից էր Պլոսկոյե խոշոր գյուղի գրավումը: Հարձակումը կատարվեց վաղ առավոտյան, որը հանկարծակիի բերեց թշնամուն: Բորբոքվեց 4-ժամյա կատաղի կռիվ, որն ավարտվեց թշնամու կայազորի ջախջախումով (250 սպանվածներով ու վիրավորներով հանդերձ): Ջոկածների մեջ էին նաև դասակի հրամանատար Հայկազ Թերգյանը, Իվաչչենկոն և ռիթչ պարտիզաններ: Ազատագրված Պլոսկոյե գյուղի կայազորի պետ նշանակվեց Գալուստ Ստեփանյանը: Մինչև Կարմիր բանակի զորամասերի գալը պարտիզանները պահեցին նաև Բոգդանովկա ու Դմիտրովկա գյուղերը:

Բարձր գնահատելով հայ պարտիզանների ու նրանց հրամանատարի մարտական գործերը, Վորոշիլովի անվան պարտիզանական միավորման հրամանատարությունը գրել է. «Ընկ. Ստեփանյանի ղեկավարած մարտական գործողություններից հարկ է նշել գերմանական գումարտակների ջախջախումը Վեսյուլի Կուտ-Ցիբուկո, Չիգիտին-Ջնամենկա, Պլոսկոյե-Կրասնոսելյե ճանապարհներին, գերմանական կայազորների ջախջախումը Վեսյուլի Կուտում, Իվանկովցիում, Պլոսկոյեում, Վոդյանոյեում, Բոգդանովկայում, Դմիտրովկայում, Ջնամենկայում, գերմանացիների կողմից պարտիզանների շուրջկալի ժամանակ մղված մարտերը Սև անտառում և գերմանական մերձռազմաճակատային զորամասի շտաբի ջախջախումը, գերմանական գեներալի հետ միասին»: Մարտական գործողությունների արդյունքում հայկական ջոկատը ոչնչացրել էր ֆաշիստների 2 տանկ, 3 զրահամեքենա, 4 ականանետ և 10 զնդացի<sup>158</sup>:

Նույն մարզի Սեմեոն Դոլժենկոյի ջոկատում կոփվեցին 4 հայ պարտիզաններ՝ Հարություն Հաբեթի Հարությունյան-Սևոյան, Հովսեփ Մելիքսեթի Հովհաննիսյան, Գրիշա Բալաբեկի Հարությունյան և Պռոշա Արշակի Ադամյան, որոնք միասին հրդեհելով

թշնամու զինամթերքի պահեստները և բենզինի ցիստեռնները, փախել էին պարտիզանների մոտ: Որպես պարտիզանական քննություն, կատարելով հրամանատարության առաջադրանքը՝ Ֆեդվերն գյուղում կալանատնից ազատեցին գերմանացիների կողմից ձերբակալված կոմունիստներին<sup>159</sup>:

Կամենեց-Պոդոլսկի մարզում մարտնչում էր Խորհրդային Միության հերոս Ա. Ջ. Օդուխայի միավորումը, որի շարքերում կար ավելի քան 90 հայ (միավորումը գոյություն է ունեցել 1943 թ. սեպտեմբերից մինչև 1944 թ. ապրիլ ամիսը): Այստեղ ստորաբաժանումների հրամանատարներ էին Գրիգոր Սապունջյանը, Ցուլակ Ջալաթյանը, Լևոն Կիրակոսյանը և ուրիշներ: Ի. Ռ. Լեյանը, Մնացական Մնացականյանը և ուրիշներ մասնակցել են ռազմական գնացքների ու կամուրջների պայթեցման գործողություններին: Միայն Ի. Ռ. Լեյանի, Ի. Մ. Յակովչուկի և Կ. Մ. Գավրիլյուկի խումբը 1943 թ. սեպտեմբերին խորտակեց թշնամու չորս զինվորական գնացք: Իսկ Մ. Մ. Պոստանջյանի, Ս. Ս. Կոլոմիչուկի և Կ. Վոլկովի խումբը խփել է 2 տանկ և մեկ ավտոմեքենա: Միավորման 24 հայ պարտիզաններ արժանացել են կառավարական պարգևների: Կարմիր բանակին միանալուց հետո ռազմաճակատում ֆաշիստների դեմ պայքարը շարունակեցին 62 հայ պարտիզաններ<sup>160</sup>:

Կամենեց-Պոդոլսկի, Ժիտոմիրի, Ռովնոյի և Վոլինի մարզերում 1943–1944 թթ. Անդրեյ Գրաբչակի («Բույնի») հրամանատարությամբ գործող պարտիզանական միավորման անձնակազմում քաջի համբավ ձեռք բերեցին Արտեմ Պետրոսյանը, Աշոտ Յովհաննիսյանը, Սուրեն Ղազարյանը, Սերգեյ Կրիկորովը, Օգեր Մարտիրոսյանը, Լազար Յարությունյանը և Ի. Շահնազարյանը: Աշոտ Յովհաննիսյանի և Սուրեն Ղազարյանի մասնակցությամբ 1943 թ. սեպտեմբերին Պեչանովկա կայարանի մոտ խորտակվեց 3 գնացք՝ շարժիչների և ավտոմեքենաների բեռով<sup>161</sup>: Արտեմ Պետրոսյանին, որը փախել էր Նովոգրադ-Վոլինսկիի ռազմագերիների ճամբարից, շուտով վստահվեց դասակի, ապա վաշտի հրամանատարությունը: Յետագայում նա գումարտակի շտաբի պետ էր: Գումարտակի կոմիսար դարձավ Աշոտ Յովհաննիսյանը:

Աշոտ Յովհաննիսյանը, Սուրեն Ղազարյանը, Լազար Յարու-թյունյանը, 120 պարտիզանների թվում դարձան մասնակիցները Ուբորտ գետի վրա Օլևսկի երկաթուղային կամուրջի պայթեց-ման, որը Ա. Ս. Գրաբչակի անմիջական ղեկավարությամբ նախա-պատրաստվեց և 1943 թ. հոկտեմբերի լույս 31-ի գիշերն իրակա-նացվեց բացառիկ հնարամտությամբ: Այդպիսի պլանը բխում էր նրանից, որ կամուրջն ուներ ուժեղ պաշտպանություն և անկարե-լի էր նրան մոտենալ, իսկ պայթեցման վերաբերյալ Պարտիզա-նական շարժման ուկրաինական շտաբի (ՊՇՈՒՇ-ի) հրամանը պետք է կատարվեր: Պարտիզանները ստեղծեցին 4 ավիառում-բերից (յուրաքանչյուրը՝ 100 կիլոգրամանոց) բաղկացած ցամա-քային տորպեդ՝ այն տեղադրելով տրակտորի շարժիչով աշխա-տող քառանիվ սայլակի վրա: Այս արտասովոր դրեզինան («Դժո-խային մեքենա») իր մասերով հավաքվեց երկաթուղագծի վրա և գործի գցվեց: Տեղ հասնելով և շփվելով կամուրջի կողաձողերի հետ, դրեզինային ամրացված գերանները աշխատեցրին տորպե-դը: Կամուրջը հօդս ցնդեց և ֆաշիստներին այլևս չծառայեց<sup>162</sup>: «Դա,— գրել է ՊՇՈՒՇ-ի պետ Ստրոկաչը,— Անդրեյ Գրաբչակի միավորման նվերն էր Կարմիր բանակի հարձակվող զորամասե-րին և Յուկոտեմբերյան հեղափոխության տարեդարձին»<sup>163</sup>: Օլևսկ-Կորոստեն երկաթուղին շարքից հանվեց այն օրերին, երբ Ուկրաինական 1-ին ռազմաճակատի զորքերը կռվում էին Կիևի ազատագրության համար:

1944 թ. Ա. Գրաբչակի միավորման հայ զինակիցները ավելի հարստացրին իրենց մարտական գործերի ցանկը:

Ուկրաինական այլ միավորումների կազմում ևս գրանցված են տասնյակ հայ պարտիզաններ: «Ձա ռոդինու» միավորումը (հրա-մանատար՝ Ս. Ի. Բովկուն), որն օգնել է Կարմիր բանակին գե-տանցելու Դնեպրը, Դնեստրը և Պրիպյատը, նրանց ավերին հե-նակետեր գրավելով, իր շարքերում ուներ 27 հայ մարտիկներ: Նույն ձևով Կարմիր բանակի զորամասերի հետ իր գործողու-թյուններն է համակարգել Պոպուդրենկոյի անվան միավորումը (հրամանատար՝ Ֆ. Ս. Կորոտկով)՝ իր կազմում ունենալով 45 հայ պարտիզան (Չեռնիգովի մարզ): Մոտ 50 հայ պարտիզաններ են կռվել Շչորսի անվան (հրամանատար՝ Ս. Ֆ. Մալիկով, Ժիտոմիրի

մարզ), միավորումում: Նրանք այստեղ էին եկել, ինչպես նշվել է վերևում, ռազմագերիների ճամբարից փախչելուց հետո: Փախուստի կազմակերպիչներից Արամ Ազոյանը դարձավ հետախուզական ջոկի հրամանատար: 26 հայ պարտիզաններ կային Տերնոպոլի մարզի (հրամանատար՝ Ի. Ի. Շիտով), 25-ը՝ Լենինի անվան (հրամանատար՝ Լ. Յա. Իվանով), Խորհրդային Միության կրկնակի հերոս Ա. Ֆ. Ֆեոդորովի, Մ. Ի. Շուկաևի, Վ. Ա. Բեզմայի և ուրիշների միավորումներում: Ավագ լեյտենանտ Յայրիկ Գրիգորյանը ջոկատի հրամանատար էր Յա. Ի. Մելնիկի ղեկավարած միավորման մեջ, որը գոհվեց միավորման ռազմերթի ժամանակ 1943 թ. վերջին, Վիննիցայի մարզում:

Յայ պարտիզանները մեծ թիվ էին կազմում Բելոռուսիայում, որտեղ ժողովրդական վրիժառուների պայքարը ավելի ու ավելի էր բորբոքվում: Յայ շարքային պարտիզաններ և հրամանատարներ կային բելոռուսական պարտիզանների տասնյակ ջոկատներում ու բրիգադներում:

Սոգիլյովի մարզում Ադասի Կարապետի Գրիգորյանը (Աբրեկ) դասակի հրամանատար էր N 17 Գորեցկյան բրիգադում (հրամանատար՝ Ն. Ի. Կիտաև, կոմիսար՝ Պ. Ս. Ռեյակով): Որոշ ժամանակ նրա վաշտը գործել է Խորհրդային Միության հերոս Ս. Վ. Գրիշինի պարտիզանական գնդի հետ համատեղ, այնուհետև անջատվել է, ստեղծելով առանձին՝ N 115 Գորեցկյան բրիգադ (1943 թ. հոկտեմբեր — 1944 թ. հուլիս): Այստեղ Ադասի Գրիգորյանը 3-րդ ջոկատի կոմիսարն էր:

Նրա պարտիզանները Կուրսկի ճակատամարտի նախօրյակին 1943 թ. հունիսի 20-ին Սոգիլյով-Ուդովսկ ճանապարհին մասնակցեցին հիտլերյան ավտոշարասյան ջախջախմանը: Հուլիսի 1-ին Կրիչև-Պոգոդինո գծում պայթեցրին երկաթուղու ռելսերը և 8 խոշոր կանուրջ: 1944 թ. Գրիգորյանը երկու անգամ վիրավորվել է, սակայն վաշտից չի հեռացել: Պարզևատրվել է Կարմիր աստղի, Յայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշաններով և Յայրենական պատերազմի պարտիզանի 1-ին աստիճանի մեդալով<sup>164</sup>:

Նույն մարզում՝ Միխալապ Մակեյի ղեկավարած պարտիզանական միավորումում ջոկատի կոմիսար, ապա ջոկատի հրամա-

նատար էր կապիտան Հովհաննես Ալեքսանդրի Խաչատրյանը, որը պարտիզանական պայքարի մեջ էր 1942 թ. և շարունակեց մինչև 1944 թ.: 1943 թ. մայիսին 18 օր շարունակ Սակեյի բրիգադը, այլ պարտիզանական միավորումների հետ միասին, համառ մարտեր էր մղում թշնամու մեծաքանակ պատժիչ ուժերի դեմ շրջափակումը վերացնելու համար: Պարտիզանների համար այդ ծանր օրերին Խաչատրյանը նաև բրիգադի կոմիսարն էր: Որոշ ժամանակ նա փոխարինեց նաև բրիգադի զոհված հրամանատար Սակեյին<sup>165</sup>:

Գոմելի 1-ին պարտիզանական բրիգադում սերժանտ Վահան Վահրամի Աղաջանյանը խափանարարական խմբի հրամանատար էր, միաժամանակ զբաղվում էր հետախուզությամբ: Բրիգադի Չապակի անվան ջոկատի հրամանատար Մ. Ն. Իվանովի վիրավորվելուց հետո ընդունեց նրա հրամանատարությունը: Բրիգադը կռվել է Գոմելի, Սոգիլովի և Օրյոլի մարզերում: Բրիգադի կազմում և ինքնուրույն ջոկատը մասնակցել է 108 մարտերի, թշնամու 14 կայազորների ջախջախման և 64 գնացքների խորտակման գործողություններին: Սպանվել է 1300 գերմանացի զինվոր ու սպա: Աղաջանյանի ղեկավարությամբ պարտիզանների խումբը 1943 թ. գարնանը հրկիզել է թշնամու ռազմական պահեստները:

Վահան Աղաջանյանի խափանարարների խումբն իր գոյությունը սկսելով 40 մարտիկներով, 1943 թ. օգոստոսին վերածել էր շուրջ 500-անոց ուժեղ ջոկատի, որը կարող էր վերակառուցվել միավորման, սակայն դա չկայացավ ջոկատի հրամանատարի ցանկությամբ, որը խուսափում էր ուժերը ցրելու վտանգից: Ջոկատի իրականացրած կարևոր խնդիրներից մեկն էլ Սվետիլովիչի շրջանում պարտիզանական պայքարը վերսկսելն էր: Ջոկատից ծնվեց նաև 35-րդ պարտիզանական ջոկատը:

Վահան Աղաջանյանի ջոկատի գործունեությունը դադարեց 1943 թ. հոկտեմբերին՝ Բելոռուսիայի արևելյան մարզերի ազատագրումով և Կարմիր բանակի զորամասերին միանալով: Նույն թվականի վերջին Աղաջանյանը մեկնեց Մոսկվա, հանձնեց ջոկատի գործունեության հաշվետվությունը: Վերադառնալով Երևան՝ նա շարունակեց ընդհատված ուսումը բժշկական ինստիտուտում և ավարտելուց հետո աշխատանքի անցավ Ախալցխա քաղաքում<sup>166</sup>:

Կապիտան Սամվել Հակոբյանը, որը մասնակցել էր Կիևի պաշտպանությանը, որպես 206-րդ հրաձգային դիվիզիայի հրետանային գնդի հաուբիցային դիվիզիոնի հրամանատար, ռազմագերիների ճամբարից փախչելուց հետո դարձավ Գոմելի Վորոշիլովի անվան պարտիզանական միավորման (հրամանատար՝ Ի. Պ. Կոժեր) աչքի ընկնող ղեկավարներից մեկը: Հրետանային գործի մասնագետը նշանակվեց 9-րդ ականանետային վաշտի հրամանատար: Նրա ղեկավարած վաշտը վճռական դեր է խաղացել Ռեչիցայի և այլ շրջաններում մղված բազմաթիվ մարտերում (Սալտանովկա, Գլեբով, Գորնովկա, Նովոկրասնոյե, Դեմյոխին, Ուզնոժ, Բուդկա-Շիբենկա բնակավայրեր)՝ հակառակորդին պատճառելով կենդանի ուժի և տեխնիկայի մեծ կորուստներ: Վաշտի մարտիկներն աչքի ընկան նաև խափանարարական գործողություններում, պայթեցնելով բազմաթիվ զնացքներ ու կամուրջներ<sup>167</sup>: Պարտիզանական կռիվներից հետո Հակոբյանը թշնամուն ջախջախում էր գործող բանակում: Նրա կուրծքը զարդարել են Կարմիր դրոշի, Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի, Կարմիր աստղի շքանշանները և բազմաթիվ մեդալներ:

Գոմելի մարզում հիտլերականների դեմ մարտնչել են նաև Հովհաննես Հովհաննիսյանը, Սերգեյ Սարգսյանը, Մամիկոն Գասպարյանը, Սերգեյ Հակոբյանը, Գեղամ Վասիլյանը և ուրիշներ<sup>168</sup>:

1943 թ. Մինսկի մարզում Խորհրդային Միության հերոս Ս. Ա. Վաուպչասովի (Գրադով) ջոկատի շարքերը համալրեցին բազմաթիվ հայ պարտիզաններ, այդ թվում Արտեմ Սարգսյանը, Արկադի (Արգամ) Հովհաննիսյանը, Հրաչիկ Ոսկանյանը, Սարգիս Դոշոյանը, Յուրի Շահխաթունին, Պավել Բարսեղյանը, Կարապետ Տիրատուրյանը, Վաչե Սարգսյանը, Վազգեն Պողոսյանը, Թորգոմ Սարգսյանը և ուրիշներ: Նրանց մեծ մասը այստեղ եկավ Մինսկի ընդհատակից: Կապիտան Արտեմ Սարգսյանը, որը պատերազմից առաջ ծառայել էր Բելոռուսիայի ներքին գործերի մարմիններում (Բելոստոկ), պարտիզանական ջոկատում զբաղվում էր հետախուզությամբ և խափանարարությամբ, ագիտացիա էր տանում ռազմագերիների և բնակչության շրջանում: Ռազմագերիների ճամբարից հայ ընդհատակայինների օգնությամբ պարտիզանների մոտ է փախցրել մեկ ավտոմեքենա աղ: Հրաչիկ

Ոսկանյանը ականանետի անձնակազմի հրամանատար էր, աչքի է ընկել Շացկի և այլ վայրերի կռիվներում: Պավել Բարսեղյանը «Ռեխսային պատերազմի» լավ մասնագետ էր: Կարապետ Տիրատուրյանը (Սիլաչ), որը ռազմագերիների ճամբարից տասնյակ մարդկանց փախուստի կազմակերպիչն էր, պարտիզաններին միանալուց հետո ևս շարունակում էր աշխատել գերիների շրջանում: Տանկիստ Արկադի (Արգամ) Հովհաննիսյանը պարտիզանական ջոկատում գնդացրորդ և խափանարար էր<sup>169</sup>:

Պարտիզանական հարուստ կենսաբ. թրություն ունի ավագ լեյտենանտ Խաչատուր Աղաջանի Մաթևոսյանը, որը թշնամու թիկունքում պայքարել է 1941–1944 թթ.: 1942 թ. նա Մինսկի մարզում Չապակի անվան պարտիզանական ջոկատի հրամանատար էր: 1942–1943 թթ. ձմռանը ջոկատը մարզի մյուս պարտիզանների հետ միասին շրջապատման պայմաններում ուժեղ կռիվներ է մղել թշնամու պատժիչ ուժերի դեմ: Համատեղ գործողություններին մասնակցում էին Կալինինի, Չապակի անվան, Ս. Վաուպչասովի ղեկավարած և այլ ջոկատներ: Առաջին երկու ջոկատների հրամանատարները հանդիպել են Ս. Վաուպչասովին, որն այդ առիթով գրել է. «Մեզ մոտ ժամանեցին Սարոկան և Մաթևոսյանը: Նրանք արդեն պայքարում կոփված էին, գերմանացիների դեմ մղված մարտերում իրենց դրսևորել էին որպես ջոկատների փորձված ղեկավարներ»<sup>170</sup>:

Այնուհետև Չապակի անվան ջոկատը կռիվներ է մղել Մինսկի 2–րդ պարտիզանական բրիգադի կազմում: Այդ ընթացքում նրա անձնակազմն աճեց՝ հասնելով 350 մարդու: Պարտիզանական շարժման բելոռուսական շտաբի (ՊՇԲՇ–ի) հրամանով 1943 թ. հունիսի սկզբին ջոկատը վերակառուցվեց բրիգադի և դարձավ ինքնուրույն միավոր: Չապակի անվան բրիգադի հրամանատար մնաց Խաչատուր Մաթևոսյանը, իսկ կոմիսար նշանակվեց Մուրաշկոն: ԲԿ(բ)Կ Կենտկոմի և ՊՇԲՇ–ի ցուցումով բրիգադը ռազմարշավ կատարեց դեպի Արևմտյան Բելոռուսիա՝ պարտիզանական պատերազմի բոցը բորբոքելու համար: «Այնտեղ՝ Բելոստոկի և Գրոդնոյի մարզերում,— գրել է Խորհրդային Սիւթյան հերոս Ռոման Մաչուլսկին,— բրիգադն իր մարտական տարեգրության մեջ դարձյալ գրեց ոչ քիչ պանծալի նոր էջեր»<sup>171</sup>: 1943 թ. սեպ-

տենքեր–դեկտեմբեր ամիսների ընթացքում բրիգադը բազմաթիվ ընդհարումներ ունեցավ Պինսկի, Բարանովիչի, Գրոդնոյի և Բրեստի մարզերի տասնյակ կայազորների հետ, խափանարարություններ կատարեց Բարանովիչից դեպի Բրեստ, Վոլկովիսկ, Լունինեց և Մինսկ տանող մայրուղիներում, տասնյակ զնացքներ խորտակեց և կամուրջներ պայթեցրեց՝ թշնամուն հասցնելով կենդանի ուժի և տեխնիկայի մեծ կորուստներ: Բրիգադը իր մարտական գործողությունները շարունակեց մինչև Բելոռուսիայի լրիվ ազատագրումը:

Խաչատուր Մաթևոսյանը քաջածանոթ և հարգված անուն էր Բելոռուսիայում: Նա պարգևատրվել էր կառավարական մի քանի շքանշաններով ու մեդալներով:

«Քեռի Կոլյա» պարտիզանական բրիգադի արիասիրտ պարտիզաններից էր Միքայել Բաղդասարյանը, որը այստեղ էր եկել 1942 թ. հոկտեմբերին Մինսկի ընդհատակից: Նրա ղեկավարած խումբը մասնակցել է «Ռելսային պատերազմին» և գերմանական կայազորների ջախջախմանը: «Ալավա Ռոդինու» մարտական թերթը նրա մասին գրել է. «Բաղդասարյանը 1941 թ. հոկտեմբերից մինչև 1944 թ. հունիսը գերմանական զավթիչների դեմ մղված պայքարում գտնվելով թշնամու թիկունքում գործող ընդհատակում և պարտիզանական ջոկատում, ոչնչացրել է 318 ֆաշիստ, ընկերների հետ միասին անդունդն է գլորել թշնամու 27 շարժակազմ»<sup>172</sup>: Հետագայում կռվել է նաև ռազմաճակատում: Հայրենիքին մատուցած մարտական ծառայությունների համար Միքայել Բաղդասարյանը պարգևատրվել է Կարմիր դրոշի, Հայրենական պատերազմի 1–ին աստիճանի, Կարմիր աստղի, Փառքի 3–րդ աստիճանի շքանշաններով և բազմաթիվ մեդալներով:

Չապակի անվան պարտիզանական ջոկատում (Պինսկի մարզ) վաշտի հրամանատար էր Հովհաննես Սողոմոնի Սարգսյանը, որը մինչև պարտիզանների մոտ գալը մասնակցել էր Խոյնիկի քաղաքի ընդհատակյա կազմակերպության գործունեությանը: Ֆաշիստների դեմ պայքարը շարունակել է Բելոռուսական 1–ին ռազմաճակատում: Կրտսեր լեյտենանտ Գուրգեն Սովսեսի Հովսեփյանը ժողովրդական վրիժառուների շարքերում էր 1941 թ. դեկտեմբերից: Կռվել է Սուվորովի և Օրջոնիկիձեի անվան ջո-

կատներում (Պինսկի մարզ): Կուլբիշևի անվան բրիգադում գնդացրորդ, ապա հետախուզական դասակի հրամանատար էր Քերոբ Վարդանի Աբովյանը:

1943 թ. հոկտեմբերին պարտիզանական ջոկատի հրամանատար Սմբատ Խաչատուրի Արզումանյանը, որը թշնամու թիկունքում պայքարի մեջ է գտնվել 1941 թ. մինչև 1944 թ., նշանակվեց Ստալինի անվան բրիգադի հրամանատար Բրեստի մարզում: Բրիգադի կոմիսարն էր Շկոլոբոդան, իսկ շտաբի պետը՝ Սերգեյ Նիկիտայի Կիտյանը: Վերջինս, որի պարտիզանական գործունեությունը դարձյալ սկսվել էր 1941 թ., 1943 թ. հունվարից մինչև հուլիս ամիսը փոխարինել էր բրիգադի ջոկատներից մեկի զոհված հրամանատար Չերնյակին: Ակտիվ մասնակցություն էր ունեցել նաև Ֆրունզեի անվան ջոկատի կազմակերպման գործում: Բրիգադի անձնակազմում կար ավելի քան 600 մարդ, իսկ 1944 թ. մարտին հասավ 2000-ի: Պարտիզաններն ընդգրկված էին 4 ջոկատներում: Բրիգադը ջախջախել է ֆաշիստական տասնյակ կայազորներ, Բրեստ-Մինսկ, Բրեստ-Կովել, Բրեստ-Պինսկ երկաթուղիներում խորտակել մեծաթիվ գնացքներ: Հիտլերականների կրած կենդանի ուժի կորուստները կազմում էին մի քանի հազար զինվոր ու սպա<sup>173</sup>:

Կապիտան Հովհաննես Ալեքսանդրի Խաչատրյանը Բարանովիչի պարտիզանների մեջ էր 1941 թ.: Նա Չապաևի անվան ջոկատի, ապա բրիգադի կոմիսարն էր<sup>174</sup>: Վաշտի քաղղեկ էր կրտսեր լեյտենանտ, Կարմիր աստղի շքանշանակիր Հարություն Սամսոնի Ավետիսյանը Բարանովիչի մարզի Շչորսի անվան ջոկատում: Բրեստ-Բարանովիչի երկաթուղում նրա ղեկավարած խումբը խորտակել է հակառակորդի 3 զինվորական գնացք:

Բելոռուսական վրիժառուների շարքում շուրջ 30 հայ պարտիզաններ են մարտնչել Բրեստի մարզի Լեհինի անվան բրիգադում: Նրանց թվում էին Փայլակ Մարտիրոսյանը, Էդուարդ Գրիգորյանը, Արտեմ Սարգիսովը, Գուրգեն Միրզախանյանը, Միհրան Մարկոսյանը, Գրիգոր Մելիքյանը և ուրիշներ, իսկ Կոստանդին Մարդանյանը, Արտավազդ Առաքելյանը, Աշոտ Ավագյանը, Սմբատ Մարտիրոսյանը և Գրիգոր Հարությունյանը բրիգադի շարքերն էին մտել 1943 թ. աշնանը, եկել էին Լեհաստանից: Լեհական ընդհա-

տակայինների օգնությամբ նրանք փախել էին գերությունից և Կելցեի վոյևոդության Ռադոմի շրջանի Չեխովի անվան պարտիզանական ջոկատին միացել նույն թվականի փետրվարին: Այս բազմազգ ջոկատի հրամանատարն էր Խորեն Թումանյանը (Նի-նիկ), որի պարտիզանական գործունեությունն սկսվել էր 1942 թ. և ավարտվել այն ժանր մարտում, որը պարտիզանները մղել էին թշնամու գերակշիռ ուժերի դեմ, և որտեղ ջոկատի հրամանատարը ֆաշիստների ձեռքը չընկնելու համար վերջ էր տվել իր կյանքին: Բրեստի մարզում հայ պարտիզանները համալրեցին բրիգադի՝ ժուկովի և Կոտովսկու անվան ջոկատները: Այստեղ ևս հայ պարտիզանները թշնամու դեմ կռվեցին խիզախությամբ և անձնագոհ կերպով: Արտավազդ Առաքելյանին վստահվեց վաշտի, Կոստանդին Մարդանյանին՝ դասակի հրամանատարությունը: Սմբատ Մարտիրոսյանը գնդացրորդ էր, միաժամանակ մասնակցել է թշնամու 3 գնացքների խորտակման առաջադրանքների կատարմանը: Շուտով նա ևս առաջ քաշվեց դասակի հրամանատար:

Բելոռուսիայի պարտիզանական բրիգադներում և ջոկատներում մի շարք հայ բժիշկներ և բժշկական աշխատողներ ոչ մի ջանք չեն խնայել վիրավորներին բուժելու համար: 3-րդ կարգի զրնվորական բժիշկ Դանիել Սակարի Ծերենցյանը Պինսկի պարտիզանական միավորման Կալինինի անվան ջոկատի սանիտարական ծառայության պետն էր: Մասնակցել է նաև մարտական գործողություններին, գլխավորել է Բրեստ-Կովել խճուղում կամուրջի պայթեցման առաջադրանքի կատարումը՝ արժանանալով Կարմիր աստղի շքանշանի: Քաղաքացիական կռիվների մասնակից, Արևմտյան ռազմաճակատում 19-րդ բանակի 469-րդ դաշտային հոսպիտալի ավագ վիրաբույժ Նիկիտա Գերասիմի Յուզբաշովը օկուպացիայի պայմաններում Բորիսով քաղաքի (Մինսկի մարզ) հիվանդանոցում բուժում և օգնում էր Կարմիր բանակի զերի մարտիկներին և բնակիչներին: Խուսափելով բանտարկվելու վտանգից՝ ընդհատակային Նիկիտա Յուզբաշովը 1943 թ. սեպտեմբերին փախավ պարտիզանների մոտ՝ դառնալով «Ռազգրոմ» բրիգադի գլխավոր վիրաբույժը: Համբարձում Սարգսի Հովհաննիսյանը 1943-1944 թթ. Պոնոմարենկոյի անվան պարտիզանական ջոկատի սանիտարական մասի պետն էր: Ս. Վաուպշասովի պար-

տիզանական ջոկատի վիրավորներին բուժում էր վիրաբույժ Սարգիս Լևոնի Դոշոյանցը: Գոմելի մարզում պարտիզանների առողջությանը հետևում էին 2–րդ կարգի զինբժիշկ Գազիկ Ավետիսի Ավետիսյանը, բուժակ Ռաֆայել Գրիգորի Առաքելյանը: Տասնյակ վիրավոր մարտիկների կռվի դաշտից հանել և առաջին օգնություն և ցույց տվել Կիրիլ Օստրովսկու ղեկավարած ջոկատի բուժքույր Նատալյա Կարապետի Սարգիսովան<sup>175</sup>:

1943 թ. պարտիզանական պատերազմը ծավալվեց նաև Մերձբալթյան հանրապետություններում: Լատվիական վրիժառուների շարքերում էին Պյոտր Սադոյանը, Վլադիմիր Յովիանենսի Սաֆարյանը, Միրոն Սիսակի Մարուխյանը, Էդուարդ Պետրոսի Ազիզյանը<sup>176</sup>:

Վլադիմիր Սաֆարյանը և Միքայել Նահապետի Սկրտչյանը «Լայվինյա» բրիգադի (հրամանատար՝ Վիլիելմ Լայվինշ, կոմիսար՝ Օտոմիր Օշկալնս) 1–ին ջոկատի շարքերն էին մտել 1943 թ. սեպտեմբերի 16–ին<sup>177</sup>: Ջոկատի հրամանատար Վիլիս Սամսոնի օրագրում այդ օրվա համար կատարված է հետևյալ գրանցումը. «Ցե» ենթաջոկատի կոմիսար Կաուլալուժի մոտից գալիս է կապավոր Յակովլևը, նրա հետ են Պավլովը և Պուրմալայի կայագործից հայեր Սաֆարյանն ու Սկրտչյանը, որոնք հրկիզել էին զենքի և զինամթերքի պահեստը»<sup>178</sup>: Յոկտեմբերի 6–ին Սաֆարյանը Կոնդրատի Ջիլևի խմբում մասնակցեց երկաթուղային ռելսերի պայթեցման գործողություններին Պոլնոլորի կայարանից հարավ<sup>179</sup>: 1943 թ. հոկտեմբերի 30–ին, ինչպես արձանագրված է նույն օրագրում, հայ պարտիզաններին փոխադրել են Կալինինի մարզի 5–րդ պարտիզանական բրիգադ: Մյուս ջոկատների հայ պարտիզանները մնացել են տեղում:

Մակար Անդրեասի Սարգսյանը և Հաբեթնակ Պետրոսի Աբրահամյանը եղել են Կեստուտիսի անվան պարտիզանական ջոկատում (Լիտվա): Ալեկո–Գրոզնու հրամանատարությամբ գործող N 14 ջոկատի պարտիզան Գուրգեն Ավագի Վարդանյանը 1943 թ. օգոստոսի 23–ին պայթեցրեց գերմանական «Վագր» տանկը<sup>180</sup>:

Լիտվայում պարտիզանական ջոկատի հրամանատար էր Աշոտ (Նիկոլայ) Սարաբյանը: 1942 թ. կազմակերպված և սկզբնա-

պես 30 հոգուց բաղկացած նրա ջոկատը դարձավ բազմանդամ և երկու տարի կռվեց թշնամու դեմ, պայթեցրեց կամուրջներ, ոչնչացրեց ավտոմեքենաներ, տեխնիկայով ու կենդանի ուժով, փրկեց ստրկության քվոլդ լիտվացի շատ կանանց ու երեխաների: 1944 թ. օգոստոսին ջոկատը խանգարեց նահանջող թշնամուն՝ պայթեցնելու Շեշտոկ գետի երկաթուղային մեծ կամուրջը, որը խիստ անհրաժեշտ էր խորհրդային զորքերի առաջխաղացման համար:

Այսպիսով՝ Հայրենական մեծ պատերազմի ընթացքում արմատական բեկում ստեղծելու մեջ իրենց բաժինը դրեցին խորհրդային վրիժառուները, որոնք թշնամուն անհանգստացնում էին նրա թիկունքում, քայքայում նրա հաղորդակցության ուղիները, խորտակում զինվորական գնացքները, պայթեցնում կամուրջները, իրենց վրա գրավում թշնամու մեծաքանակ կանոնավոր ուժեր: 1943 թվականը նշանավոր էր «Ռեկսային պատերազմով»:

Խորհրդային պարտիզանների բազմազգ ընտանիքում քիչ չէր նաև հայ ժողովրդի զավակների թիվը: Նրանցից շատերը, փախչելով գերությունից, համալրեցին տասնյակ պարտիզանական միավորումների, բրիգադների ու ջոկատների շարքերը: Հայ պարտիզաններ կային թշնամու կողմից զավթած շատ տարածքներում: Նրանք ցույց տվեցին խիզախության, արիության և անձնագոհության հիանալի օրինակներ:

Ռուս, ուկրաինացի, բելոռուս, լատիշ և խորհրդային մյուս ժողովուրդների ընտանիքում աճեցին և ատելի թշնամու դեմ մարտնչեցին հայ ժողովրդի հարյուրավոր զավակներ, որոնցից շատերը իրենց կյանքը չխնայեցին Հայրենիքի ազատության ու անկախության համար:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀՈՂԻ ԼՐԻՎ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ՊԱՅՔԱ-  
ՐՈՒՄ

1944–1945 թթ. նշանավորվեցին նոր, վճռական հաղթանակներով: Շարունակելով արմատական բեկման տարվա ընթացքում ձեռք բերած հաջողությունները, որոնց շնորհիվ թշնամուց ազատագրվեց խորհրդային զավթած տարածքի մեկ երրորդը, Կարմիր բանակը զարգացրեց հարձակողական գործողությունները՝ երկրից ֆաշիստներին լրիվ վռնդելու և պատերազմական գործողությունները եվրոպայի երկրներ ու բուն Գերմանիա փոխադրելու համար: Սկսվեց Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտի ժամանակաշրջանը:

Թշնամու թիկունքում խորհրդային պարտիզանների ու ընդհատակայինների պայքարը դարձավ ավելի ուժգին ու նպատակասլաց: Ի տարբերություն նախորդ տարիների՝ 1944 թ. պարտիզանական պատերազմը ավելի սերտորեն էր համաձայնեցվում Կարմիր բանակի հարձակողական գործողությունների ու պլանների հետ: Չնայած մեծ տարածքների ազատագրմանն ու պայքարի միջավայրի կրճատմանը՝ պարտիզանական ջոկատների ու միավորումների և նրանց անդամների թիվը ոչ միայն չպակասեց, այլև աճեց: 1944 թ. սկզբին խորհրդային ռազմակալված հողում պայքարի մեջ էին 250 հազար պարտիզաններ 1943 թ. հունվարի 120 հազարի դիմաց<sup>181</sup>:

Խորհրդային վրիժառուների պայքարի կազմակերպումը և ղեկավարումը շարունակում էր գտնվել կոմունիստական կուսակցության ուշադրության կենտրոնում: Կուսակցական ընդհատակյա կազմակերպությունների կազմակերպման և քաղաքական

մեծ աշխատանքի շնորհիվ զինված պայքարի ելան հայրենասերների նորանոր ուժեր, մյուսները թշնամու դեմ պայքարում էին՝ նենգադուլի ենթարկելով նրա միջոցառումները:

Ուժեղացավ կուսակցական կազմակերպությունների բանավոր և գրավոր քարոզչությունը պարտիզանների ու բնակչության շրջանում: Իրենց թերթերն ունեին գրեթե բոլոր կուսակցական կոմիտեները և պարտիզանական միավորումների ու բրիգադների մեծ մասը: Տպագրվում և տարածվում էին բազմաթիվ թռուցիկներ: Խորհրդային ավիացիան զենքի ու ռազմական բեռի հետ միասին ավելի շատ թերթեր ու քարոզչական նյութեր էր հասցնում թշնամու թիկունք: Ուժեղացավ աշխատանքը ուկրաինական, բելոռուսական, մերձբալթյան և մյուս ազգայնականների մերկացման ուղղությամբ, որոնք կատաղի դիմադրություն էին ցույց տալիս Կարմիր բանակի առաջխաղացմանը:

Պարտիզանական պայքարի ռազմական ղեկավարությունը իրականացնում էին պարտիզանական շարժման շտաբները և ռազմաճակատների զինվորական խորհուրդները: Ղեկավարումն ավելի օպերատիվ դարձնելու համար 1944 թ. սկզբին վերացվեց պարտիզանական շարժման կենտրոնական շտաբը (ՊՇԿՇ): Ավելի բարձրացավ հանրապետական և մարզային շտաբների դերը: Պարտիզանների հետ նրանց անմիջական կապն իրականացվում էր ռադիոկայանների միջոցով, որոնց թիվը 1944 թ. հունվարին հասնում էր 424-ի<sup>182</sup>:

Պարտիզանների կազմը շարունակում էր մնալ բազմազգ: Ռուսների, ուկրաինացիների, բելոռուսների հետ միասին ժողովրդական վրիժառուների շարքերում թշնամու դեմ կռվում էին խորհրդային այլ ժողովուրդների զավակներ: 1944 թ. իրենց մարտական գործողություններն էին շարունակում «Յաղթանակ», Սիկոյանի անվան և N 10, N 41 պարտիզանական ջոկատները, որոնք հիմնականում բաղկացած էին հայերից: Յայ ժողովրդի շատ զավակներ կային Ուկրաինայի, Բելոռուսիայի և այլ շրջանների բազմաթիվ պարտիզանական ջոկատներում ու միավորումներում:

N 41 պարտիզանական ջոկատը (հրամանատար՝ կապիտան Արտեմ Գևորգի Սաղունյան, կոմիսար՝ Ա. Ի. Միգրով, ապա Կ. Ֆ. Մատյուշչենկո, շտաբի պետ՝ Ջավեն Յանբարձունյան, ապա Եր-

վանդ եղիագարյան), որը գտնվում էր Գերմանի անվան բրիգադի 4-րդ գնդի կազմում (Լենինգրադի մարզ), և որի մարտական գործողությունները սկսվել էին 1943 թ. օգոստոսին, 1944 թ. աչքի ընկավ մի շարք կռիվներում: Բրիգադի գործողություններն ակտիվ բնույթ ընդունեցին հենց տարվա սկզբից, երբ Լենինգրադի ռազմաճակատի զորքերը հարձակողական լայն գործողություններ ծավալեցին, վերացրին Լենինգրադի (Սանկտ Պետերբուրգ) շրջափակումը և ազատագրում էին մարզի տարածքը: Բրիգադը, ըստ ռազմաճակատի հրամանատարության առաջադրանքի, շարժվեց դեպի հյուսիս, նահանջող գերմանական զորքերի թիկունքին ավելի մոտ՝ նրանց նահանջը դժվարացնելու և թիկունքից հարվածներ հասցնելու համար: Պարտիզաններն օգնում էին Կարմիր բանակին՝ արագացնելու մարզի ազատագրումը:

Բրիգադի գործողությունները կենտրոնացան Լուգա-Պսկով խճուղու և երկաթուղագծի շրջանում՝ ֆաշիստների նահանջի ուղղությամբ: Այստեղ տեղաշարժվելու ժամանակ, երբ 3-րդ բրիգադը անցնում էր Պսկով-Պորխով երկաթուղին, հանդիպեց թշնամու ուժեղ դիմադրությանը: Ծնշելով այն՝ բրիգադը, 4-րդ գնդի պաշտպանությամբ, հաղթահարեց երկաթուղագիծը, իսկ 41-րդ ջոկատը պաշտպանում էր գնդի անցումը: Լարված մարտերում խճուղու շրջանում, ճնշելով հակառակորդի կրակակետերը, ջոկատը դուրս եկավ երկաթուղագիծ, որտեղ հիտլերականներն ունեին 2 զրահադեզինա, մեկ զրահամեքենա և գնդացրային կետեր երկու թևերում: Ոչնչացնելով վերջիններիս՝ պարտիզանները իրենց գնդացիրը փոխադրեցին երկաթուղու պաստառի վրա, որտեղ նրանք հաջողությամբ շարունակեցին թշնամու ջախջախումը: Այս մարտում աչքի ընկավ Սարգիս Ասրյանի ղեկավարած ջոկը և ուրիշ պարտիզաններ: Երկաթուղին հաղթահարելու ժամանակ բրիգադը ոչնչացրեց 105 հիտլերական, որից 46-ը բաժին էր ընկնում 41-րդ ջոկատին: Պարտիզանները ևս կորուստներ ունեցան, զոհվեց շտաբի պետ Զավեն Զամբարձունյանը: Ջոկատը գրկվեց գումակի ձիերից<sup>183</sup>:

«Փետրվարի 12-ի գիշերը, — կարդում ենք 4-րդ գնդի փաստաթղթերից մեկում, — գնդի ջոկատներով հզոր հարձակում կատարվեց հակառակորդի վրա՝ Պսկով-Լուգա խճուղու: Զարձակ-

ման և դրան հաջորդող մարտական գործողությունների շնորհիվ հակառակորդի վրա՝ կարևոր հաղորդակցության ուղին դադարեց գործել»։ 41-րդ ջոկատը կատարեց այդ մարտուղու խոշոր կամուրջներից մեկի պայթեցման առաջադրանքը։ Աչքի ընկան ջոկատի վաշտի հրամանատար Գլուշկովը, դասակի հրամանատար Իվանովը, շարքային Կարապետյանը և ուրիշներ<sup>184</sup>։

Նախորդ ժամանակաշրջանի մման պարտիզանների մարտական գործողության հիմնական եղանակը «Ռելսային պատերազմն» էր։ 1943 թ. վերջից բրիգադը հիմնականում դարձել էր խոշոր խափանարարական ստորաբաժանում։

Օստրով-Ռեզեկեն և Պսկով-Պորխով գծերում միայն 1944 թ. հունվար ամսվա ընթացքում Լազար Բալայանի, Սարգիս Գասպարյանի, Վասիլի Նիկանդրովի, Գ. Ցիմերմանի, Գառնիկ Ղարիբյանի, Ա. Գլուշկովի, Նեչևսի և մյուսների ղեկավարությամբ խորտակվեց դեպի ռազմաճակատ և ռազմաճակատից մեկնող 13 զինվորական գնացք՝ կենդանի ուժով, տեխնիկայով և պարենամթերքով։ Նույն գծերում հողս ցնդեցին տասնյակ ռելսեր<sup>185</sup>։

41-րդ ջոկատը, կատարելով Ղեղովիչի-Չիխաչևո գծում երկաթուղային մեծ կամուրջի (Շելոն գետ) պայթեցման առաջադրանքը, ուժեղ կռիվ սարքեց հիտլերականների հետ, որի հետևանքով ոչնչացվեց կամուրջի պահակակետը, 30 ֆաշիստ, 3 դզօտ, մեկ լուսարձակ, զրավվեց մեկ հաստոցավոր գնդացիր և այլ ռազմավար<sup>186</sup>։ Մի այլ կամրջի պայթեցման շնորհիվ, որը համատեղ իրականացրին մի քանի ջոկատներ, ստեղծվեց ֆաշիստների ուժերի մեծ կուտակում, որի վրա գրոհեցին խորհրդային ռմբակոծիչներ<sup>187</sup>։

Փետրվարին, երբ ավարտվում էր Լենինգրադի մարզի ազատագրումը, 3-րդ բրիգադը շարունակում էր ջախջախիչ հարվածներ հասցնել նահանջող թշնամուն։ Այդ ընթացքում աչքի ընկան բրիգադի 4-րդ գունդը և վերջինիս 41-րդ ջոկատը։ «Գնահատելով մարտական և խափանարարական գործունեությունը, — ասված է 4-րդ գնդի փետրվար ամսվա ամփոփագիր-հրամանում, — ինչպես նաև ֆաշիստական ատրկության քվելուց խաղաղ բնակչությանը փրկելու և նրան Ելութական օգնություն ցույց տալու աշխատանքը, կարելի է նշել, որ մրցության մեջ պարտիզանական

ջոկատները գրավել են հետևյալ տեղերը. 1–ին տեղ՝ 41–րդ պարտիզանական ջոկատ (հրամանատար՝ ընկ. Ա. Սաղումյան, զինկոմ՝ ընկ. Կ. Մատյուշչենկո) և 35–րդ ջոկատ (հրամանատար՝ ընկ. Տատալին, զինկոմ՝ ընկ. Ֆեոդորով), 2–րդ տեղ՝ 37–րդ ջոկատ (հրամանատար՝ ընկ. Պանցևիչ, զինկոմ՝ ընկ. Շուտկին): Անձնակազմի խիզախության և արիության շնորհիվ գունդը փետրվար ամսին գրավել է առաջին տեղը բրիգադի գնդերի մեջ»<sup>188</sup>:

1944 թ. փետրվարի 26–ին Ռիկ և Վորոբյովո գյուղերի մոտ Լենինգրադի մարզի Գերմանի անվան 3–րդ պարտիզանական բրիգադը միացավ Լենինգրադի ռազմաճակատի հարծակվող գորքերին և նրանց հետ միասին փետրվարի 28–ին մասնակցեց Սլավկովիչի քաղաքի ազատագրմանը: Այստեղ բրիգադը ստացավ Լենինգրադի պարտիզանական շարժման շտաբի հրամանը՝ դուրս գալ դեպի Լենինգրադ, մասնակցելու մարզի ժողովրդական վրիժառուների տոնահանդեսին, որը տեղի ունեցավ մարտի կեսերին:

Ավարտվեց 41–րդ հայկական պարտիզանական ջոկատի գործունեությունը: Իր գոյության մոտ 7 ամսվա ընթացքում ջոկատը ոչնչացրել է թշնամու 2004 զինվոր ու սպա, 88 ավտոմեքենա, խորտակել է 25 զինվորական գնացք, պայթեցրել է 8 երկաթուղային ու խճուղային կամուրջ, 1676 երկաթուղային ռելս, ջախջախել է մեկ կայազոր: Գրավվել է զգալի ռազմավար<sup>189</sup>: Այսպիսով՝ սկզբում լրիվ, իսկ հետագայում զգալի չափով հայ մարտիկներից բաղկացած 41–րդ պարտիզանական ջոկատը ատելի թշնամու դեմ կռվել է քաջաբար և ոչինչ չի խնայել նրան ջախջախելու, հայրենիքը պաշտպանելու համար:

N 41 ջոկատից տարածությամբ ոչ չատ հեռու, Կալինինի մարզում պարտիզանական ոչ բազմամոդան ջոկատ էր ղեկավարում կապիտան Միքայել Մակարի Բաբաևը, որը մինչև ջոկատի՝ հրամանատար նշանակվելը մարզի 15–րդ բրիգադի «Սմերտ ֆաշիզմու» ջոկատի շտաբի պետն էր: Նրա ղեկավարած ջոկատը իր գոյության կարճատև ժամանակամիջոցում խորտակել է թշնամու երկու զինվորական գնացք և նրան պատճառել կենդանի ուժի ու տեխնիկայի այլ կորուստներ: Միքայել Բաբաևը պարգևատրվել է Բոգդան Խմելնիցկու 3–րդ աստիճանի շքանշանով<sup>190</sup>:

Ղրիմի մարզի բրիգադներից մեկում (հրամանատար՝ Կուլիկովսկի) գործում էր հիմնականում հայ ռազմագերիների «Կարմիր աստղ» ընդհատակյա կազմակերպության անդամներից բաղկացած N 10 ջոկատը (ընդհատակայիները պարտիզանների մոտ էին փախել 1943 թ. նոյեմբերին): Ջոկատի հրամանատարն էր Արամ Սիմոնի Տերյանը, կոմիսարը՝ Արամայիս (Սաշա) Աստվածատրյանը:

Ուկրաինական 4-րդ ռազմաճակատի և Առանձին մերժոմյան բանակի զորքերը նախապատրաստվում են Ղրիմի ազատագրության գործողությունների: Ղրիմի պարտիզանները ստացան կոնկրետ առաջադրանք՝ թշնամու թիկունքից օգնել Կարմիր բանակի զորքերին<sup>91</sup>: Ղրիմը ռազմավարական մեծ նշանակություն ուներ նրա համար: Իսկ պարտիզանների դեմ ֆաշիստները խոշոր պատժիչ ուժեր նետեցին: Պարտիզանների գործողություններն ավելի օպերատիվ դարձնելու նպատակով մարզի պարտիզանական բրիգադներն ու խմբերը կենտրոնացել էին 3՝ Արևելյան, Յյուսիսային և Յարավային միավորումների մեջ:

1944 թ. հունվար-փետրվարին Կուլիկովսկու ղեկավարած և մյուս պարտիզանական բրիգադները, անընդհատ տեղաշարժեր կատարելով, հարձակումներ էին կազմակերպում թշնամու հաղորդակցության ուղիների վրա՝ խուսափելով իրենց վրա հարվածներ ընդունելուց: Կուլիկովսկու բրիգադը գործում էր Ստարի Կրիմի և Կարասուբագարի անտառներում: Առանձին օրեր պարտիզանները հետ են մղել պատժիչների միմյանց հաջորդող մի քանի գրոհ: Փետրվարի 21-ի կռվում բրիգադի N 10 և մյուս ջոկատներն ունեցան զգալի կորուստներ, որը հանգեցրեց նրանց վերակառուցմանը: N 10 ջոկատը համալրվեց և ընդգրկվեց նորաստեղծ Արևելյան միավորման 2-րդ բրիգադի 2-րդ ջոկատի մեջ: Մարտ-ապրիլ ամիսներին պարտիզանները համագործակցում էին Կարմիր բանակի առաջխաղացող զորամասերի հետ: Ապրիլի 12-ին նրանք Սուդակի և Ստարի Կրիմի շրջաններում կտրեցին նահանջող ֆաշիստների ճանապարհը՝ նրանց պատճառելով մեծ կորուստներ: Շուտով նրանք մարտերը տեղափոխեցին Ստարի Կրիմի փողոցները և կեսօրին այն ազատագրեցին: Հաջորդ օրը քաղաք մտան Կարմիր բանակի զորամասերը:

Յալթայի ազատագրումից հետո N 10 ջոկատի հայ պարտիզանները համալրեցին 89-րդ հայկական թամանյան դիվիզիայի շարքերը, որը 1944 թ. հուլիսին մասնակցեց Սևաստոպոլի ազատագրմանը, ապա հաղթական երթով հասավ Բեռլին: Նրանցից շքանշաններով հայրենիք վերադարձան Արամ Տերյանը, Պայքար Ներսիսյանը, Բարունակ Ջանգուլյանը, Վաղարշակ Սկրտչյանը և ուրիշներ:

Ղրիմի Արևելյան միավորումում, որի կազմում էին 2-րդ և 3-րդ բրիգադները, 8 ջոկատներով, հայ պարտիզաններ կային 2-րդ բրիգադի 1-ին և 2-րդ ու 3-րդ բրիգադի 5-րդ և 6-րդ ջոկատներում, ընդամենը՝ 100 հայ: Նրանց մեծ մասը եկել էր ընդհատակից: 1-ին ջոկատում էին կռվում պրոլետնի ընդհատակայիները: Հայաբնակ Պրոլոմ (Պարտիզանսկոյե) գյուղում 1942-1943 թթ. գաղտնի աշխատանք տանելուց հետո կազմակերպության (ղեկավարներ՝ Պավել Կուզմին, Գուրգեն և Գարեգին Ասլանյան եղբայրներ, Լեոնիդ Ուվարով) անդամները հեռացան անտառ՝ միանալով պարտիզաններին: Պարտիզանական ջոկատում Լեոնիդ Ուվարովը կոմիսար էր, իսկ Պավել Կուզմինը և Գուրգեն Ասլանյանը նրա ակտիվ օգնականները: Ջոկատի անձնակազմի շատ անդամներ աչքի ընկան մարտական զործողություններում, հետախուզության մեջ և այլ առաջադրանքներ կատարելիս: Գարեգին Ասլանյանի ակտիվ մասնակցությամբ պարտիզանների կողմն անցավ ռունինական զինվորների մի խումբ: Գուրգենի և Գարեգինի ղեկավարությամբ պարտիզանները զնդակահարությունից ազատեցին մահվան դատապարտված 19 ռազմագերիների: Քաջ հետախույզներ էին Վարդան և Լիդա Շագանովները և ուրիշներ:

Հյուսիսային միավորման ջոկատներում կային 70 հայ պարտիզաններ: Կապիտան Գրիգոր Խաչատուրի Սարգսյանը միավորման 1-ին բրիգադի, ապա՝ միավորման շտաբի պետն էր: Նա պարտիզանական պատերազմի մեջ էր 1942 թ. օգոստոսից և կատարած սխրագործությունների շնորհիվ հայտնի էր դարձել Ֆեոդորենկոյի ղեկավարած ջոկատում: Ջոկատը 1943 թ. վերջին վերակառուցվեց բրիգադի և կրում էր «Գրոզնի» («Ահեղ») անունը: Ղրիմի պարտիզանական շարժման շտաբը բարձր էր գնահատել Գրիգոր Սարգսյանի ծառայությունը: «Ղրիմի համար մղված վճ-

ռական մարտերի ժամանակ ընկ. Սարգսյանը,— գրված է նրա պարզևաթերթիկում,— հմտորեն մշակեց բրիգադների ու ջոկատների գործողությունների պլանը, նրանց տեղաբաշխումը անմիջապես մարտի վայրում: Նրա հմուտ պլանավորման շնորհիվ բրիգադները և ջոկատները մինչև Կարմիր բանակի զորամասերի մոտենալը ազատագրեցին Ջուլա, Կարասուբազար շրջկենտրոնները և շատ այլ բնակավայրեր: Ջոկատները գրավեցին բոլոր մայրուղիները և լրիվ կտրեցին դեպի Սիմֆերոպոլ, Սևաստոպոլ, ինչպես նաև դեպի Ալուշտա տանող թշնամու նահանգի ծանապարհները... Սինչև Ղրիմի ազատագրումը ընկ. Սարգսյանը մեծ աշխատանք էր տարել Սիմֆերոպոլում գերմանական լրտեսների ու հայրենիքի դավաճանների հայտնաբերման ու ջախջախման ուղղությամբ»:

Ղրիմի Հարավային պարտիզանական միավորման կազմում գրանցվել է մինչև 100 հայ պարտիզանի անուն: Պայքար Ներսիսյանը և Հայրապետ Գրիգորյանը գերությունից պարտիզանների մոտ փախան 1943 թ. սեպտեմբերին: Նրանց համատեղ մարտական հաշվում գրանցված է մեկ պայթեցված երկաթուղային կամուրջ, Ալուշտայում ֆաշիստներին սպասարկող կինոթատրոնի շենքի հրդեհումը, խափանել են թշնամու հեռախոսային ու հեռագրական կապի գծերը: 1944 թ. ապրիլին նրանք Բախչիսարայի պարտիզանական ջոկատ հասցրին ոչխարի մի ամբողջ հոտ: Նրանցից շատերը նույնպես համալրեցին 89-րդ Թամանյան դիվիզիայի շարքերը<sup>192</sup>:

1944 թ. Ուկրաինայում «Հաղթանակ», Սիկոյանի անվան հայկական պարտիզանական ջոկատները և մյուս հայ պարտիզանները իրենց մարտական տարեգրությունը հարստացրին նոր սխրանքներով:

«Հաղթանակ» ջոկատը (հրամանատար՝ կապիտան Սերգեյ Հարությունյանց, քաղղեկ՝ Յովհաննես Պետյան), ինչպես նշվել է, կազմակերպել էին Լվովի մարզի Սելեց-Ջավոնյեի ճամբարից փախած մի խումբ հայ ռազմագերիներ 1943 թ. փետրվարին: Մեկ տարի շարունակ «Հաղթանակ» ջոկատը թշնամու դեմ կռվել էր միայնակ, առանց կապ ունենալու Մեծ երկրի և տեղական պարտիզանների հետ: Միայն 1944 թ. հունվարի 21-ին հայ պարտի-

զանները Մոսուրի անտառում հանդիպեցին Սումիի պարտիզանական միավորմանը, որը վերակառուցվել էր Կովպակի անվան 1-ին ուկրաինական պարտիզանական դիվիզիայի (հրամանատար՝ Խորհրդային Միության հերոս, փոխգնդապետ Պ. Պ. Վերշիգորա) և միացան նրան: Դիվիզիայի հետախուզության հրամանատար, Խորհրդային Միության հերոս Ի. Բերեժնոյը այդ կապակցությամբ գրել է. «Մեզ միացան ֆաշիստական գերությունից փախած մի խումբ հայ զինվորներ ու սպաներ, ընդամենը 33 մարդ... Նրանք, փախուստից հետո թափանցելով Վոլին, այստեղ պարտիզանություն էին արել: Նրանք մեր միավորման համար լավ համալրում եղան»<sup>193</sup>:

Հայ պարտիզաններին հանդիպելու պահին միավորումը գտնվում էր իր նոր ռազմերթի ճանապարհին: Սումիի պարտիզանական միավորումը իր մարտական գործունեությունը սկսել էր 1941 թ. Սումիի և Բոյանսկի անտառներում, քաղաքացիական կռիվների մասնակից, գեներալ-մայոր Ս. Ի. Կովպակի հրամանատարությամբ, որը դարձավ Խորհրդային Միության կրկնակի հերոս: Միավորումը աչքի է ընկել թշնամու խոր թիկունքում կատարած ռազմերթով: Առաջին արշավի ընթացքում նա Բոյանսկի անտառներից կտրել-անցել է ամբողջ ձախսվինյա Ուկրաինան, հաղթահարել Դնեպրը և այլ խոշոր ջրային արգելքներ, մտել Բելոռուսիա: Երկրորդ՝ Կարպատյան արշավի ժամանակ միավորումը Կարպատներում ոչնչացրել է հակառակորդի վառելանյութի պահեստները և խափանել նավթի արտադրությունը: Երրորդ մեծ ռազմարշավի սկզբում, երբ «Հաղթանակ» ջոկատը միացավ միավորմանը, վերադաս հրամանատարությունը, վիրավոր Կովպակին ուղարկելով թիկունք՝ բուժման, նոր հրամանատար էր նշանակել հետախուզության գծով նրա տեղակալ Պ. Վերշիգորային:

Սումիի պարտիզանական միավորման շարքերում կային նաև հայ պարտիզաններ, որոնք աչքի էին ընկել նրա առաջին երկու ռազմարշավներում: Սասնավորապես հիշատակության են արժանի Պրիպյատ գետի վրա ֆաշիստական նավատորմիկի խորտակումը և Կարպատներում թշնամուն հասցրած ջախջախիչ հարվածները: 1943 թ. ապրիլին Յուրևկիչիի մոտ Պրիպյատ գետի բարձր ափից Կովպակի պարտիզաններն իրենց ուժեղ կրակով

խորտակեցին դեպի Սոփի շարժվող թշնամու նավաքարավանը, ոչնչացվեցին մեկ շոգենավ և մի քանի փոքր նավեր: Փախուստով փրկվեցին միայն զրահակատերները: Հիտլերականները հաջորդ օրը միավորման դեմ ուղարկեցին 2 զրահաշոգենավ և 4 զրահակատեր: Դրանց ևս պարտիզանները գետի երկու ափերից դիմավորեցին գնդացրային ու հրանոթային խաչաձև կրակով: Նավերի վրա բռնկվեց հրդեհ, իրարանցում և խառնաշփոթություն առաջացավ: Խուճապի մատնված հիտլերականները փրկվելու համար ջուրն էին նետվում, իսկ պարտիզանները, քողարկվելով ծխածածկույթի տակ, նավակներով մոտեցան թշնամուն և գնդացրային կրակն ուղղեցին նրա վրա: Դիպուկ էր կրակում նաև գնդացրորդ Բագրատ Գալստյանը: Ֆաշիստները լիակատար պարտություն կրեցին<sup>194</sup>:

Մեծ հաղթանակ նվաճվեց Կարպատյան ռազմարշավի ժամանակ. ոչնչացվեցին թշնամու նավթարդյունաբերական օբյեկտները, վառելիքի պաշարները և կենդանի շատ ուժեր:

Նկատի ունենալով հայ պարտիզաններին՝ Կովպակը նշել է. «Նրանք հիտլերականների դեմ կռվում էին կրկնակի եռանդով, մեծ հմտությամբ ու հմարագիտությամբ: Մենք՝ ուկրաինացի պարտիզաններս, լավ ենք հիշում նրանց ու հպարտանում մեր մարտական հայ եղբայրներով»<sup>195</sup>: Հիշատակության արժանի են գնդացրորդ Բագրատ Գալստյանը, հետախույզ Սարգիս Ղազարյանը, Տիգրան Մանգասարյանը, Անդրո Ապրեսյանը և ուրիշներ: 1943 թ. մայիսին Կովպակի միավորում ժամանեց կապավոր Վռան Յովհաննեսի Յովհաննիսյանը, որն այստեղ վայրէջք կատարեց պարաշյուտով (ուղարկվել էր Մեծ երկրից): Միավորման հրամանատարությունը բարձր է գնահատել նրա ծառայությունը: «Թշնամու թիկունքում, բարդ իրադրության մեջ Վ. Յ. Յովհաննիսյանն իրեն դրսևորեց որպես խիզախ ժողովրդական վրիժառու: Նրան վստահված ռադիոսարքերն աշխատեցին անխափան, կանոնավոր կերպով ապահովելով միավորման կապը Մեծ երկրի հետ»<sup>196</sup>:

1944 թ. սկզբին Կովպակի անվան ուկրաինական 1–ին պարտիզանական դիվիզիայում հայերի թիվը շեշտակի ավելացավ «Հաղթանակ» ջոկատի միանալով: Ջոկատը, որպես ինքնուրույն վաշտ, մտցվեց դիվիզիայի 3–րդ գնդի կազմ (հրամանատար՝

Պյոտր Բրայկո): Մի քանի օր անց (փետրվարի 12–ին) վաշտը համալրեցին 21 հայ տղաներ, որոնցից 4–ը նոր էին փախել Սելեց–Չավոնյեի ռազմագերիների ճամբարից, իսկ 17–ը Ուկրաինական հեծյալ պարտիզանական ջոկատների միավորման Միկոյանի անվան ջոկատի անձնակազմի անդամներ էին, ովքեր երթի ընթացքում շեղվել էին յուրայիններից և կորցրել նրանց: Դիվիզիայում հայ պարտիզանների թիվը հասավ մինչև 100 մարդու: Նրանք գերազանցապես կենտրոնացած էին հիշյալ վաշտում:

Հայկական վաշտի հրամանատար նշանակվեց «Հաղթանակ» ջոկատի հրամանատար, կապիտան Սերգեյ Հարությունյանցը, նրա տեղակալներ՝ Երվանդ Ղասաբյանը, Անտոն Պողոսյանը և Սարգիս Սարգսյանը: Ղասակների և ջոկերի հրամանատարներ դարձան Ռաֆիկ Սահակյանը, Անդրանիկ Մելքոնյանը, Լորիս Ամիրյանը, Գրիգոր Ավետիսյանը: Հովհաննես Պետոյանը վաշտի կուսկազմակերպիչն էր, Սերգեյ Խալաթյանը՝ կոմերիտական կազմակերպիչը, Ալավերդի (Ալո) Ֆահրոյանը, Հակոբ Հակոբյանը քաղղեկներ էին, իսկ Վոլոդյա Տոնյանը՝ գումարտակի քաղղեկ և գնդի կուսկազմակերպության բյուրոյի քարտուղար: Վաշտի հրետամավորները և գնդացրորդներն էին Սերգեյ Խալաթյանը, Գեորգի Օհանյանը, Միքայել Մովսիսյանը, Գրիգոր Ավետիսյանը, Ազատ Հակոբյանը (վերջին երկուսը Միկոյանի անվան ջոկատից) և ուրիշներ:

Պարտիզանական դիվիզիայի կազմում հայկական վաշտը մասնակցեց նրա 2 ռազմերթերին, որոնց ընդհանուր երկարությունը կազմում էր մի քանի հազար կիլոմետր և որոնք անցնում էին Արևմտյան Ուկրաինայի, Լեհաստանի և Բելոռուսիայի տարածքներով: Դիվիզիայի երթուղին սկսվեց Վլադիմապոլից՝ սկզբում ընդգրկելով Վոլինի և Լվովի մարզերը: Տեղանքին քաջածանոթ հայ պարտիզաններն ընթանում էին դիվիզիայի առաջամասում: Տուրուպին երկաթուղային կայարանի գրավումը դարձավ հայկական վաշտի առաջին մարտական գործողությունը, որն օգնեց դիվիզիային անցնելու Կոպել–Վլադիմիր–Վոլինսկի գիծը: Հաջորդ մի քանի օրերի ընթացքում, երբ 3–րդ գունդը դիվիզիայի հիմնական ուժերից թշնամու ուշադրությունը շեղելու և նրան ցրելու նպատակով (առաջադրանքի համաձայն) ինքնուրույն

գործում էր Դուբնո-Բրոդի շրջանում, գնդի 2-րդ՝ հայկական վաշտը, մեծ գործ կատարեց ուկրաինացի ազգայնականների զինված խմբի (Բենդերականների «Անտառային սատանաներ» խումբ) կազմալուծման և ջախջախման գործում:

Փետրվարի երկրորդ կեսին խորհրդային պարտիզանական դիվիզիան մտավ Լեհաստան, որտեղ, համագործակցելով լեհական պարտիզանների հետ, ազատագրեց մի շարք բնակավայրեր և ջախջախիչ հարվածներ հասցրեց ֆաշիստներին Ռավա-Ռուսսկայայի, Ցեշանովի, Տարնոգրուդի, Բիլգորայի և այլ շրջաններում: Հայ պարտիզաններն ակտիվ մասնակցություն ունեցան Ուլյանով քաղաքի գրավման մարտերում, որտեղ նրանք օգնում էին ժանրությունն իր վրա վերցրած դիվիզիայի 1-ին գնդին (հրամանատար՝ խորհրդային Միության հերոս Բակրածե): Գնդի հրամանատարությունը հատկապես նշել է հրամոթի հաշվարկի հրամանատար Ս. Խալաթյանի խիզախությունը<sup>197</sup>: «Պարտիզանները,— նշել է Բակրածեն,— կայծակի արագությամբ գրավեցին քաղաքը: Գրոհի ժամանակ առաջ նետվեց Սերգո Հարությունյանցի վաշտը, ճնշեց հակառակորդի պաշտպանությունը և քաղաք մտավ առաջինը»<sup>198</sup>:

Ուլյանովում տեղավորված էր թշնամու ռազմաօդային ուժերի մի զորամաս, որը կանգնել էր պարտիզանների առաջխաղացման ճանապարհին, ուստի պետք է, որ նա գիշերը ոչնչացվեր: Առաջադրանքի կատարման մասնակից Հ. Պետյանը հիշում է, որ հայերը, զգուշությամբ թափանցելով քաղաք, շրջապատեցին այն եռահարկ շենքը, որտեղ տեղավորված էր զորամասը և զենքի տարբեր տեսակներից կրակ տեղացին շենքի վրա: Ֆաշիստները կրեցին զգալի կորուստներ, իսկ կենդանի մնացածները (12 գերմանացի սպա և 25 լեհ ոստիկան) գերվեցին<sup>199</sup>: խորհրդային պարտիզանները գրավեցին նաև Պորեցկ, Լուկաչ, Օպյուտիչի, Բորմոլ, Լոպատինո, Մոսիլ, Տարնոգրուդ և այլ քաղաքներ ու բնակավայրեր:

Իր մարտական երթի ճանապարհին, որն ավարտվեց 1944 թ. հուլիսին, դիվիզիան եղավ Բրեստի, Պինսկի, Բարանովիչի, Գրոդնոյի ու Բելոստոկի մարզերում: Համագործակցելով Բելոռուսիան ազատագրող Կարմիր բանակի զարամասերի հետ՝

պարտիզանները քայքայում էին թշնամու «Կենտրոն» զորախմբի թիկունքը, խափանում նրա նահանջի ուղիները, պայթեցնում գնացքները: Հակառակորդի գնացքներից մեկը խորտակվեց Բարանովիչի-Բրեստ գծում, Տևի կայարանից հարավ, ոչնչացվեց 2 շոգեքարշ, 14 տանկ, 8 զրահանեքենա, 8 ավտոմեքենա: Գնացքի վրա կատարված հարձակմանը մասնակցեց նաև հայկական վաշտը, որը մինչ այդ երկու անգամ արժանացել էր դիվիզիայի հրամանատարության շնորհակալությանը: Առաջին դեպքում՝ Օտրոչ գյուղի ազատագրման, երկրորդ անգամ՝ Մայդան գյուղում պատժիչ ուժերի հարձակումը հետ մղելու ժամանակ ցույց տված խիզախության համար: Վաշտը ակտիվ գործողություններ ծավալեց Յանուշի գյուղի հիտլերականների կայազորը ոչնչացնելու մարտում և Բրեստի երկաթուղագծում թշնամու 2 գնացքների գրավման ժամանակ: Ապրիլի 11-ին, երբ Վուլկի գյուղի մոտ (Բարանովիչի մարզ) վաշտը և 6-րդ գումարտակը սպասում էին խորհրդային ինքնաթիռներին, ենթարկվեցին ֆաշիստների գերակշռող ուժերի հարձակմանը, բայց կարողացան դիմադրություն կազմակերպել, մինչև օգնության հասան օժանդակ ուժերը: Հայկական վաշտի մարտիկները, ինչպես նշել է Դ. Բակրաձեն, մի քանի տեղում ճեղքեցին շրջապատման օղակը և ցրեցին ֆաշիստներին: Վերջիններս չէին դադարեցնում գրոհները, վաշտի զբաղեցրած տեղանքում «բառացիորեն յուրաքանչյուր 10-15 քայլի վրա արկեր էին պայթում»<sup>200</sup>: Շարքից հանվեց պարտիզանների հաստոցավոր գնդացիորը, երկրորդ անգամ վիրավորվեց նրանց հրամանատար Սերգեյ Հարությունյանը: Դիվիզիայի հիմնական ուժերի օգնության գալուց հետո հակառակորդը ջախջախվեց և հետ շարտվեց:

Երկարատև և ծանր կռիվների հետո Կովպակի անվան դիվիզիան կարողացավ դադար առնել Պինսկի մարզի պարտիզանական երկրամասում, որտեղ նա կազմակերպեց ինքնաթիռների ընդունման գործը՝ թիկունք ուղարկելով վիրավորներին և ստանալով ռազմամթերք: Ավարտվեց Կովպակի անվան ուկրաինական 1-ին պարտիզանական դիվիզիայի ռազմերթը, որի ժամանակ նա Ուկրաինայի, Լեհաստանի և Բելոռուսիայի տարածքներով անցավ մի քանի հազար կիլոմետր ուղի՝ թշնամուն պատճա-

ռելով կենդանի ուժի ու տեխնիկայի մեծ կորուստ և քաղաքական մեծ աշխատանք տանելով տեղական բնակչության շրջանում: Բելոռուսիայում մի քանի հազար գյուղացիներ ազատվեցին Գերմանիա քշվելուց: Թշնամու մարդկային կորուստները կազմեցին մոտ 5 հազար սպանված ու վիրավոր զինվոր ու սպա, գերի վերցվեց 598 մարդ, խորտակվեց 24 զինվորական գնացք, 75 տանկով ու զրահամեքենայով, 196 ավտոմեքենայով և այլ ռազմական բեռներով<sup>201</sup>:

Դրան հաջորդեց կովպակցիների վերջին ռազմերթը դեպի Նեման գետի ավազանը Արևմտյան Բելոռուսիայում 1944 թ. հունիս–հուլիսին:

Միայն այս արշավի ընթացքում, որը տևեց շուրջ մեկ ամիս, դիվիզիան հաղթահարեց ավելի քան 1100 կիլոմետր դժվարին ուղի՝ 90 անգամ կռվի բռնվելով թշնամու հետ: Ոչնչացվեց 3000 հիտլերական: Պարտիզանները տվեցին ընդամենը 32 սպանված<sup>202</sup>: Իսկ վերջին երկու ռազմերթի ընթացքում (1944 թ. առաջին կիսամյակում) դիվիզիան անցավ ավելի քան 5800 կիլոմետր ուղի, որի ընդհանուր հանրագումարը դարձավ թշնամու 10 հազար զինվորի ու սպայի կորուստը<sup>203</sup>:

Նեմանյան արշավի ժամանակ Կարմիր բանակն ազատագրեց Մինսկը և բելոռուսական շատ հողեր, առաջանալով դեպի արևմտյան մարզեր: Միաժամանակ դեպի արևմուտք էին շարժվում (Գրոդնոյի և Բելոստոկի մարզեր) կովպակյան դիվիզիայի պարտիզանները, որոնց մարտական գործունեությունն ավարտվեց Բելոստոկի մարզում: Սյստեղ 1944 թ. հուլիսի 23–ին Կովպակի անվան դիվիզիայի հրամանատարությունը ստացավ ՊՇՈՒՇ–ի ռադիոգիրը՝ դուրս գալ դեպի Կիև՝ հանգստի: Դիվիզիան կատարել էր իր մարտական խնդիրը:

Պանծալի ուղի անցավ կովպակյան միավորումը: Դիվիզիայի փաստաթղթերում արժանի գնահատություն է տրված նաև հայ պարտիզաններին: Առանձին սիրով և երախտագիտությամբ արտահայտվելով զոհված հայ պարտիզանների մասին՝ միավորման հրամանատար Վերշիգորան գրել է. «Մեր հայրենիքի ազատության և անկախության համար մղված պայքարում հերոսի մահով ընկան Մաթևոս Խաչատրյանը, Սամսոն Մաթևոսյանը, Գևորգ Օ-

հանյանը, Ռաֆիկ Սահակյանը, Ժորա Հարությունյանը, Միքայել Մովսիսյանը, Միքայել Գրիգորյանը, Սարգիս Ղազարյանը և ուրիշներ:

Ուկրաինական հողը թող թեթև լինի նրանց վրա: Այդ հողում նրանք ննջեցին մեր ընդհանուր գործի համար մղված պայքարում»<sup>204</sup>:

1943–1944 թթ. ծնռանը նոր ռազմերթի էր պատրաստվում ուկրաինական նշանավոր հեծյալ պարտիզանական ջոկատների միավորումը (հրամանատար՝ Խորհրդային Միության հերոս, գեներալ–մայոր Մ. Ի. Նաումով), որի կազմում էր գտնվում Միկոյանի անվան հայկական ջոկատը: Այն, ինչպես նշվել է, կազմակերպվել էր 1943 թ. սեպտեմբերին Ուկրաինայի Ժիտոմիրի մարզում, փախուստի դիմած շուրջ 250 հայ ռազմագերիների կողմից: Ջոկատի հրամանատարն էր լեյտենանտ Արամայիս Մելիքի Յովսեփյանը: Յուրի Պավլովսկու զոհվելուց հետո ջոկատի կոմիսար դարձավ Պ. Վելիչկոն, ապա Ա. Վասյանովիչը:

1943 թ. դեկտեմբերի 26–ին հայկական ջոկատը, 280 պարտիզանների անձնակազմով և 80 սայլագումակով, Ռովնոյի մարզի Լյուդվիպոլսկի շրջանից, որտեղ տեղակայված էր միավորումը, ճանապարհվեց Օվրուչ (Ժիտոմիրի մարզի հյուսիսում)՝ նոր ռազմերթի համար սպառազինություն ստանալու և փոխադրելու առաջադրանքով: 1944 թ. նոր տարվա օրը հաջողությամբ հաղթահարելով ռազմաճակատի գիծը Օլեսկ–Կորոստեն երկաթուղագծում, ջոկատը դուրս եկավ Խորհրդային թիկունք: Ռազմամթերքի և այլ անհրաժեշտ բեռով նա վերադարձավ միավորում հունվարի 15–ին: Երկրորդ անգամ ռազմաճակատի գիծը հաղթահարելու հարկ չեղավ, քանի որ Կարմիր բանակի առաջխաղացման շնորհիվ պարտիզանական միավորումը գտնվեց ազատագրված հողում՝ սպասելով իր ջոկատին և սպառազինությանը:

Այսպիսով՝ Միկոյանի անվան ջոկատը հաջողությամբ կատարեց հրամանատարության կարևոր և պատասխանատու առաջադրանքը: Մի անգամ չէ, որ հայկական ջոկատը աչքի էր ընկնում միավորման ստորաբաժանումների մեջ: Ինչպես 1943 թ., այնպես էլ 1944 թ. հայ պարտիզանները ցույց տվեցին մեծ հայրենասիրություն և նվիրվածություն իրենց սրբազան պարտքին՝

հայրենիքի պաշտպանությանը: Պատահական չէր, որ հիշյալ առաջադրանքը վիճակվեց կատարելու Միկոյանի անվան ջոկատին:

Հունվարի 23–ին միավորումը Լյուդվիպոլսկի շրջանից ուղղությամբ վերցրեց դեպի արևմուտք՝ թշնամու թիկունք դուրս գալու և նրա դեմ պայքարը Արևմտյան Ուկրաինայում շարունակելու համար: Հունվարի վերջին օրերին Վոլինի մարզի Ցուման քաղաքի մոտ պարտիզանները ճեղքեցին գերմանական ռազմաճակատը և սկսեցին իրենց Արևմտյան ռազմերթը, որը մի քանի հարյուր կիլոմետր երկարությամբ ձգվեց Վոլինի, Լվովի, Դրոգոբիչի մարզերով, այնուհետև Լեհաստանի տարածքով և նորից Լվովի մարզով:

Վորոտն Գյուդի մոտ տեղի ունեցավ առաջին մարտը թշնամու հետ, որն իր վրա վերցրեց միավորման առջևից ընթացող Միկոյանի անվան ջոկատը: Կռիվն ավարտվեց Գյուդի գրավումով, որտեղ բոլոր ջոկատները հնարավորություն ստացան հանգստանալու 70 կիլոմետր կատարած անընդմեջ արշավից հետո: Փետրվարի 6–ին միավորումը մտավ Գորոխով քաղաքը, որտեղ նախորդ օրը եղել էր Կովպակի անվան 1–ին պարտիզանական դիվիզիայի 1–ին գունդը (գնդի հրամանատար՝ Դավիթ Բակրածե): Քաղաքից ոչ հեռու տեղի ունեցավ երկու միավորումների հրամանատարությունների հանդիպումը, որը քննարկեց առաջիկա գործողությունների մասին հարցը<sup>205</sup>:

Միկոյանի և «Սմերտ ֆաշիզմու» ջոկատների պաշտպանությամբ ամբողջ միավորումը հաջողությամբ անցավ Բուզ գետը, որտեղ թշնամին պարտիզաններին խանգարելու անհաջող փորձ կատարեց: Լվովին մոտենալու հետ միաժամանակ ուժեղացավ հիտլերականների դիմադրությունը, և մարտերն սկսեցին հաջորդել մեկը մյուսին: Դրանք ավելի սաստկացան Լվով–Պերեմիշլ երկաթուղին և խճուղին անցնելու ժամանակ: Միայն Տուրինկա գյուղի մարտում հայկական ջոկատը ոչնչացրեց 40 հիտլերական: Կարպատյան լեռների մատույցներում ընդհարումներն ընդունեցին կատաղի բնույթ: Միավորման խափանարարները խորտակեցին բազմաթիվ ռազմական գնացքներ: Ոչնչացվեցին Վոլյա Լացկայի և Օստրա Գուրայի կայազորները: Միավորումը, Ռուստավելկոյում գրավելով շրջանածն պաշտպանություն, մեկ օրվա ընթացքում հետ մղեց թշնամու բազմաթիվ գրոհներ: Այստեղ աչքի

ընկավ Սարտին Գաբրիելյանի ականանետային հաշվարկը, ինչպես նաև Սարտիկ Ստեփանյանը, Աղասի Էլարյանը, Ջավեն Պողոսյանը և ուրիշներ: «Գաբրիելյանը կռվեց մինչև վերջ, բայց չթողեց իր պոստը: Նա զոհվեց հերոսի մահով», — ասված է միավորման հաշվետվության մեջ: Ռուստավելչկոյուն և Չիշկիուն հայ պարտիզանները ոչնչացրին 180 հիտլերական: Կարպատյան լեռների ճանապարհը փակելու համար թշնամին պարտիզանների դեմ նետել էր 25 հազար զինվոր ու սպա<sup>206</sup>:

Ջախջախիչ հարվածներ հասցնելով ֆաշիստական ուժերին և կտրվելով նրանցից՝ պարտիզանական միավորումը շրջվեց դեպի հյուսիս: Կալնիկով գյուղի մոտ (Պերեմիշլից հյուսիս-արևելք) նոր մարտեր ծավալվեցին պարտիզանների և նրանց հետապնդող պատժիչ ուժերի միջև: Հայկական ջոկատից աչքի ընկան գեղացրորդ Իվան Հայկազովը, Վահան Զաղդասարյանը, Մնացական Դուրուխյանը և ուրիշներ:

Փետրվարի 23-ին Մ. Նաումովի ղեկավարած պարտիզանական միավորումը մտավ Լեհաստան՝ նպատակ ունենալով այլ ուղղությամբ հասնել Կարպատներ: Այստեղ թշնամու մեծաքանակ ուժերն ապարդյուն փորձեր կատարեցին պարտիզաններին Սան գետին սեղմելու և նրանց ոչնչացնելու համար: Վարելով խաբուսիկ մարտավարություն՝ միավորումը խուսափեց ծանր կռիվներից: Դոբրոպոլ և Պավլովա գյուղերի մոտ (Յարոսլավ քաղաքից հյուսիս՝ Ցեկուվի շրջանում) գրավելով շրջանածև պաշտպանություն՝ պարտիզանական ջոկատները, փետրվարի 24-25-ին պաշտպանական մարտեր մղելով եսեսական «Գալիչինա» դիվիզիայի և այլ հետապնդող ուժերի դեմ, ճեղքեցին շրջապատման օղակը և դուրս եկան Սինյավայի անտառները: Հաշվի առնելով ստեղծված իրադրությունը՝ միավորման հրամանատարությունը հարկադրված եղավ հրաժարվել դեպի Կարպատյան լեռներն արշավելու ծրագրից<sup>207</sup>:

Թշնամու ուշադրությունը շեղելու և նրա ուժերը ցրելու նպատակով միավորման հրամանատարությունը գերադասեց ըստ առանձին ջոկատների կռիվ մղելու մարտավարությունը: Միկոյանի անվան ջոկատը ջախջախելու էր Նարոլ (Լիպնո) գյուղի կայազորը, որը սպառնում էր այն օդանավակայանին, որտեղ միավորու-

մը ենթադրում էր ընդունել խորհրդային ինքնաթիռներ՝ օգնություն ստանալու և վիրավորներին փոխադրելու համար: Մինչ այդ նույն օրը Միկոյանի անվան, Մակարովյան և «Չերվոնոյե» ջոկատների անձնակազմերի մի մասը Գորայ գյուղի մոտ լավ ջարդ տվեց ֆաշիստներին, որոնք, կռվի դաշտում թողնելով 100 սպանված զինվոր ու սպա, մեկ գումարտակային ականանետ, 2 հաստոցային գնդացիր, նահանջեցին դեպի Վերխրատա կայարանը: Այնուհետև կատարելով միավորման հրամանատարության առաջադրանքը՝ Միկոյանի անվան ջոկատը գրոհեց Նարոլ (Լիպնո) գյուղի կայազորի վրա, որն ուներ բավական ամուր պաշտպանություն: Կռիվն ընդունեց կատաղի բնույթ, որի ընթացքում երկուստեք եղան շատ զոհեր: Հայ պարտիզանները ցույց տվեցին խիզախության հիանալի օրինակներ: Քաղղեկ Սուխարիչ Հարությունյանը, Ազատ Մկրտչյանը, Խաչիկ Մնացականյանը և ուրիշներ ոչնչացրին հակառակորդի 3 դժօտ<sup>208</sup>:

Պարտիզանական միավորումը, թողնելով Լեհաստանը, ուղղություն վերցրեց դեպի արևելք, վերադառնալով Լվովի մարզ: Կուլաիչվոյայի շրջանում (Լվովից հյուսիս), շրջապատման պայմաններում միավորումն ունեցավ իր ժանր կռիվներից մեկը, որից դուրս եկավ հաղթանակով: Դրա շնորհիվ լուծվեց Բուզ գետն անցնելու (Կրիստինոպոլի մոտ) խնդիրը: Հայ պարտիզաններն աչքի ընկան նաև վիրավորների 200 սայլից բաղկացած գումակը պաշտպանելու գործում<sup>209</sup>: Ստիրը գետանցելուց հետո մարտի սկզբի օրերին միավորումը հասավ Բրոդիից արևմուտք գտնվող խիտ անտառները (Լվովի մարզի արևելքում):

Այդ նույն ժամանակ Ուկրաինական 1-ին, 2-րդ և 3-րդ ռազմաճակատների զորքերը վերսկսեցին 1943 թ. դեկտեմբերին սկսած հարձակողական գործողությունները Արևմտյան Ուկրաինայի ազատագրության համար: Ուկրաինական 1-ին ռազմաճակատի զորքերը 1944 թ. մարտի 20-ին դուրս եկան Բրոդիի մատույցները: Պարտիզանները կապ հաստատեցին 162-րդ դիվիզիայի 209-րդ գնդի հրամանատարության հետ և առաջադրանք ստացան Բրոդին ազատագրելու համատեղ գործողության վերաբերյալ՝ պարտիզանական միավորումը հիմնականում կտրելու էր թշնամու նահանջի ճանապարհները: Միկոյանի անվան ջոկատը

ազատագրեց Սնդնո գյուղը, Բրոդիի երկաթուղային կայարանը, դեպոն և փայտամշակման գործարանը: Սակայն Բրոդիի ազատագրման պլանը փոխվեց և ստեղծված պայմաններում, ինչպես նաև հաշվի առնելով միավորման հրամանատար Մ. Ի. Նաումովի վիրավորվելը, միավորումը թույլտվություն ստացավ դուրս գալու խորհրդային թիկունք, որը տեղի ունեցավ մարտի 22-ի լույս 23-ի գիշերը Ռաժիվիլով (Չերվոնոարմեյսկ) քաղաքի մոտ: Ավարտվեց նաև Միկոյանի անվան հայկական պարտիզանական ջոկատի մարտական գործունեությունը, որն սկսվել էր 1943 թ. սեպտեմբերի 16-ին և տևեց ավելի քան վեց ամիս:

Միկոյանի անվան ջոկատի կազմակերպման ժամանակ նրա անձնակազմը հասնում էր 250 մարդու, ապա աճեց մինչև 325-ի, իսկ վերջում նա ուներ 120 պարտիզան: Հայրենիքի ազատության համար իրենց կյանքը զոհաբերեցին ջոկատի 70 պարտիզաններ: Երկու ամիս տևած ռազմերթի ընթացքում ջոկատը մասնակցեց 13 մարտի, ոչնչացրեց 350 հիտլերական, մի քանի ղզօտ, ռազմավարական նշանակություն ունեցող կամուրջներ, հրդեհեց մեկ երկաթուղային գնացք: 1500 խորհրդային քաղաքացիներ փրկվեցին Գերմանիա ստրկության քշվելուց: Իր ամբողջ գոյության ընթացքում հայկական ջոկատը մարտերով անցավ 1500 կիլոմետր ուղի, շարքից հանեց ավելի քան 1000 ֆաշիստական զինվոր ու սպա<sup>210</sup>: Մ. Ի. Նաումովը, բնութագրելով հայկական ջոկատին, գրել է. «Միկոյանի անվան ջոկատի հետ են կապված մեր հեծելազորային միավորման հերոսական շատ էջեր: Շատ հաճախ ջոկատը նրա հարվածային ուժն էր: ...Ծանր մարտերում հյուժող ռազմարշավների ժամանակ ջոկատը ոչ մի տեղ չերերաց, չքայքայվեց, չնահանջեց առանց հրամանի... Ամենուրեք «Միկոյանի» մարտիկներն ու հրամանատարները արիություն ու տոկունություն են դրսևորել»<sup>211</sup>:

Աջափնյա Ուկրաինայի ազատագրմանը մասնակցեցին նաև ուկրաինական այլ միավորումներում ու ջոկատներում գտնվող բազմաթիվ հայ պարտիզաններ:

Տասնյակ հայեր կային խորհրդային Միության հերոս Ա. Ջ. Օդոլսայի միավորման ջոկատներում, որոնք հիմնականում գործել են Կամենեց-Պոդոլսկի մարզում, ինչպես նաև հասել մինչև Բելո-

ռուսիա: 1944 թ. մարտին միավորումը վերակառուցվեց զորային սկզբունքով՝ ջոկատները դարձան գումարտակներ, որոնք իրենց մարտական գործողությունները զարգացրին ռազմաճակատից ոչ հեռու, Կարմիր բանակի առաջխաղացման պայմաններում: Ապրիլին միավորումը միացավ Կարմիր բանակին: Նրա շարքերում թշնամու դեմ իրենց պայքարը շարունակեցին միավորման 62 հայ պարտիզաններ (նրա անձնակազմում գրանցվել է ընդամենը 92 հայ), որոնցից 24-ը պարզևատրվեցին շքանշաններով ու մեդալներով: Կարմիր դրոշի շքանշանի արժանացավ Մնացական Դավթի Մնացականյանը, Կարմիր աստղի՝ Լեոնիդ Ռուբենի Դովհաննիսյանը, Սմբատ Դովսեփի Դակոբյանը, Ավետիք Արմենակի Աֆրիկյանը և ուրիշներ: Միավորման Շչորսի անվան գումարտակի 2-րդ վաշտի հրամանատարն էր Գրիգոր Սապունջյանը, Լեոնիդ անվան գումարտակում ջոկերի հրամանատարներ էին Ցուլակ Ջալաբյանը, Լեոնիդ Դովհաննիսյանը և Լևոն Կիրակոսյանը: 5-րդ գումարտակի պարտիզան Գասպար Գասպարյանը հակատանկային նռնակներով ոչնչացրել է մեկ տանկ, իր անձնակազմով<sup>212</sup>:

Կամենեց-Պոդոլսկի, Ժիտոմիրի, Ռովնոյի և Վոլինի մարզերում կռվող համբավավոր պարտիզանական հրամանատար Անդրեյ Միխայլովիչ Գրաբչակի (Բուլյնի) միավորման անձնակազմում էին Արտեմ Պետրոսյանը, Սուրեն Ղազարյանը, Աշոտ Դովհաննիսյանը, Օզեր Սարտիրոսյանը, Ի. Շահնազարյանը և ուրիշներ, որոնք 1944 թ. նոր սխրագործություններով հարստացրին իրենց մարտական հաշիվները:

Արտեմ Պետրոսյանը, որն սկզբում դասակի հրամանատար էր, 1944 թ. հունվարին առաջ քաշվեց վաշտի հրամանատար, ապա գումարտակի շտաբի պետ, նաև գումարտակի հետախուզության ղեկավար: Ըստ Արտեմ Պետրոսյանին տրված բնութագրի՝ նա մասնակցել է թշնամու մեկ զինվորական զնացքի խորտակմանը, պայթեցրել է 1500 մետր երկաթուղագիծ (Կովել-Բրեստ և Կովել-Լյուբլին գծերում), եղել է 14 մարտերի մասնակից, ոչնչացնելով 41 հիտլերական: Կատարելով հրամանատարության առաջադրանքը՝ նա պայթեցնողների խմբով, որպես ղեկավար, 4 անգամ կտրել-անցել է ռազմաճակատի գիծը: Նրա նախածնունու-

թյամբ գործողության մեջ դրվեց հակատանկային հրացանով թշնամու շոգեքարշերը խոցելու և գնացքները խորտակելու, ինչպես նաև ժամացույցի մեխանիզմով գործող ականները (որոնք կարող էին հայտնաբերվել հակառակորդի կողմից) դանդաղ գործող ականներով փոխարինելու պրակտիկան: Պարտիզանական միավորման կուսակցական կազմակերպությունը, հաշվի առնելով Արտեմ Պետրոսյանի մարտական ծառայությունները և հրամանատարական գործունեությունը, նրան ընդունեց կուսակցության շարքերը: Պարզևատրվել է Կարմիր աստղի շքանշանով և Գայրենական պատերազմի պարտիզանի 1–ին աստիճանի մեդալով: Գայ ժողովրդի արժանավոր զավակը ֆաշիզմի դեմ պայքարն այնուհետև շարունակեց Չեխոսլովակիայում, ուր նա օդային դեսամտով վայրէջք կատարեց զինակիցների հետ միասին<sup>213</sup>:

Աշոտ Գովհաննիսյանը 1944 թ. փետրվարին դարձավ միավորման նորաստեղծ 10–րդ գումարտակի կոմիսար: Նրա ջանքերով ուզբեկ ռազմագերիների գումարտակը կարճ ժամանակամիջոցում դարձավ մարտունակ և կազմակերպված ստորաբաժանում: Սուրեն Ղազարյանին, որը մասնագիտացել և աչքի էր ընկել «Ռելսային պատերազմում», վստահվեց խափանարարների խմբի ղեկավարությունը: Նրա մարտական հաշվում գրանցված է 9 զինվորական գնացք, որոնք խորտակվել են Ուկրաինայի և Բելոռուսիայի երկաթուղագծերում<sup>214</sup>: Այդ գործողություններից մեկը տեղի ունեցավ հուլիսի 3–ին, երբ Ս. Ղազարյանի ղեկավարած խումբը Բարանովիչի–Սլոնիմ գծում խորտակեց 11 վագոնից և 1 շոգեքարշից բաղկացած (ավտոմեքենաներով բեռնված) ռազմական գնացքը: Նույն օրը ոչնչացվեց մեկ ավտոմեքենա՝ 5 ֆաշիստներով<sup>215</sup>:

Կվիտենսկու (հետագայում խորհրդային Միության հերոս) խափանարարների խմբում Ի. Շահնազարյանը 1944 թ. հունվարին մասնակցեց 2 ռազմական գնացքների խորտակմանը Կովել–Բրեստ երկաթուղում<sup>216</sup>:

Ուկրաինայի և Մոլդովիայի հողում մարտնչում էր խորհրդային Միության հերոս, փոխգնդապետ Բովկունի միավորումը, որի «Առվետսկայա Մոլդովիա» ջոկատի կոմիսարն էր Ավետիք Բուդադյանը (ջոկատի հրամանատար՝ հունգարացի Աֆանասի Վարֆոլոսեն): 1944 թ. մարտի 16–ին Իզմայիլի մարզի Ռեմի քաղաքի

մոտ ջոկատի 11 մարտիկներ, նրանց թվում կոմիսարը, կատարելով Կարմիր բանակի զորամասերի հետ կապ հաստատելու վերաբերյալ հրամանատարության առաջադրանքը, կատաղի մարտի բռնվեց թշնամու ուժերի հետ՝ նրանց պատճառելով մեծ կորուստներ: Ձոհեր տվեցին նաև պարտիզանները: Ռեմի քաղաքի եղբայրական զերեզմանում հանգչում են Բուդաղյանի, ռուս Նիկոլայ Պոպկովի, ուկրաինացի Իվան Չերևկոյի և մոլդավացի Նիկոլայ Մուստաֆաևի դիակները: Այդ քաղաքի փողոցներից մեկը վերանվանվել է կոմիսար Բուդաղյանի անունով<sup>217</sup>:

Նախորդ տարիների նման բազմաթիվ հայ զինակիցներ ունեին նաև Բելոռուսիայի պարտիզանները, որոնք շարունակելով «Ռելսային պատերազմը», մեծ օգնություն ցույց տվեցին իրենց հանրապետությունն ազատագրող ռազմաճակատների զորքերին: Խորհրդային Բելոռուսիայի ազատագրումը Կարմիր բանակն իրականացրեց 1944 թ. հունիս–հուլիս ժամանակաշրջանի հարձակողական գործողությունների շնորհիվ:

ԽՍՀՄ ժխԿ–ի և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1944 թ. հունվարի 1–ի «ԲխՍՀ ժողկոմխորհի և Բելոռուսիայի Կ(բ)Կ Կենտկոմի մերձավորագույն խնդիրների մասին» որոշումով Բելոռուսիայի Կոմկուսի Կենտկոմին հանձնարարվում էր թշնամուց դեռևս չազատագրված տարածքներում շարունակել պայքարը համաժողովրդական պարտիզանական շարժումը բորբոքելու, Կարմիր բանակին օգնելու ուղղությամբ: Ընդհարակյա կուսակցական կազմակերպությունների առջև խնդիր էր դրվում լայնորեն ծավալել քաղաքական աշխատանքը ռազմագրավված շրջանների բնակչության շրջանում<sup>218</sup>:

1942–1944 թթ. բելոռուսական պարտիզանների ընտանիքում էր գտնվում կապիտան Յովիաննես Ալեքսանդրի Խաչատրյանը: Սկզբում նա Միխալայ Սակեյի ղեկավարած Չապաևի անվան N 620 ջոկատի կոմիսարն էր, որն այնուհետև վերաճեց բրիգադի: 1944 թ. Խաչատրյանը նշանակվեց N 620 ջոկատի հրամանատար, որը բրիգադի (հրամանատար՝ Ռումյանցև) կազմում գործում էր Մոգիլյովի և Բոբրույսկի մարզերում: Հունիսի 20–ին՝ Կարմիր բանակի կողմից «Բագրատիոն» գործողություն սկսելու նախօրյակին, բրիգադը հօդս ցնդեցրեց 1400 երկաթուղային ռելս: Մարտա-

կան խնդիրը հաջողությամբ կատարելու համար ԲԿ(բ)Կ Կենտկոմը բրիգադի շարքային և հրամանատարական կազմին հայտնեց շնորհակալություն<sup>219</sup>։ Փառաբանված պարտիզանի կուրծքը զարդարում էին Հայրենիքի պարգևները՝ Կարմիր դրոշի, Հայրենական պատերազմի 1–ին աստիճանի շքանշանները և Հայրենական պատերազմի պարտիզանի 1–ին աստիճանի մեդալը։

Խորհրդային Միության հերոս Ս. Ա. Վառլաշաստվի (Գրադով) ղեկավարությամբ զործող պարտիզանական ջոկատում (Մինսկի մարզ) կռվում էին Անուշավան Պետրոսյանը, կապիտան Արտեմ Սարգսյանը, Կարապետ Տիրատուրյանը, Արկադի (Արգամ) Հովհաննիսյանը և ուրիշներ։ Անուշավան Պետրոսյանը խափանարարների խմբի ղեկավար էր, աչքի է ընկել հատկապես 1944 թ. հունիսյան կռիվներում, երբ պարտիզանական ջոկատը գտնվում էր շրջապատման պայմաններում։ Այս մարտերի մասնակից էր նաև Արկադի (Արգամ) Հովհաննիսյանը, որը վիրավոր վիճակում անգամ շարունակում էր գնդացրային կրակ տեղալ թշնամու վրա։ Նա զբաղվել է նաև խափանարարությամբ։

Մինսկի և նրա մարզի ազատագրման մասնակիցներ դարձան «Բեռի Կոլյա» բրիգադի պարտիզաններ Վահան Գրիգորյանը, Սարգիս Լևոնի Կարապետյանը, Սուրեն Միրզոյանը և ուրիշներ։ Վահան Գրիգորյանը թշնամու թիկունքում պայքարի մեջ էր 1941 թ.։ 1944 թ. նա դասակի հրամանատար էր։ Պարգևատրվել է Հայրենական պատերազմի 1–ին և 2–րդ աստիճանի շքանշաններով և պարտիզանական մեդալով<sup>220</sup>։ «Շտուրմովայա» բրիգադի Պոնոմարենկոյի անվան ջոկատում դասակի հրամանատար, ապավաշտի քաղղեկ էր կրտսեր լեյտենանտ Սերգեյ Սարգիսովը։ Ջավեն Սարգարյանը, որ 26 ընկերներով փախել էր գերությունից, Կիրովի անվան բրիգադում կռվեց մինչև նրա ցրվելը<sup>221</sup>։ Գուրգեն Հովսեփյանը (Գրիշա Օսիպով) Գրոմովի անվան ջոկատում դասակի հրամանատար էր, ապա ջոկատի հետախուզության հրամանատարի տեղակալ, որը, ծանր վիրավոր վիճակում գերվելով հիտլերականների կողմից, այրվեց խարույկի վրա, թշնամուն ոչինչ չհայտնեց և զոհվեց հերոսաբար։ Նրա անձնական հաշվում գրանցված է սպանված 23 հիտլերական<sup>222</sup>։ Մինսկի ազատարարներ դարձան նաև դասակի, ապավաշտի հրամանատար Ռոբերտ

Բալայանը («Նարոդնի մստիտել» բրիգադ), ջոկի հրամանատար Տիգրան Մանուկի Դանիելյանը (Չկալովի անվան բրիգադ) և ուրիշ հայ պարտիզաններ:

Բելոռուսիայի արևմտյան և հարավարևմտյան շրջաններում մարտական մեծ ուղի անցան Կովպակի անվան 1-ին ուկրաինական պարտիզանական դիվիզիայի հայ պարտիզանները, որի մասին, սակայն, խոսվեց վերևում: Ապա նույն շրջաններում Բելոռուսիայի ազատագրման եզրափակիչ մարտերի մասնակից դարձան նաև ուրիշ հայ պարտիզաններ:

Չապակի անվան ջոկատի, ապա բրիգադի հրամանատար, լեյտենանտ Խաչատուր Աղաջանի Մաթևոսյանը Բելոռուսիայում պարտիզանական պայքարում աչքի ընկած դեմք է: Սոտ երեք տարի (1941–1944 թթ.) կռվել է թշնամու թիկունքում: 1942 թ. կազմակերպել է ջոկատ և նշանակվել դրա հրամանատար: 1943 թ. ջոկատը վերակառուցվեց բրիգադի, որը 1944 թ. իր գործողությունները փոխադրեց Արևմտյան Բելոռուսիա՝ ռազմերթով անցնելով Սինսկի մարզից մինչև Բելոստոկի մարզ: Բրիգադի մարտիկները դարձել էին «Ռելսային պատերազմի» և պարտիզանական այլ գործողությունների հմուտ վարպետներ: Բրիգադը, որի անձնակազմն աճելով հասավ մինչև 757 մարդու, իր գոյության ընթացքում խորտակել է թշնամու 46 գնացք, 47 շոգեքարշերով ու 253 վազոններով, պայթեցրել է 4000 ռելս, 61 կամուրջ, 3 զրահամեքենա, 35 ավտոմեքենա, խափանել է 158 կիլոմետր կապի գիծ: Սպանվել է 1403 ֆաշիստական զինվոր ու սպա, վիրավորների թիվը կազմել է 187, գերիներինը՝ 89<sup>223</sup>: Բելոստոկի մարզի պարտիզանական շարժման շտաբը բրիգադի հրամանատարի բնութագրում նշել է. «Ընկ. Մաթևոսյանը իրեն դրսևորեց որպես իսկական հայրենասեր, մարտերում համարձակ, արի հրամանատար էր, կարողանում էր կազմակերպել և կռվի տանել ստորաբաժանումները... Շնորհալի և եռանդուն հրամանատար ընկ. Մաթևոսյանը մեծ հեղինակություն է վայելում պարտիզանների և հրամանատարների շրջանում»<sup>224</sup>: Բարձր գնահատելով Խաչատուր Մաթևոսյանի ծառայությունները՝ խորհրդային կառավարությունը նրան պարգևատրել է Կարմիր դրոշի, Հայրենական պատերազմի

1-ին աստիճանի շքանշաններով և Հայրենական պատերազմի պարտիզանի 1-ին աստիճանի մեդալով:

Հիշյալ բրիգադի հետ համագործադրել է չեկիստ, փոխգնդապետ Լևոն Աղաբեկովի (Սարգիսով) ոչ բազմանդամ ջոկատը: Նրա ղեկավարած չեկիստների հետախուզական «Ջապադ» ջոկատի անձնակազմը թշնամու թիկունքում դեսանտ էր իջել 1943 թ. օգոստոսին, ապա համալրել Պինսկի մարզում գործող փոխգնդապետ Կ. Պ. Օրլովսկու հատուկ նշանակության ջոկատի շարքերը: Լևոն Աղաբեկովը Օրլովսկու տեղակալն էր, ապա փոխարինեց նրան, երբ վերջինս մեկնեց բուժման: 1944 թ. ջոկատի գործողությունները ծավալվեցին Պինսկի և Բրեստի մարզերում<sup>225</sup>:

Բրեստի մարզում էր գործում նաև Սմբատ Խաչատուրի Արզումանյանի ղեկավարած Ստալինի անվան բրիգադը: Նա թշնամու թիկունքում պայքարի մեջ է գտնվել Բելոռուսիայում պարտիզանական պատերազմի ամբողջ ժամանակաընթացքում: Եղել է հրամանատարական բոլոր պաշտոններում՝ դասակից մինչև բրիգադ: Նման վերելք է ունեցել նրա տեղակալ Սերգեյ Կիտյանի գործունեությունը: Նրանց ղեկավարությամբ բրիգադը, որի անձնակազմը հասավ մինչև 2000 մարդու, խորտակել է տասնյակ ռազմական գնացքներ, պայթեցրել 2200 ռելս, բազմաթիվ կամուրջներ և ոչնչացրել հազարավոր ֆաշիստների: Բելոռուսական 1-ին ռազմաճակատի գործերին բրիգադի միանալուց հետո Սմբատ Արզումանյանը շարունակեց պայքարը ֆաշիստների դեմ, բանակում ծառայեց նաև պատերազմից հետո և զորացրվեց փոխգնդապետի աստիճանով: Հայրենական պատերազմում նրա ծառայությունների մասին են վկայում կառավարական պարգևները՝ Լենինի, Կարմիր դրոշի, Կարմիր աստղի, Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշանները և բազմաթիվ մեդալները<sup>226</sup>:

1944 թ. ապրիլին Բրեստի մարզում Կուտուզովի անվան ջոկատին միացան Վազգեն Մատղաշյանը, Կոստյա Մարգարյանը և Ջանիբեկ Մնացականյանը, որոնք մինչ այդ կռվել էին Լեհաստանի պարտիզանների շարքերում: Բելոռուսիայում միայն Վազգեն Մատղաշյանի անձնական հաշվում գրանցվեց թշնամու 2 խորտակված գնացք, սպանված 5 հիտլերական:

1943 թ. հուլիսի 3-ին՝ այն օրը, երբ Կարմիր բանակի զորքերն ազատագրեցին Բելոռուսիայի մայրքաղաք Մինսկը, Գրոդնոյի մարզում Սորոգովի պարտիզանական ջոկատի զբաղեցրած վայրում տեղի ունեցավ անսովոր իրադարձություն. վայրէջք կատարեցին գերմանական 3 ինքնաթիռներ՝ 3 խորհրդային օդաչուներով: Այդ տեղի ունեցավ այսպիսի հանգամանքներում: Գերմանական ֆաշիստները փորձում էին ռազմագերի օդաչուներին օգտագործել իրենց թռիչքների համար, իսկ խորհրդային օդաչուները ձախողում էին նրանց պլանները: Դվինսկում և Լիդայում գտնված ժամանակ ռազմագերի օդաչուներ Արամ Կարապետյանը, Պանտելեյմոն Ճկաուսելին, Վլադիմիր Մոսկալեցը և ուրիշներ, կազմակերպվելով ընդհատակյա խմբում, կապ հաստատեցին տեղական պարտիզանների հետ և նրանց պարբերաբար տեղեկացնում էին այն թռիչքների մասին, որ ֆաշիստները նախատեսում էին կատարել պարտիզանական բազաների վրա: Լիդայում այդպիսի կապ գոյություն ուներ Անատոլի Սորոգովի ղեկավարած «Նեոլովիմի» ջոկատի հետ: Այն իրականացնում էր Շուրա Վինոգրադովան: Իրենց անհաջողությունների համար ֆաշիստները սկսեցին կասկածել և դիմել համապատասխան միջոցների: Վտանգից խուսափելու համար ընդհատակայինները մշակեցին փախուստի ծրագիր՝ Կարապետյանը, Ճկաուսելին և Մոսկալեցը փախչելու էին ինքնաթիռներով, իսկ մյուսները (ավելի քան 20 մարդ)՝ ցամաքով: Պլանը իրականացվեց հաջողությամբ: «Երեք ռազմագերիներ, խորհրդային օդաչուներ, վերցնելով 4 ընկերների, թշնամու քթի տակից թռան Նալուբովսկի խիտ անտառում գտնվող պարտիզանների բազան: Դա հանդուգն, խիզախ արարք էր», — գրել է «Իզվեստիա» թերթը<sup>227</sup>: Նրանք մասնակցեցին պարտիզանների վերջին մարտերին՝ մինչև բելոռուսական հողի լրիվ ազատագրումը<sup>228</sup>:

Այսպիսով՝ 1944 թ., երբ խորհրդային զորքերը, զարգացնելով հարձակողական գործողությունները, թշնամուն վճռեցին զավթած տարածքներից, վերականգնեցին պետական սահմանը և ռազմական գործողությունները փոխադրեցին եվրոպական երկրներ, խորհրդային վրիժառուները մեծ դեր խաղացին Կարմիր բանակի առաջադրանքների իրականացման գործում: Պարտի-

զանները, սերտորեն համագործակցելով ռազմաճակատների զորքերի հետ, ակտիվ մասնակցություն ունեցան խորհրդային հողի լրիվ ազատագրման մարտերին: Խորհրդային պարտիզանների ինտերնացիոնալ ընտանիքի անդամներ էին նաև հայ ժողովրդի բազմաթիվ զավակներ:

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՐՈՊԱՅԻ  
ԴԻՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՇԱՐԺՄԱՆԸ

Իրադարձությունների բերումով զգալի թվով հայ կարմիրբանակայիններ ու հրամանատարներ հայտնվեցին նաև Եվրոպայի նվաճված երկրներում, որտեղ նրանք, ինչպես խորհրդային հողում, ընդգրկվեցին հակաֆաշիստական պայքարի մեջ: Նրանք հիմնականում ռազմագերիներ էին, որոնց, ինչպես նշվել է, գերմանական ֆաշիստները նետել էին տարբեր վայրեր, երբ ձախողվել էին խորհրդային հողում նրանց օգտագործելու փորձերը:

1943 թ. մայիսին և դրանից հետո հայկական լեգեոնի գումարտակների մնացորդները փոխադրվեցին Արևմտյան Եվրոպա և Յունաստան: Ֆրանսիայի հարավում տեղ գրավեցին 3, հյուսիսում՝ 2 և Յուլանդիայում ու Յունաստանում՝ մեկական գումարտակներ:

Ֆրանսիայի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեն իր հայկական լեգեոնային միջոցով ձեռնամուխ եղավ լեգեոնի քայքայման և նրան Դիմադրության շարժման կողմը գրավելու գործին: Մյուս կողմից՝ գործունեության նպաստավոր պայմաններ ստեղծվեցին լեգեոնի գումարտակների ընդհատակյա կազմակերպությունների աշխատանքի համար: Ծավալվեց Ստեփան Յաղջյանի, Ալեքսանդր Ղազարյանի, Բարթոլո Պետրոսյանի, Լևոն Տիտանյանի, Դավիթ Մինասյանի և մյուսների գաղտնի աշխատանքը, որը սկսվել էր Լեհաստանում:

Ֆրանսիայում, ինչպես նաև մյուս երկրներում հակաֆաշիստական պայքարի համար բեկումնային նշանակություն ուներ

Ստալինգրադի ճակատամարտը, որտեղ գերմանական զորքերը կրեցին ջախջախիչ պարտություն:

Ֆրանսիայում գոյություն ուներ հայկական բազմաճյուղյա գաղութ (շուրջ 100 հազար մարդ), որը գործուն մասնակցություն ունեցավ ֆրանսիական ժողովրդի Դիմադրական շարժմանը: Այն կազմակերպում էր Ֆրանսիայի կոմկուսի հայկական սեկցիան, իսկ պատերազմի ընթացքում ստեղծվեց նաև Հայկական ազգային ճակատ, որի կոմիտեները կազմակերպիչ դեր էին կատարում երկրի հայաշատ քաղաքներում (Փարիզ, Մարսել, Տուլոն, Լիոն, Գրենոբլ և այլն): Գործում էր երիտասարդական կազմակերպություն՝ Ֆրանսիայի երիտասարդ հայ հայրենասերների միությունը<sup>29</sup>:

Ֆրանսիայի այլազգիների և խորհրդային քաղաքացիների միջավայրում հակաֆաշիստական պայքարի կազմակերպումը ղեկավարում էր Ֆրանսիայի կոմկուսի (ՖԿԿ) Կենտկոմին կից ստեղծված հատուկ կոմիտեն՝ Գաստոն Լարոշի (Բորիս Մատլին) ղեկավարությամբ: Իսկ խորհրդային ռազմագերիների հետ աշխատելու համար կոմիտեին կից գործում էր 4 մարդուց բաղկացած հանձնաժողով, դարձյալ Գաստոն Լարոշի ղեկավարությամբ: Տիրան Ոսկերչյանին հանձնարարված էր հայկական լեզեզոնը: Հանձնաժողովի մյուս երկու անդամները զբաղված էին վլասովյան (ռուսական) բանակով և վրացական լեզեզոնով:

Գաստոն Լարոշի գրքում («Նրանք կոչվում էին օտարերկրացիներ. ներգաղթյալները Ֆրանսիայի Դիմադրության շարժման մեջ», Փարիզ, 1965 թ., ֆրանսերեն) լարծր է գնահատված հայ ժողովրդի զավակների մասնակցությունը հակաֆաշիստական պայքարին: «Երբ սկսվեց երկրորդ համաշխարհային պատերազմը,— գրել է նա,— հայ ներգաղթյալները Ֆրանսիայի պաշտպանության գործը համարեցին որպես խորհրդային Հայաստանի պաշտպանություն: Ձինվորական ծառայության անցած 10 հազար հայեր հազան ֆրանսիական համազգեստ և մտան ֆրանսիական բանակի ստորաբաժանումներ: Նրանցից շատերն իրենց փայլուն կերպով դրսևորեցին մարտերում, շատերն ընկան կռվի դաշտում կամ գերվեցին: Հայերն իրենց պարտքը կատարեցին նաև իրենց ապաստանած երկրի, ինչպես և հեռավոր հայրենիքի հանդեպ... Հայերը մարտնչեցին Դիմադրության շարժման շար-

քերում ֆրանսիացի եղբայրների հետ՝ նրանց հետ մրցելով խիզախության ու նվիրվածության մեջ»<sup>230</sup>։

Հակաֆաշիստական պայքարի կենտրոն էր մայրաքաղաք Փարիզը, որտեղ 1942 թ. գործում էր հակազերմանական պայքարի հայկական ընդհատակյա ղեկավարությունը, 4 մարդու կազմով, որը տարածում էր թռուցիկներ։ Փարիզի ապստամբության ժամանակ (1944 թ. օգոստոս) այստեղ էին Հայկական հայրենասեր միլիցիայի ջոկատները։ Փարիզի ընդհատակի գործիչներից էին Լուիզ և Արփիար Ասլանյանները։

Ֆրանսիայի դիմադրության շարժման և երկրի ազատագրական պայքարի պատմության մեջ փայլուն էջ է գրել հայ ժողովրդի արժանավոր զավակ Միսաք Մանուշյանը (պարտիզանական ծածկանունը «Ժորժ»)։ Նա զխավորել է «Ստալինգրադ» պարտիզանական ջոկատը, այնուհետև Փարիզի ու նրա արվարձանների բոլոր ինտերնացիոնալ պարտիզանական ջոկատները։ Մանուշյանի պարտիզանները հիմնականում զբաղված են եղել խափանարարությամբ, կազմակերպել են գնացքների ու երկաթուղիների պայթեցումներ, իրագործել ահաբեկչություն։ 1943 թ. նոյեմբերին մատնության օգնությամբ ֆաշիստներին հաջողվեց ձերբակալել Մանուշյանին ու նրա գործակից ընկերներին, որոնց մեջ էին հայեր, ֆրանսիացիներ, իտալացիներ, հրեաներ և ուրիշներ։ 1944 թ. փետրվարին տեղի ունեցավ «23–ի դատավարությունը»։ Ֆաշիստական ռազմական տրիբունալը բոլոր 23–ին դատապարտեց գնդակահարության։ Նրանց թվում էին հայերից Միսաք Մանուշյանը, Ալեքսանդր Կոստանդինյանը, Արսեն Չաքրյանը և Արթուր Կարայանը։ Մանուշյանի խմբի մեղադրանքում հիշվում է 56 խափանարարական գործողություն, որն ուղեկցվել է 150 մարդու սպանությամբ և 600–ի վիրավորվելով։

Մեծ արդյունավետությամբ են գործել Լիոնի, Վալանսի, Սենտ–Էտյենի, Բորդոյի, Վյենի և այլ ջոկատները։ Վյենի ինտերնացիոնալ ջոկատի հրամանատարն էր Կարապետ Մեցիկյանը, որի միայն մեկ տարվա (1943 թ. մայիս–1944 թ. մայիս) հաշվեհամարում գրանցված է 100 խափանարարություն։ Մեցիկյանը, սակայն, բռնվեց և գիլյոտինի ենթարկվեց։

1943 թ. հունիսին կայացավ Ֆրանսիայի Հարավային գոտու հայկական սեկցիայի ղեկավարների խորհրդակցություն, որը որոշեց աշխուժացնել պայքարը: Ֆրանսիայի հարավի ու կենտրոնի հայության պայքարի կազմակերպումը սկսեց ղեկավարվել Լիոն քաղաքից:

Հայկական լեգեոնի գումարտակների Ֆրանսիա ժամանելուց (1943 թ. երկրորդ կես) հետո նոր խնդիրներ ծառայան Դիմադրության շարժման ղեկավարության առաջ: ՖԿԿ ղեկավարող կենտրոնի առաջադրանքով Հայկական ազգային ճակատի Փարիզի, Մարսելի, Լիոնի, Տուլուզի կոմիտեները գործի անցան լեգեոնի գումարտակների կազմալուծման և հայ ռազմագերիներին գերմանացիների դեմ հանելու համար՝ հենվելով և օգտագործելով ռազմագերիների միջավայրում գոյություն ունեցող տրամադրությունները և գաղտնի կազմակերպությունները:

1944 թ. ամռանը Հարավային Ֆրանսիայի 5 ղեկարտամենտներում (Գար, Լոզեր, Բաշ-Դյու-Ռոն, Վար, Ծովափնյա Ալպեր) գործում էր 12 պարտիզանական ջոկատ: Նրանց անձնակազմում կար 3000 մարդ, այդ թվում 1200-ը խորհրդային մարդիկ էին, և որոնց ջոկատների հրամանատարներն էին Բարթոլո Պետրոսյանը, Միհրան Եղիազարյանը, Վահան Օհանյանը:

Երրորդ գումարտակի (Լոխվիցա) հետ աշխատանք տանելու համար Մարսելում կազմակերպվեց զինվորական կոմիտե, որի կազմում կար 12 մարդ, Վահե Ադամյանի (Ազադ) ղեկավարությամբ: Նույնպիսի աշխատանք կազմակերպվեց մյուս գումարտակների հետ:

Լեգեոնի 2-րդ գումարտակում (Տուլոնի մոտ՝ Միջերկրական ծովի ափին) ընդհատակյա աշխատանքը ղեկավարում էր Կարմիր բանակի նախկին քաղաշխատող Սուրեն Մարտիրոսյանը: Որոշվեց ապստամբության ժամկետը, սակայն տեղի ունեցավ դավաճանություն և մի խումբ ակտիվ ընդհատակայիներ ձերբակալվեցին, ապա գնդակահարվեցին: Դա, սակայն, չընկճեց հայրենասերներին: Գումարտակի վաշտերից մեկը, որն ուղարկվել էր պարտիզանների դեմ, չկատարեց ֆաշիստների առաջադրանքը, որի համար զինաթափվեց և մեկուսացվեց Լևանտ կղզում<sup>231</sup>:

Երրորդ գումարտակում ընդհատակը ղեկավարում էին Հաբեթ Սինոնյանը, Գառնիկ Սկրտչյանը, Սուրեն Տոնականյանը և ուրիշներ: Ֆրանսիական հայրենասերների հետ միասին գումարտակի ընդհատակայինները իրականացրին մի շարք խափանարարական և այլ գործողություններ<sup>232</sup>:

Լեգեոնի 2–րդ և 3–րդ գումարտակների հայրենասերները, կատարելով ֆրանսիական կոմունիստների և պարտիզանների առաջադրանքները, օգնություն ցույց տվեցին դաշնակիցների զորքերին՝ 1944 թ. նրանց դեսանտ իջնելու ժամանակ: Հայ ռազմագերիների մի մասը միացավ նրանց, իսկ մյուսները համախմբվեցին պարտիզանական ջոկատներում՝ միանալով Դիմադրության շարժման ուժերին: Այդ ջոկատները ակտիվ մասնակցեցին Ֆրանսիայի հարավային և կենտրոնական շրջաններից թշնամու զորքերին վճռելու և հետապնդելու գործողություններին: Բարժու քաղաքի ազատագրման ակտիվ մասնակիցներից էր կապիտան Հայկ Գասպարյանի ղեկավարած ջոկատը, որում կար շուրջ 50 պարտիզան: Նրանք օգնություն ցույց տվեցին նաև Լիոնն ազատագրող ուժերին<sup>233</sup>:

Մանդ քաղաքում գտնվող Լեգեոնի ստորաբաժանումը, չնայած դավաճանության պատճառով չկարողացավ իրականացնել ապստամբության պլանը, այնուամենայնիվ, կազմակերպեց մի շարք փախուստներ: Դա սկզբում հաջողվեց երկու խմբերի (52 մարդու)՝ Ալեքսանդր Ղազարյանի, Դավիթ Սինասյանի և Բարթուղ Պետրոսյանի ղեկավարությամբ: Վերջինիս հրամանատարությամբ նրանք ընդգրկվեցին առաջին հայկական պարտիզանական ջոկատում: Ջոկատի անձնակազմը աճեց՝ հասնելով 390 մարդու: Այն ֆրանսիական ռազմական ներքին ուժերի կողմից ճանաչվեց որպես N 103 պարտիզանական վաշտ: Նրա մարտական գործողություններից է Ֆլորակի ֆաշիստական կայազորի ջախջախումը<sup>234</sup>:

Մանդից ոչ հեռու գտնվող Լանգոն երկաթուղային հանգույցում տեղակայվել էր հայ ռազմագերիների մեկ աշխատանքային վաշտ (140 մարդ), որտեղ գաղտնի աշխատանք էին կատարում Էդուարդ Բաբայանը, Հմայակ Սուքիասյանը և ուրիշներ: Նրանց հաջողվեց իրագործել 1944 թ. հուլիսի 12–ի համար նախատես-

ված ապստամբության պլանը, ջախջախել հիտլերյան կայազորը, գրավել զենքի ու զինամթերքի պահեստը և տիրել քաղաքին: Ապստամբներին օգնության հասավ կապիտան ժանի գլխավորած ֆրանսիական պարտիզանական ջոկատը: Հայերի պարտիզանական ջոկատը կոչվեց «Լանգոն», և որը տեղական պարտիզանների համագործակցությամբ ազատագրեց մի շարք բնակավայրեր Լոզեր և Գար դեպարտամենտներում<sup>235</sup>:

Կապիտան Միհրան Եղիազարյանի («Միշել») հրամանատարությամբ ստեղծվել էր բազմազգ պարտիզանական ջոկատ, որի կազմում կային հայեր, լեհեր և իտալացիներ<sup>236</sup>:

1944 թ. օգոստոսին հայ պարտիզաններն ընդգրկվեցին Հայկական պարտիզանական գնդի մեջ (հրամանատար՝ մայոր Ա. Ղազարյան, գումարտակների հրամանատարներ՝ կապիտան Բ. Պետրոսյան և ավագ լեյտենանտ Վ. Օհանյան), որը շուտով վերակառուցվեց 1-ին խորհրդային պարտիզանական գնդի (հրամանատար՝ Ա. Ղազարյան, կոմիսար՝ Լ. Տիտանյան, գնդի հրամանատարի տեղակալներ՝ Բ. Պետրոսյան և Ս. Յաղջյան, շտաբի պետ՝ Դ. Մինասյան), որն ուներ 3 գումարտակ: 3-րդ գումարտակը բաղկացած էր ռուսներից և ԽՍՀՄ այլ ժողովուրդների զավակներից: Նրա հրամանատարն էր կապիտան Բարանովը: Գնդի անձնակազմում կար 2200 մարդ: Այն ջախջախիչ հարվածներ է հասցրել ֆաշիստական զորքերին Ալես, Լա-Կալմետ և Նիմ քաղաքների շրջանում: Ֆրանսիայի ազատագրումից հետո գունդը կատարել է տարբեր աշխատանքներ, մասնավորաբար զբաղվել խորհրդային քաղաքացիների հայրենադարձությամբ և արժանացել ֆրանսիական մի շարք պարգևների:

Փարիզի և այլ քաղաքների ու բազմաթիվ բնակավայրերի ազատագրման մարտերին մասնակցեց պարտիզանների «Ռուս-հայկական վաշտը», որը գործում էր Լուարա դեպարտամենտում:

Նորմանդիայում (Ֆրանսիայի հյուսիս) դաշնակիցների զորքերի ափ իջնելու ժամանակ (դա երկրորդ ճակատի բացումն էր 1944 թ. հունիսի սկզբին) նրանց կողմն անցան 300 հայ ռազմագերիներ, որոնք մինչ այդ շարքից հանել էին թշնամու կրակակետերը՝ ոչնչացնելով շատ ֆաշիստների: Հունիսի 6-ին, որպես

պարտիզանական ջոկատ (հրամանատար՝ Ռուբեն Մանուկյան, կոմիսար՝ Արամ Ավետիսյան), նրանք վերադարձան գերմանական գործերի թիկունքը՝ մասնակցելով Սոմայի դեպարտամենտից թշնամուն վճռելու գործողություններին: Դաշնակիցների գործերին օգնության հասավ Ֆրանսիայի հյուսիսում գտնվող հայկական լեգեոնի 2 գումարտակների ամբողջ անձնակազմը<sup>237</sup>:

Հայերի ուժեղ և բազմանդամ ընդհատակ է գործել հայկական լեգեոնի 4-րդ գումարտակում, որը 1943 թ. մայիսին փոխադրվել էր Հոլանդիա՝ պահակային ծառայության համար և տեղակայվել Օվերֆլակկե ու Սխաուվեն (նույնն է՝ Շոուվեն) ավամերձ կղզիներում: Հակաֆաշիստական պայքարը սկսվել էր մինչև տեղափոխությունը՝ Պուլավիում, որտեղ ծերբակալվել էին շարժման որոշ մասնակիցներ: Նոր վայրում պայքարի համար գոյություն ունեին նպաստավոր պայմաններ՝ ի դեմս Հոլանդիայի Դիմադրության շարժման:

Հոլանդիայում ծավալված հակաֆաշիստական պայքարի մասին արժեքավոր տեղեկություններ են պարունակում հոլանդական վավերագրերը, որոնք առաջինը ուսումնասիրել ու հրապարակել է լրագրող ու պատմագետ Միքայել Հակոբյանը տակավին 1965 թ.<sup>238</sup>: Նույն թվականին փաստաթղթերը տրամադրել էր երևան ժամանած հայ մարտական ընկերներին որոնող, Հոլանդիայի Լեյդենի համալսարանի պրոֆեսոր, Դիմադրության ղեկավար գործիչ Վ. Նագելը (ծածկանունը՝ Չարլզ): Հակաֆաշիստական պայքարին է նվիրված նրա «Գնացքները հետ չեն վերադառնում» բազմիցս վերահրատարակված գիրքը, որում տեղ է տրվել նաև հայ ընդհատակայիների գործունեությանը:

Տպագրված փաստաթղթերը պատերազմի վերջին կես տարում Ուտրեխտի շրջանում ներքին զինված ուժերի հրամանատար հիշյալ Նագելի զեկուցագրերն են 1944 թ. հունիսին Ֆրանսիայում ավի իջած դաշնակիցների (բրիտանական) գործերի փոխգնդապետ Դոբսոնին, որի հետ փորձել են կապ հաստատել և իրենց համագործակցության պլանները համաձայնեցնել հոլանդացի ու հայ ընդհատակայիները: Հայկական ընդհատակի ղեկավարներից են եղել Տելեմակ Ենոքի Մարտիրոսյանը, Նապոլեոն Դարբինյանը, Աբրահամ Աբրահամյանը, Գրիգոր Սիր-

գախանյանը, Յակոբ Ղազարյանը (վերջին երկուսը բժիշկներ) և ուրիշներ:

Հայ և հուլանդացի ընդհատակայինների միջև կապավորի դեր է կատարել տեղաբնակ Ալեքսանդր Յակոբյանը: Նա տեղի հայերի կողմից նաև նյութական օգնություն է կազմակերպել հայ ռազմագերիների, մասնավորապես հիվանդանոցում բուժվողների համար:

Վավերագրերը ներկայացնում են միայն գաղտնի պայքարի առանձին դրվագներ ու փաստեր: Այնուամենայնիվ, դրանք վկայում են գումարտակում ծավալված բառական ուժեղ ու ընդգրկուն գործունեության, Ղիմադրության շարժման հետ համագործակցություն հաստատելու և ռազմագերիների ապստամբությունը դաշնակիցների ռազմական գործողությունների հետ կապակցելու ձգտման ու պլանների մասին:

Նշված կղզիներում տեղաբաշխված գումարտակի անձնակազմի թիվը 800–900 է նշվում:

Փաստաթղթերի նյութի հիման վրա, այնուամենայնիվ, կարելի է գաղափար կազմել, թե ինչ է ներկայացնում հայերի ընդհատակյա պայքարի ընդհանուր պատկերը (առանց ժամանակագրական հաջորդականությունը հաշվի առնելու):

Օվերֆլակկե կղզու նավային հեթասպահ հսկիչի (վախմիստր՝ Պիտեր Գերարդուս Խոխենդոորն) զեկուցագրի համաձայն կղզու գերմանական կայազորը 1944 թ. օգոստոսի դրությամբ բաղկացած էր 500 հայերից և 300 գերմանացիներից: Հայերի մեջ իշխում էր հակաֆաշիստական տրամադրությունը: Նրանք լավ հարաբերությունների մեջ էին տեղական բնակչության և Ղիմադրության շարժման գործիչների հետ: Երկրորդ ճակատի բացումից հետո հայերի պլանը դարձավ ավելի հստակ: Բրաբանտի տարածքում գտնվող դաշնակից ուժերի հրամանատարությանը տեղյակ էր պահվում հայերի պլանների մասին: Հաղորդվող տեղեկությունները գլխավորապես վերաբերում էին կղզում առկա գերմանական մարդկային ուժերին ու տեխնիկային: Հայերը սպասում էին դաշնակիցների պատասխանին՝ վճռական գործողությունների դիմելու համար: Սակայն պատասխանն ուշանում էր: «Քանի որ հայերի գործողությունների պլանների վերաբերյալ դաշնակիցների կող-

մից որևէ հաղորդում չէր ստացվում,— կարդում ենք զեկուցագրում,— ուստի շրջանի ներքին զինված ուժերի հրամանատար Ֆոպմայի համաձայնությամբ, հայերին օգնություն ցույց չտրվեց՝ գերմանացիների դիրքերի վրա հարձակվելու նրանց պլանների իրագործման համար»: Ջեկուցագրում բացատրություն է տրվում, թե ստեղծված պահը կարող էր ճակատագրական հետևանքներ ունենալ կղզու քաղաքացիական բնակչության համար:

Իսկ Վ. Նազելի զեկուցագրի համաձայն հայ ռազմագերիները, սպասելով բրիտանական զորքերի մոտալուտ հարձակմանը, նրանց տեխնիկայի համար պատրաստել էին վառելանյութի պաշար: Սակայն մինչև տեղի կունենար այդ հարձակումը՝ գերմանական ֆաշիստները, զգալով ինչ—որ վատ բան, «խափանարարություն կազմակերպելու մեջ» կասկածվող հայերին գնդակահարեցին, շուրջ 250 մարդու նետեցին համակենտրոնացման ճամբար, իսկ գումարտակի մնացած անձնակազմին զինաթափելով փոխադրեցին Ամստերդամ:

Նույն վավերագրում հայտնվում է, որ հայերի շուրջ 800 մարդուց բաղկացած գումարտակը պատրաստ էր անցնելու դաշնակիցների կողմը՝ «հրամանատարությամբ Աբրահամյանի ու Յակոբյանի, ովքեր կապ ունեին մեզ (հոլանդացիների — Վ. Ղ.) հետ»: Հավանորեն, այստեղ խոսքը գնում է Աբրահամ Աբրահամյանի մասին, իսկ երկրորդի ով լինելը դժվար է որոշել: Այդ մտադրության իրականացման համար, ըստ Նազելի, իրենց հետ «գերազանց կերպով համագործակցում էին» այն երկու հայազգի շտաբային սպաները, ովքեր ժամանել էին Բեռլինից և պատասխանատու էին «գերմանական քարոզչության ու այդ զորամասերի տեսչական ստուգման ենթարկվելու համար»: Սպաների ազգանուններն են՝ Խաչատրյան և Սարգսյան: Այս փաստը ինքնըստինքյան հետաքրքիր է, մական սպաների մասին այլ տվյալներ փաստաթուղթը չի տալիս<sup>239</sup>:

Այնուհետև, ինչպես նշված է հիշյալ վավերագրում, հայերի «խռովության» վճռական պահին, երբ շրջանի ներքին զինված ուժերի ղեկավար Նազելը պետք է նրանց տար վերջին հրահանգները հետագա անելիքների վերաբերյալ, և երբ անգլիական զորամասերը գտնվում էին հայերից ընդամենը 100 յարդ (մեկ յար-

դը 0,9144 մ է) հեռավորության վրա, գերմանացիները զգուշանալով՝ գումարտակը հեռացրին ռազմաճակատի գծից, զնդակահարեցին նրա ղեկավարներին, մյուսներին զինաթափեցին և փոքր խմբերով ուղարկեցին հողային աշխատանքների: Ընդհատակայիններից հիշված Աբրահամյանին հաջողվել էր թաքնվել Ուտրեխտում, տեղի հայրենասերների մոտ:

Մի այլ զեկուցագրի համաձայն, որը լրացնում է վերը բերվածը, 1944 թ. նոյեմբերին Տելեմակ Մարտիրոսյանը Օդոբոպ քաղաքում հանդիպել է Դիմադրության ղեկավարների հետ և քննարկել դաշնակիցների կողմն անցնելու խնդիրները: Տ. Մարտիրոսյանը վստահեցրել է, թե չնայած կայազորում գերմանացիների մեծաթվությանը, այնուամենայնիվ Օվերֆլակկե կղզու 600 և Սխաուվենի 300 հայ ռազմագերիները կկարողանան նրանց հետ հաշիվ տեսնել: Գործողությունը սկսվելու էր գերմանական ռադիոհաղորդիչ կայանի ավերումով և հոլանդացիներին որոշ ռազմական տեխնիկա ու ռազմամթերք հանձնելով: Վերը հիշված ծախողունը վերաբերում է հենց այս պլանին: Տվյալ զեկուցագրում խոսք է գնում նաև ոմն Վաթյանի (Watsion) հետ հոլանդացիների ներկայացուցչի ունեցած տեսակցության մասին:

Հետագա իրադարձություններից հիշվում է Սխաուվենից դեպի Բրաբանտ նավակով կատարած այն անհաջող փախուստի մասին, որի մասնակիցներն են եղել 13 հայ ռազմագերիներ և 2 գյուղացի պատանիներ (այլ տվյալներով՝ 5 հայ և 10 հոլանդացի): Նրանք, սակայն, ճանապարհին բռնվել են թշնամու կողմից, հոլանդացիները կախաղան են հանվել Սխաուվենում, իսկ հայերը՝ գնդակահարվել Միդդելխարնիսում: Հեղինակ Միքայել Հակոբյանի կատարած հետազոտության համաձայն նավակում եղել են 7 հայեր, ովքեր 1944 թ. դեկտեմբերի 10-ին կախաղան են հանվել հոլանդացիների հետ միասին: Հակոբյանը պարզել է նաև նրանց ով լինելը. Ռուբեն Սելքոնյան, Վարդան Մոշյան (երկուսն էլ Մոսկվայից), Գորա (Ռուսաստան), Հակոբ Ղազանչյան (Ախալցխա), Վոլոդյա (Ելենովկա), Հայրապետ (Երևան), Գրիշա Բոգդանով (հայի անվան տակ թաքնված հրեա):

Մի այլ զեկուցագրով ևս Նագելը վերահաստատում է հայ ռազմագերիների ապստամբելու պատրաստակամությունը՝ հենց որ

դաշնակիցների ուժերը ոտք կոնեին կղզի: «Դաշնակիցների կղզի ժամանելուն պես հայերը պատրաստ էին զենքն ուղղել գերմանացիների դեմ, միաժամանակ գինելով Դիմադրության շարժման մասնակիցներին: Եվ այդ ամենը մեկշաբաթյա ժամկետում»: Հայերի պլանը հոլանդացիները քննարկելու էին դաշնակիցների մոտ: Նրանք բանակցություններ են վարել ֆեդֆերել Տելեմակ Սարտիրոսյանի հետ, որը վստահելի է համարել հայերի մեծ մասին (ըստ Նազելի՝ 70%-ը):

Պատերազմի ավարտից հետո փոխզնդապետ Դոբսոնին հասցեագրված զեկույցում Վ. Նազելը (Չարլզ) տալիս է հետևյալ լրացուցիչ տվյալները: Կապալոր Ալեքսանդր Հակոբյանը իր հայրենակիցներից զեկուցագրեր էր ստանում յուրաքանչյուր շաբաթ: Գումարտակի մեծամասնության ջախջախումից հետո հայերը «գերված են եղել տարբեր վայրերում կամ թաքնված՝ մինչև կազատագրվեին»: Նրանք նպատակահարմար էին համարել իրենց միավորումը հայրենակիցների հետ: Այնուհետև քաղում ենք հետևյալ կոնկրետ տեղեկությունները: Օվերֆլակկե կղզում հայերից մեկը սպանել էր 2 գերմանացու և ստիպված էր եղել թաքնվել: Մխուսվեն կղզում գտնվող հայերը անգլիական ավիացիայի հարձակումից հետո գերմանացիների կողմից արտաքսվել էին համակենտրոնացման ճամբար, որտեղից, սակայն, նրանց հաջողվել էր փախչել հոլանդացիների օգնությամբ և ապրել Մասստրիխտում: Թվով 27 հայեր 1945 թ. ապրիլի 17-ի դրությամբ գտնվելիս են եղել Ապպելֆորում՝ POW ճամբարում: Քանի որ Ինարավոր էին հայերի գտնված լինելու մասին այլ տեղեկություններ ևս, ուստի Նազելը խնդրում էր պատասխանել այն հարցին, թե արդյո՞ք Հակոբյանը (պարզ չէ, թե որ Հակոբյանի մասին է խոսքը) կարող է ներկայանալ որպես նրանց ներկայացուցիչ: Հայերին ներկայացնելու համար Նազելն առաջարկում էր նաև հոլանդացիների անուններ:

Այլ կարգի հետաքրքրություն է ներկայացնում վերջին փաստաթուղթը (23 հուլիսի 1945 թ.): Այն Վ. Նազելի նամակն է Նիդերլանդների Նորին Թագավորական Մեծություն արքայազն Բեռնարդին: Հայտնելով հայկական ընդհատակի և Դիմադրության շարժման համատեղ պայքարի ու համագործակցության վերա-

բերյալ անգլիական հրամանատարությանը ներկայացրած իր գեկուցագրերի մասին, այնուհետև ևազելը անհանգստություն էր արտահայտում հայերի հետագա ճակատագրի նկատմամբ և միաժամանակ մատնանշելով Ֆրանսիայում հայ հակաֆաշիստների գործունեության ու նրանց նկատմամբ գեներալ ղը Գոլլի դրական վերաբերմունքի փաստը, անհրաժեշտ էր համարում նույնպիսի գնահատության արժանացնել Յուլանդիայում պայքար մղած հայորդիներին: Սակայն գնահատականը չտրվեց:

Ժխտոմիրի մարզում կազմալուծված հայկական լեգեոնի գումարտակի մնացորդների քայքայումը շարունակվեց նաև Յունաստանում: Դրա արդյունքը եղավ «Ազատություն» հայկական պարտիզանական ջոկատի կազմավորումը, որը գործում էր Է-ԼԱՍ-ի (Յունական ազգային-ազատագրական բանակ) կազմում: Ջոկատի հրամանատարն էր Բաբկեն Ներսիսյանը, նրա տեղակալը՝ Եղիշե Պետրոսյանը: Այն թշնամու դեմ մարտեր է մղել Յունաստանում ու Ալբանիայում և ազատագրել բազմաթիվ բնակավայրեր: Յունաստանում միանգամից փախուստ էին կատարել 80 հայեր<sup>240</sup>: Հետագայում տեղի են ունեցել այլ փախուստներ ևս:

Ուժեղ և բազմանդամ ընդհատակ գոյություն ունեւր Լեհաստանում, որտեղ ֆաշիստները կենտրոնացրել էին հայ ռազմագերիների և հայկական ազգային լեգեոնի մեծ մասը<sup>241</sup>:

Այն կապեր էր ստեղծել տեղական ընդհատակյա կազմակերպությունների հետ և կարողացավ իրականացնել հայ ռազմագերիների խմբական փախուստներ: Լեհաստանի Լյուբլինի վոյեվոդությունում փոքրակազմ պարտիզանական ջոկատ է ղեկավարել Միշա Պետրոսյանը: Հայ պարտիզաններ կային Կելցեի, Կրակովի վոյեվոդություններում, խորհրդային սպա Վ. Յարոմովի 220 մարդուց բաղկացած բազմազգ և Բուխեսլավ Բակուլիի ջոկատներում (Վարշավայի վոյեվոդություն)<sup>242</sup>:

Արտաշես Մաթոսյանը (ծածկանունները՝ «Ժուկ-2» և Արկադիուշ Մատոսյակ Կրասնոդարից, այնուհետև բնակվել է Սոչիում, մինչև գերվելը Հարավարևմտյան ռազմաճակատում 468-րդ հրետանային գնդի հրամանատարի տեղակալ), Լեհաստանում ղեկավարել է բազմամարդ և բազմազգ պարտիզանական ջոկատ: Ջոկատը մարտական գործողություններ է կատարել Վարշավայի

և Լեհաստանի այլ շրջաններում: Ջոկատում խափանարար խմբի ղեկավար էր Արարատ Նավոյանը («Յրագրան» ծածկանունով, երևան քաղաքից), որը կամավոր ռազմաճակատ էր մեկնել, երբ հազիվ լրացել էր 16 տարին: Ուկրաինացի Վիկտորի («Դեմայր») հետ միասին պայթեցրել են թշնամու գնացքներ, գերել բարձրաստիճան մի քանի սպաների: Արարատը և Վիկտորը միասին զոհվեցին 1944 թ. փետրվարի 23–ին ֆաշիստների օդանավակայանը հրդեհելու առաջադրանքը կատարելու ժամանակ:

Հայ պարտիզաններ են կռվել Իտալիայում: Իտալացի հեղինակ Մաուրո Գալլենիի «Խորհրդային պարտիզանները Դիմադրության իտալական շարժման մեջ» գրքում<sup>243</sup> նոր և հետաքրքիր տվյալներ կան նաև հայ ժողովրդի զավակների մասին:

Իտալիայում պարտիզանական պայքարը հատկապես ծավալվեց Մուսոլինիի ֆաշիստական բռնակալությունը տապալելուց և Բոդոլիոյի կառավարության փախուստից հետո (8 սեպտեմբերի 1943 թ.), երբ ավելի խստացավ գերմանաֆաշիստական տիրապետությունը երկրի հյուսիսում (հարավը ազատագրվել էր դաշնակիցների զորքերի կողմից): Իտալիայի մարզերի 45 նահանգների համար կատարած հաշվարկներով՝ երկրի Դիմադրական շարժման մասնակիցների թիվը հասնում էր 5100–ի, այդ թվում 429–ը զոհվածներ են: Նրանք իտալական պարտիզանների հետ միասին կռվել են թշնամու դեմ 724 բրիգադներում: Իսկ Իտալիա բերված խորհրդային ռազմագերիների (լեգեոնականների) թիվը հասնում էր 80 հազարի:

Հիշյալ գրքից քաղել ենք հայերին վերաբերող հետևյալ տվյալները, որոնք, ինչպես և ամբողջ գիրքը, հենվում են սկզբնաղբյուրների ուսումնասիրության վրա:

Լոմբարդիայի մարզի Բրեշիայի շրջանում կռիվներից մեկի ժամանակ զոհվել է Միխայիլ Դաշտոյանը (պարտիզանական ծածկանունը «Միշա»): Նա Հայաստանում վաղուց հայտնի Սկրտիչ Դաշտոյանն է, Նոր Բայազետից (Գավառ): Գրքում նշվում է, որ նա ծնվել է Երևանում 1914 թ. (հեռավոր օտար միջավայրում գտնվողները կարող էին ներկայանալ իրենց հայրենիքի հայտնի կենտրոնի, ինչպես նաև դյուրին հնչող անունով): 1944 թ. հունիսի 10–ին Ս. Դաշտոյանը, իր հայրենակիցների հետ միասին,

ընդգրկվել է 54-րդ գարիբալդիական բրիգադի կազմում և դարձել «ԿՂԸ» զուսնարտակի կոմիսար, որի հրամանատարն էր Դոնատո Դելլա Պորտան: Դաշտոյանը մարտական գործողությունների մեջ գտնվել է մինչև 1944 թ. դեկտեմբերի 9-ը, երբ հիտլերականների կազմակերպած շուրջկալի ժամանակ ընկել էր շրջապատման մեջ: Դա Պոնտե դի Լենիոյի մոտ գտնվող պանրագործարանում էր: Նրա հետ էր նաև զուսնարտակի հրամանատար Մարտինելլին: Գրքի հեղինակ Մ. Գալլենին գրում է, որ իր տվյալները վերցրել է այն պարզաթերթիկից, որը ներկայացվել է Մ. Դաշտոյանին հետմահու «Մարտական խիզախության համար» բրոնզե մեդալով պարգևատրելու համար: Պարզաթերթիկը հրապարակել է Իտալիայի պաշտպանության մինիստրությունը 1964 թ. հունվարի 12-ին «Պաշտոնական բյուլետենում»:

Լիգուրիայի մարզի «Չիկերո» 3-րդ պարտիզանական բրիգադում 1944 թ. մայիսին կազմավորվել էր ակամանետային ջոկատ, գերազանցապես խորհրդային մարդկանցով, Գրիգոր Յակոբյանի («Իվան») հրամանատարությամբ: Նա եղել է 36 տարեկան, ծնված Երևանում, այստեղ աշխատել է կոոպերատիվի ղեկավար: Կարմիր բանակում ծառայել է 5 տարի, մասնակցել է կռիվներին, քաղղեկից հասել կապիտանի կոչման, գերվել է 1944 թ. ապրիլին Դնեպրի գետանցման ժամանակ: Ճենովայում փախել է ռազմագերիների ճամբարից և միացել Վալ Տրեբբիայի հովտում գործող պարտիզաններին: Ակամանետի պայթյունից Յակոբյանը ծանր վիրավորվել է և փոխադրվել Վալ Տրեբբիա՝ բուժվելու համար, սակայն նրա կյանքը փրկել չի հաջողվել: Գրիգոր Յակոբյանը մահացել է 1944 թ. օգոստոսի 13-ին:

Տոսկանայի մարզում, Ֆլորենցիայի շրջանում «Սինիգալյա» պարտիզանական բրիգադում խորհրդային մարդկանցից կազմված «Կարմիր աստղ» («Ստելլա Ռուսա») վաշտի անձնակազմում զոհվածների մեջ հիշվում է Սուրեն Կիրիկոզյանի (ազգանունը հավանորեն աղավաղված է) անունը: Մոնտեմաջոյի մոտ ուժեղ կռվում նա վիրավորվել էր երկու ոտքից և իտալացի վիրավոր «Նոլոյի» հետ պատսպարվել տներից մեկում, երբ հանկարծ նրանց վրա հարձակվեցին էսեսականները: Յայը և իտալացին դիմադրեցին մինչև վերջին փամփուշտը և զոհվեցին 1944 թ. հուլի-

սի 21–ին: Գերմանացիները խոշտանգեցին նրանց դիակները և տուճն այրեցին:

Գալլենին հիշատակում է ոճն Գևորգի՝ Թբիլիսիից, որը զոհվել է և թաղվել Պիզայի եղբայրական գերեզմանատանը (Գևորգը հավանաբար գտնվել է 23–րդ պարտիզանական բրիգադի անձնակազմում) և Ազո Օշիլինգարյանի (դարձյալ աղավաղում): Վերջինը էմիլիա–Ռոմանիայի մարզի Բոլոնիայի շրջանում զոհված պարտիզաններից է, մահացել է բրիտանական թիվ 59 հիվանդանոցում (Բոլոնիա), ուր նրան տեղափոխել էին ծանր վիրավորվելուց հետո: 1946 թ. օգոստոսին նրա մասունքները վերաթաղվել են Բոլոնիայի մենաստանի գերեզմանատանը:

Մաուրո Գալլենիի գրքում ներկայացված է նաև Գևորգ Կոլեայանը (Քոլոզյանը) այն նկարի մակագրությամբ, որն արձանագրում է Իտալական Յանրապետության դեսպանի կողմից 1944 թ. հունիսի 25–ին զոհված Գևորգ Քոլոզյանի «Ձինվորական խիզախության համար» մեդալը նրա եղբորը հանձնելու պահը:

Գրքի նկարների միջոցով տեղեկանում ենք նաև այլ հայ պարտիզանների մասին: Անդրոնիկ (Անդրանիկ) Նազարյան (4–րդ գարիբալդիական բրիգադի հրամանատարի հետ) և «Ֆերրարա» ջոկատի պարտիզան Անատոլի Գեորգիևիչ Ներսեսով (ծնված 1925 թ. մայիսի 30–ին, Նովոռոսիյսկ):

Ընդ որում, գրքից երևում է, որ Իտալիայում ծավալված պարտիզանական շարժման մեջ մեծ թիվ են կազմել վրացի ռազմագերիները:

Չեխոսլովակիայում մարտնչած հայորդիներից հայտնի են Արտեմ Պետրոսյանը<sup>244</sup>, Արտեմ Բաբայանը, Վահան Վարդանյանը, Յակոբ Իլիկչյանը, Վասիլ Յովսեփյանը, Աշոտ Յովհաննիսյանը և ուրիշներ: Արտեմ Պետրոսյանը, որը պարտիզանական պայքարի հարուստ փորձ էր անցել Ուկրաինայում, Գրաբչակի ղեկավարած միավորման կազմում, չեխ պարտիզանների հետ, հատուկ առաջադրանքով, որպես Յան Կոզինայի անվան ջոկատի հրամանատարի տեղակալ, դեսանտ էր իջեցվել Մորավիայի մարզում (Չեխիա): Արտեմ Բաբայանին (ծածկանունը՝ «Արթուր») չեխական հեղափոխական կոմիտեն վստահել էր լուրջ առաջադրանք՝ Իչին քաղաքի ու շրջանի ապստամբության նախապատրաստումը և ի-

րագործունը, որպիսին նա կատարեց ամենայն պատասխանատվությամբ ու հաջողությամբ: Չեխ ժողովուրդը պանծալի հայի անունը անմահացրել է երգով.

*Նրանք ոտք դրին հողը չեխական,  
երկու խիզախներ՝ Նիկոլայ, Արթուր,  
Նրանք գործերով այդ հերոսական  
Հիացան սրտանց մարդիկ ամենուր:*

Բուլղարիայում Դիմադրության շարժունը կազմակերպում և ղեկավարում էին Բուլղարիայի կոմունիստական և բանվորական կուսակցությունները: «Հայրենական ճակատը» հակաֆաշիստական պայքարի մեջ էր ընդգրկել երկրի Լճգային փոքրամասնություններին, այդ թվում՝ հայությանը<sup>245</sup>:

Ռազմակազմակերպական տեսակետից երկիրը բաժանված էր 12 գոտիների: Նրանցում համախմբված էին 65 պարտիզանական ջոկատներ ու միավորումներ, իրենց 200 հազար անդամներով:

Դիմադրական-պարտիզանական պայքարի խնդիրները հայ բնակչության շրջանում բացատրելու ուղղությամբ աշխատանք էին տանում հայ կոմունիստները, ղեկավար աշխատանք էր տանում Դավիթ Դավիթյանը՝ շրջելով հայաշատ քաղաքներում ու շրջաններում: Նա Պլովդիվում անցկացրեց հայ կոմունիստների ու ռեմսիստների (բանվորական երիտասարդական միության անդամներ) խորհրդակցություն, որը նպաստելու էր հայ հայրենասեր ու առաջադեմ ուժերի համախմբմանը ղեկավարության շուրջը:

Բուլղարահայ պարտիզաններից մեծ անուն հանեց Հերմինե Ռազգրաթյանը (ծածկանունը՝ Սաշկա), որը կռվում էր Սոֆիայի 3-րդ ժողովրդաազատագրական բրիգադի «Չավդար» անունը կրող ջոկատում, գնդացրային անձնակազմում: Ֆաշիստները մատնությամբ կարողացան բռնել նրան՝ ենթարկելով խոշտանգումների:

Տիրան Փափազյանը և Հակոբ Մարգարյանը համապատասխանաբար ղեկավարում էին «Չերվինսկա» և «Հողանսկա» պարտիզանական ջոկատները, որոնք գործում էին Ռուսե քաղաքի շրջանում: Բուլղարական ժանդարմերիային, սակայն, հաջողվեց ձերբակալել ջոկատների անձնակազմի մի մասին՝ նրանց հրա-

մանատարներով: Վերջիններս դատապարտվեցին ցմահ բանտարկության:

Համակենտրոնացման ճամբարներում էին հայտնվել նաև որոշ թվով հայեր, որոնք այստեղ ևս մասնակցում էին ընդհատակյա պայքարին: Նրանց թվում էին Ջոհրաբ Ղասաբյանը և Ստեփան Թանդրյանը, որոնք ունեցան հաջող փախուստ, ապա մտան «Վասիլ Կոլարով» պարտիզանական ջոկատ: Վերջինս պայքարը թշնամու դեմ շարունակեց Ուկրաինական 4-րդ ռազմաճակատի զորքերի կազմում:

Բուլղարահայերը ակտիվ մասնակցություն ունեցան նաև 1944 թ. սեպտեմբերի 9-ի ապստամբությանը:

Հարավսլավիայի հերոս պարտիզանների հետ թշնամու դեմ կռվել են Հարություն Հարությունյանը, Պարզև Սահակյանը, Իգնատ Գրիգորյանը, Տոլալ Աֆրիկյանը, Առաքել Սահակյանը:

Հայ ժողովրդի զավակները մասնակցել են նաև բուն Գերմանիայի տարածքում ծավալված ընդհատակյա հակաֆաշիստական պայքարին, ինչպես Գևորգ Սարգսյանը, Հայկազ Պողոսյանը, Արմո Մադաթյանը, Վարդան Ղալլաթյանը և ուրիշներ: Վաղարշակ Առաքելյանը հատուկ առաջադրանքով հետախուզական աշխատանք է կազմակերպել Նոյեուպին քաղաքի շրջանում: Նրան օժանդակել են Վահան Սարգսյանը, Գարեգին Համբարյանը, Շուշիկ Ստեփանյանը, Ջարվարդ Դոլուխանյանը<sup>246</sup>:

Այսպիսով՝ հայ ժողովրդի զավակները գերմանաֆաշիստական զորքերի թիկունքում, ինչպես ռազմաճակատում, մասնակցեցին Հայրենական մեծ պատերազմին, երկրորդ աշխարհամարտին, թշնամու ջախջախմանը: Նրանց ոգևորում և պայքարի էր մղում ջերմ հայրենասիրությունը: Ուր էլ որ լինեին՝ նրանք գիտակցում էին, որ կռվում են նաև Հայաստանը, հայ ժողովրդի շահերը պաշտպանելու համար:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### ԱՌԱՋԱԲԱՆ

- 1 Վ. Ն. Ղազախեսցյան, Սիկոյանի անվան պարտիզանական ջոկատը, Երևան, 1965: Նույնի Արխիվային նյութեր հայ պարտիզանների մասին. «Բանբեր Հայաստանի արխիվների», 1972 թ., N 2: Նույնի Հայ ժողովրդի մասնակցությունը սովետական վրիժառուների պայքարին Հայրենական մեծ պատերազմի տարիներին. «Լրաբեր», 1985 թ., N 2:

### ԳԼՈՒԽ 1

- 2 КПСС в резолюциях. Том 6, М., 1971, с. 19.
- 3 Նույն տեղում, էջ 23–24:
- 4 Նույն տեղում, էջ 23:
- 5 Великая Отечественная война Советского Союза. 1941–1945. Краткая история. Изд. 2–е, М., 1970, с. 111.
- 6 Նույն տեղում, էջ 110:
- 7 Մսըրլեան Զաւեն, Համաշխարհային Բ. պատերազմի հայկական լեզուներ. «Հայկազեան հայագիտական հանդես»: Հատոր Ժ., Պէյրուք, 1984, էջ 165:
- 8 Նույն տեղում, էջ 168, 170:
- 9 Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության Բունդեստագի որոշումով հատուցում է սահմանվել այն ռազմագերիների համար, ովքեր ծրի հարկադիր աշխատանք են կատարել Գերմանիայում պատերազմի տարիներին: Այդ կապակցությամբ 2001 թ. Գերմանիայից Երևան ժամանած իրավաբան Ստեփան Թաշճյանը նախկին գերիների ու նրանց իրավահաջորդների հավաքում հայտարարել է նաև այն մասին, որ պատերազմի ժամանակ Գերմանիայում եղել է 30 հազար հայ ռազմագերի: Այդ մասին 2001 թ. սեպտեմբերի 26–ին հաղորդում է տրվել նաև հեռուստատեսային Ա1+ ծրագրով:
- 10 Великая Отечественная война 1941–1945 гг.. Книга 4, Народ и война. М., 1999, с. 171.
- 11 Հայկազեան հայագիտական հանդես, հ. Ժ., էջ 166:
- 12 Нюрнбергский процесс. Сборник материалов. Том I, изд. 2, М., 1954, с. 438.
- 13 Հայկազեան հայագիտական հանդես, հ. Ժ., էջ 171,;
- 14 Նույն տեղում, էջ 163:
- 15 Սիմոնյան Հրաչիկ, Սփյուռաքահայությունը սոցիալ–քաղաքական պայքարի ուղիներում: Երևան, 1968, էջ 422–423:
- 16 Հարությունյան Կլիմենտ, Հայ ժողովրդի մասնակցությունը երկրորդ համաշխարհային պատերազմին (1939–1945 թթ.): Երևան, 2001, էջ 34: “Отечественная история”, 2001, N 6, с. 71.

- 17 Հայկազեան հայագիտական հանդես, հ. ժ., էջ 171: Թորլաքեան Միսաք, Օրերուս հետ: Բ հրատ., Պէրոս, 1963, էջ 570:
- 18 Թորլաքեան Միսաք, Օրերուս հետ, էջ 181:
- 19 Հարությունյան Կլիմենտ, Հայ ժողովրդի մասնակցությունը Երկրորդ համաշխարհային պատերազմին (1939–1945 թթ.): Երևան, 2001, էջ 32–33:
- 20 Հայկազեան հայագիտական հանդես, հ. ժ., էջ 173:
- 21 Նույն տեղում:
- 22 Սիմոնյան Հրաչիկ, Սփյուռքահայությունը սոցիալ-քաղաքական պայքարի ուղիներում: Երևան, 1968, էջ 430–433:
- 23 Հայկազեան հայագիտական հանդես, հ. ժ., էջ 181:
- 24 Նույն տեղում, էջ 169–170:
- 25 Նժդեհ, Բանտային գրառումներ: Երևան, 1993, էջ 20:
- 26 «Նախիջևան», 2001 թ., մայիս (թիվ 20):
- 27 Ղևորյան Համլետ, Դրո, Երևան 1999:
- 28 Մարտիրոսյան Ռ., Դաշնակցության հակաժողովրդական գործունեությունը երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին: Երկրորդ հրատ., Երևան, 1984:
- 29 Հ. Չոբանյան, Սեր բրիգադի պարտիզանները: Թբիլիսի, 1984: հՏԶպՑԻՍՈ՝ ԸՐՎպվո՝ в годы Великой Отечественной войны, с. 666.
- 30 Ռ. Մարտիրոսյան, Դաշնակցության հակաժողովրդական գործունեությունը երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, էջ 106:
- 31 Советская Армения в годы Великой Отечественной войны (1941–1945). Сборник документов и материалов. Ереван, 1975, с. 661.
- 32 Նույն տեղում: Մ. Հակոբյան, Սի անձանոթ էջ հայ ռազմագերիների ընդհատակյա պայքարից (Հայկական լեգեոնի: առաջին (808–րդ) գունարտակը). «Տեղեկագիր», 1964, N 4, էջ 46:
- 33 Советская Армения в годы Великой Отечественной войны, с. 662.
- 34 Նույն տեղում:

## ԳԼՈՒԽ 2

- 35 Ա. Վերտ, Ռուսաստանը 1941–1945 թվականների պատերազմում: Երևան, 1969, էջ 536:
- 36 Ե. Խալեյան, Դրիմի և Հյուսիսայրն Կովկասի պարտիզանական շարժման պատմությունից (1941–1944): Երևան, 1981, էջ 63–66:
- 37 Ստ. Կուրտիկյան, Պրոլոմյան հովտաշուշաններ: Երևան, 1969:
- 38 Մ. Սահակյան, Սովետական Սեռձբալթիկայի համար մղված մարտերում: Երևան, 1981, էջ 169–170: «Երեկոյան Երևան», 5 հուլիսի 1969 թ.:
- 39 Ս. Նուրիջանյան, Արյունով ներկված լուսաբաց (զինվորի հուշեր): Երևան, 1968: Ե. Խալեյան, Հայ ժողովրդի զավակների մասնակցությունը Բելոռուսիայի համար մղված մարտերին: Երևան, 1975, էջ 81-83:
- 40 Ե. Խալեյան, Հայ ժողովրդի զավակների մասնակցությունը Բելոռուսիայի համար մղված մարտերին, էջ 87–91:
- 41 Նույն տեղում, էջ 94–95:
- 42 «Սովետական Դարաբաղ», 1 յուլի մբերի 1964 թ.: Ե. Խալեյան, Հայ ժողովրդի զավակների մասնակցությունը Բելոռուսիայի համար մղված մարտերին, էջ 115–120:
- 43 “Коммунист”, 19 февраля 1967 г.
- 44 Непокоренная Белоруссия, с. 119–140.
- 45 А. Захарченко. Сказ о шестидесяти отважных. Минск, 1965, с. 131–133, 179–191.

- 46 ՀԱԱ պատմության ինստիտուտի Հայրենական մեծ պատերազմի պատմության կաբինետի արխիվ (ՀՄՊՊԿԱ), Վ. Մինասյանի հուշերը:
- 47 Վ. Լյաշենկո, Պատժող քաղաքը: Երևան, 1964:
- 48 Ե. Ս. Խալեյան, Թշնամու թիկունքում: Երևան, 1990, էջ 150-154:
- 49 Г. Езикаян. Участие сынов армянского народа в подпольной организации Киева “За Советскую Украину” в период его оккупации фашистскими захватчиками (сентябрь 1941 — ноябрь 1943 гг). «Բանբեր Հայաստանի արխիվների», 1981, N 2, էջ 3-11:
- 50 И. Слинко. Боевое содружество украинского и армянского народов в партизанской борьбе против фашистских оккупантов. В кн.: Исторические связи и дружба украинского и армянского народов. Сборник материалов научной сессии. Ереван, 1961, с. 176.
- 51 Նույն տեղում:
- 52 Ե. Ս. Խալեյան, Թշնամու թիկունքում, էջ 216-219:
- 53 Նույն տեղում, էջ 157-159:
- 54 “Пролетарий” (орган феодосийского горкома КПУ и горсовета), 1 мая 1944 г.
- 55 Ե. Խալեյան, Ղրիմի և Հյուսիսային Կովկասի պարտիզանական շարժման պատմությունից (1941-1944 թթ.), էջ 33-36:
- 56 Исторический очерк Краснодара. Краснодар, 1968, с. 188.
- 57 “Коммунист”, 4 июня 1961 г.
- 58 Документы отваги и героизма. Кубань в Великой Отечественной войне 1941-1945 гг.. Сборник документов и материалов. Краснодар, 1965, с. 181.
- 59 “Известия”, 14 февраля 1963 г..
- 60 Г. Перекальский. Бойцы подполья. Ростов-на-Дону, 1963, с. 25.
- 61 ՀՄՊՊԿԱ, ֆ. 304, գ. 1, ք. 3:
- 62 «Բանվոր», 12 օգոստոսի 1975 թ.:
- 63 Лесные богатыри. Тула, 1960, с. 14-15. Հ. Չոբանյան, Սեր բրիգադի պարտիզանները: Թբիլիսի, 1984, էջ 80:
- 64 ՀՄՊՊԿԱ, Վ. Հայրապետովի անձնական գործը:
- 65 ՀՄՊՊԿԱ, Չապակի անվան պարտիզանական բրիգադի գործը:
- 66 «Ավանգարդ», 6 մայիսի 1965 թ.:
- 67 ՀՄՊՊԿԱ, Ա. Գրիգորյանի անձնական գործը:
- 68 Из истории партизанского движения БССР (1941-1944 гг.) Минск, 1961, с. 96-97. «Ավանգարդ», 10 մայիսի 1960 թ.:
- 69 А. Кузнецов. Макей и его хлопцы. Изд. “Ульяновская правда”, 1955. ՀՄՊՊԿԱ, Չապակի անվան N 620 պարտիզանական ջոկատի գործը:
- 70 Վահան Աղաջանյան, ճամփաներ պարտիզանական: Երևան, 1983, էջ 106-107:
- 71 Նույն տեղում, էջ 101-197:
- 72 И. П. Кожер, Е. И. Баркиин. Незабываемые дни партизанской борьбы на Гомельщине. В кн.: Непокоренная Белоруссия, с. 119-140.
- 73 ՀՄՊՊԿԱ, Սմբատ Արզումանյանի անձնական գործը:
- 74 ՀՄՊՊԿԱ, Հարություն Ավետիսյանի անձնական գործը:
- 75 Լ. Արարբյան, Հետքերը կորչում են անտառում (հիշողություններ), Երևան, 1965, էջ 29-30:
- 76 Մ. Սահակյան, Սովետական Սերժալթիկայի համար մղված մարտերում, Երևան, 1981, էջ 172-173:
- 77 Նույն տեղում, էջ 175-176:
- 78 Ведомости Верховного Совета СССР, 1965, N 20, ст. 311 (стр. 474).
- 79 «Ավանգարդ», 14 ապրիլի 1962 թ.:

- 80 Կորոշիլովի անվան N 2 պարտիզանական ջոկատի հայերի մասին տե՛ս Ս. Հակոբյան, Որդու վերադարձը (վավերագրական վիպակ), Երևան, 1968:
- 81 Партизаны Брянщины. Сборник документов и материалов. Изд. 2—е. Тула, 1970, с. 148.
- 82 Партизаны Брянщины. Сборник документов и материалов. Изд. “Брянский рабочий”, 1962, с. 300.
- 83 Նույն տեղում:
- 84 Նույն տեղում, էջ 227–229, 262:
- 85 Նույն տեղում, էջ 303–304:
